

Հրանտ Ստեփանի Մարգարյան

**«Էլեկտրաէներգետիկական համակարգի
զարգացման կառավարչական
հիմնախնդիրները (ՀՀ նյութերով)»**

Արտնախոսություն

Ը.00.02 – «Տնտեսություն, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտություն թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝

Տ. գ. դ. պրոֆեսոր Մ. Ս. Մելքոնյան

ԵՐԵՎԱՆ-2018

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ.....

ԳԼՈՒԽ1. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ.....

1.1 Էլեկտրաէներգետիկական համակարգի բնութագիրը.....

1.2 Էլեկտրաէներգիայի սակագնի հաշվարկման մեթոդաբանական խնդիրները.....

ԳԼՈՒԽ2. ՀՀ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ Լ ԱՌԿԱ ԿԱՊԵՐԻ ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆԸ.....

2.1 ՀՀ Էլեկտրաէներգետիկական համակարգի հիմնախնդիրները և ներկավիճակի

վերլուծությունը.....

2.2 Էներգետիկայի և տնտեսության մյուս ոլորտների միջև փոխադարձ կախվածությունը ՀՀ-ում.....

2.3 Էլեկտրաէներգիայի արտադրության ֆունկցիոնալ կապը ՀՆԱ-ի աճից.....

ԳԼՈՒԽ3. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ.....

3.1 Էլեկտրաէներգետիկական համակարգի պետական կարգավորման կատարելագործման ուղիները.....

3.2 Մրցակցային հարաբերությունների բարելավման ուղիները ՀՀ Էներգետիկ ոլորտում.....

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....

ՀԱՎԵԼ ՎԱՃԵՐ.....

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը. Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակը բնակչության բարեկեցության բարձրացումն ու կենսամակարդակի շարունակական աճի համար բարենպաստ պայմանների ստեղծումն է: Դրված նպատակի իրագործման համար էական դեր ունի Էլեկտրաէներգետիկական համակարգը, որը կոչված է բավարարել ու բնակչության պահանջները առաջին հերթին Էլեկտրաէներգիայով և նպաստել ու արտադրության միջոցների արտադրության ընդլայնված վերարտադրությանը:

Շուկայական ժամանակակից տնտեսության պայմաններում, Էլեկտրաէներգետիկական համակարգի շրջանակներում են լուծվում երկրի ողջ արտադրական ներուժի նյութական բազայի կառուցվածքային բարեփոխման ու սոցիալական ոլորտի զարգացման հրատապ խնդիրները: Էներգետիկ ոլորտի արդյունավետ գործունեությունից է կախված հայրենական տնտեսության զարգացումն ու մրցունակությունը համաշխարհային տնտեսությունում: Այս տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում Էներգետիկ ոլորտի էական բարեփոխումների հետ միաժամանակ ձևավորել ու արդիականացնել Էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպությունների կառավարման համակարգը, բարձրացնել դրա գործելու արդյունավետությունը:

Խնդիրը հրատապ է հատկապես ՀՀ տնտեսության համար, քանի որ երկրում գործող ավելի քան 190 Էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպությունները դեռևս չեն հարմարվել շուկայի կողմից թելադրվող պահանջներին, գտնվում են \$ինանսատնտեսական ոչ բարվոք վիճակում և մրցունակ չեն արտասահմանյան Էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպությունների նկատմամբ: Դա բացատրվում է տնտեսական, սոցիալական հարաբերությունների շարունակական բարդացմամբ, արտաքին ու ներքին միջավայրի փոփոխականությունով, նյութական բազայի տեխնոլոգիական մակարդակի բարձրացման, Էլեկտրաէներգետիկական

համակարգի աշխատանքների ու ծառայությունների շուկայում մրցակցության ծավալմամբ: Որքան կոշտ են շուկայի պահանջները, ընդլայնված է սպառողների պահանջների շրջանակը, այնքան առավել սուր է կազմակերպության կառավարման համակարգի կատարելագործման՝ կառավարման առավել արդյունավետ համակարգի ընտրության անհրաժեշտությունը, որն ունակ լինի այնպիսի որոշումներ ընդունելու, որոնք կապահովեն էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպության գործունեության բարձր արդյունքներ:

ՀՀ տնտեսությունում էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպությունների կառավարման կազմակերպչական արդյունավետ կառուցվածքի ընտրության, ձևավորման և կատարելագործման խնդիրները կարևոր են և ձեռք են բերում նոր նշանակություն, քանի որ շուկայական տնտեսության պահանջները բավարարող և կազմակերպության արդյունավետ գործունեությունն ապահովող կառավարման իրատեսակական կառուցվածքի ձևավորումը էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպության առջև ծառայած բազմաթիվ խնդիրների լուծման ուղին է: Այդ խնդիրներից են միջազգային էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպությունների մրցակցությանը դիմակայելը, շուկայի կողմից ներկայացվող պահանջներին բավարարելը, բարձրակարգ մասնագետների ընդգրկումը և ընդհանրապես, աշխատակազմի արդյունավետ զբաղվածության ապահովումը: Սա ոչ միայն էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպության ներքին խնդիր է, այլ նաև ՀՀ տնտեսության սոցիալ - տնտեսական կայունության և աճի գրավական: Սրանով է պայմանավորված թեմայի արդիականությունը այժմեականությունը:

Ուսումնասիրվող թեմայի առանձին խնդիրներով զբաղվել են արտասահմանյան և հայրենական շատ գիտնականներ, սակայն նրանց աշխատանքներից շատերը հիմնականում վերաբերում են էներգետիկ ոլորտին, և քիչ տեղ է հատկացվել էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպությունների գործունեության ուսումնասիրությանը: Իսկ այն գիտնականները, ովքեր այս կամ այն չափով անդրադարձել են ուսումնասիրվող ոլորտին, կառավարման

համակարգի կառուցվածքի մշակման և կատարելագործման մեթոդները դիտարկում են մեկուսացված, հաշվի չառնելով ժամանակակից պայմաններում գերակա հանդիսացող մի շարք գործոններ, մասնավորապես, մարդկային կապիտալը և դրա բաղադրիչը հանդիսացող սոցիալական կապիտալը: Այսօր կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման համար առավել հրատապ են դառնում դրաստեղծման սկզբունքները և գիտականորեն հիմնավորված կառուցվածքի ընտրությունը:

ՀՀ-ում վերոնշյալ խնդիրների լուծմանն առնչվող հետազոտությունները չի կարելի համարել ամբողջական, բավարար ընդգրկունությունը ու խորությունը կատարված, հետևաբար էլ եկտրաէներգետիկական համակարգի կազմակերպությունների կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղվող հետազոտությունների անցկացման անհրաժեշտության հրատապությունը չի վերացել:

Հետազոտության նպատակն ու խնդիրները.

Ուսումնասիրության հիմնական նպատակը էլեկտրաէներգետիկական համակարգի տեսամեթոդական և գործնային վերլուծության հիման վրա ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի զարգացման արդի հիմնախնդիրների բացահայտումն ու առկա հիմնախնդիրների լուծմանն ուղիների առաջադրումն է:

Նպատակի իրագործման համար մեր առջև դրվել են հետևյալ խնդիրները.

- Բացահայտել էլեկտրաէներգետիկական համակարգի էությունը վեր հանելով համակարգի առանձնահատկությունները
- Բացահայտել էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպությունների կառավարման արդյունավետության վրա ազդող մակրոտնտեսական գործոնները,
- Վերլուծել ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի ներկավիճակը
- Վերլուծել էներգետիկայի և տնտեսության մյուս ոլորտների միջև կոռելացիոն կապերը ՀՀ-ում

- Բացահայտել համակարգում առկա հիմնախնդիրները վերլուծել Էներգետիկ բնագավառում առկա հիմնախնդիրների և ուժման միջազգային փորձը և բացահայտել ՀՀ-ում դրա կիրառման հնարավորությունները,
- Ուսումնասիրել և բացահայտել ՀՀ Էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման առանձնահատկությունները
- Ուսումնասիրել համակարգի պետական կարգավորման իրավասորեն սդրական համակարգը
- Ուսումնասիրել պետական կարգավորման գործընթացը
- Բացահայտել համակարգի տնտեսական արդյունավետության բարձրացման ուղիները
- Կանխատեսել Էլեկտրաէներգետիկական համակարգի զարգացման հեռանկարները:

Հետազոտության առարկան. Ուսումնասիրության առարկան էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպության ներքին կառավարման համակարգերի կառուցվածքները և դրանց ձևավորման տեսամեթոդական հիմքերն են:

Հետազոտության օբյեկտը. Ուսումնասիրության օբյեկտը էլեկտրաէներգետիկական համակարգում գործունեություն ձևավորող կազմակերպություններն են:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը. Ատենախոսության նպատակներին համապատասխան, մեր կողմից կիրառվել են գիտական ճանաչողության վերացարկման, համակարգային, դինամիկ վերլուծությունների, համեմատական, գործոնային վերլուծությունների, տնտեսամաթեմատիկական մեթոդները: Հետազոտության համար որպես տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել հայ և օտարազգի գիտնականների և մասնագետների աշխատությունները, ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը:

Ատենախոսության համար տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրատարակած տեղեկագրերը, ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, ՀՀ

Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության հրապարակումները, Էլեկտրաէներգիա արտադրող կազմակերպությունների պաշտոնական տվյալները, նյութերը, Էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրները:

Յետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորոլյթը. Ատենախոսության գիտական նորոլյթը պայմանավորված է հետազոտության ընթացքում ստացված մի շարք տեսական, մեթոդական և գործնական արդյունքներով, որոնք չեն կրկնում ոլորտի հետազոտողների կողմից առանձին հարցերի շուրջ կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Իրականացված վերլուծությունների և հետազոտությունների ընթացքում ստացված գիտական արդյունքներն են.

- Առաջարկվել են ՀՀ Էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման մեթոդաբանական նոր մոտեցումներ կապված սակագնի մարժայի հաշվարկման հետ:
- Գնահատվել են ՀՀ Էներգետիկայի և տնտեսության մյուս ճյուղերի փոխադարձ կապերի ամրության աստիճանը, որը հնարավորություն է ընձեռում կանխատեսել Էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկը՝ կախված տնտեսության առանձին ճյուղերի սցենարային զարգացումներից:
- Գնահատվել է Էլեկտրաէներգիայի արտադրության ֆունկցիոնալ կապը ՀՆԱ աճից, ՀՆԱ-ի ճեղքի և Էլեկտրաէներգիայի գերարտադրության կամ թերարտադրության (ճեղք) միջև կապը: Կանխատեսման՝ ապագային միտված և իներցիոն մոտեցումներով, ՀՆԱ աճի և Էլեկտրաէներգետիկայի ոլորտի միջև կապերի գնահատումը հնարավոր է դարձնում կանխատեսել անհրաժեշտ ժամանակաշրջանի Էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը.

Յետազոտության ընթացքում ստացված արդյունքներն ու եզրահանգումները կարող են կիրառվել Էներգետիկ ոլորտի

կառավարման և կարգավորման գործառույթներ իրականացնող պետական մարմինների, ՀՀ Էլեկտրաէներգետիկայի համակարգի կազմակերպչությունների կողմից: Հետազոտության հիմնական արդյունքները կարող են օգտակար լինել Էլեկտրաէներգետիկայի համակարգի ոլորտի և կառավարման հիմնահարցերով զբաղվող մասնագետների համար, իսկ աշխատանքում արծարծված հիմնական դրույթները կարող են կիրառվել նաև գտնել տնտեսագիտության տեսություն ուսումնական գործընթացում, ինչպես նաև հիմնախնդրին վերաբերող հատուկ դիսցիպլինաներում:

Արդյունքների փորձարկումը և հրապարակումները.

Աշխատանքում արծարծված հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ասպիրանտների գիտական նստաշրջաններում, «Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման» ամբիոնի կողմից կազմակերպված գիտական սեմինարներում: Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները հրապարակվել են գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը. Ատենախոսության ծավալը և կառուցվածքը պայմանավորված են առաջադրված նպատակով և խնդիրներով: Այն շարադրված է համակարգչային 133 էջի վրա, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

ԳԼՈՒԽ 1. ԷԼԵԿՏՐՈՒԼՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՍԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

1.1 ԷԼԵԿՏՐՈՒԼՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ԿԱՄԱԿԱՐԳԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխարհաբաղաբալական գործընթացների վերջին շրջանի կտրուկ զարգացումները, և ապագայում սպասվող անկանխատեսելի քաղաքական ու տնտեսական իրավիճակը ներկայումս թելադրում են մեկ անժխտելի հիմնահարցի լուծում՝ յուրաքանչյուր պետության տնտեսական անվտանգության հնարավորինս բարձր մակարդակի ապահովում: Տնտեսական կամակարգի ողնաշարը և դրա զարգացման հիմնասյուններից մեկը երկրի էներգետիկ բնագավառն է: ՀՀ էներգետիկ բնագավառի առանցքային հատվածներից է ԷԼԵԿՏՐՈՒԼՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ԿԱՄԱԿԱՐԳԸ:

Էներգետիկ բնագավառն ունի ռազմավարական նշանակություններ երկրի անկախության, անվտանգության և տնտեսության կայուն զարգացման համար: Էներգետիկ ոլորտը դիտարկվում է որպես տնտեսության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների կարևոր բաղկացուցիչ, դեռ ավելին՝ ԷԼԵԿՏՐՈՒԼՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ԿԱՄԱԿԱՐԳԸ արտադրական ենթակառուցվածքի կարևոր տարր է, որով ԷԼԵԿՏՐՈՒԼՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ԿԱՄԱԿԱՐԳԸ և մեկնաբանվում է էներգետիկ բնագավառի դերը տնտեսական զարգացման գործում:

Ենթակառուցվածքը ներառում է ճանապարհներ, ԷԼԵԿՏՐՈՒԼՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ և ջրամատակարարման կամակարգեր, հեռահաղորդակցային և հասարակական տրանսպորտ¹:

Ենթակառուցվածքը գործարար միջավայրի կարևորագույն բաղկացուցիչ է²: Ենթակառուցվածքների բացակայությունը կամ անհուսալիությունը բնորոշ են զարգացող երկրներին և էականորեն կաշկանդում են այդ երկրների տնտեսական զարգացումը: Ենթակառուցվածքների ծառայությունները տրամադրվելով, կամ կարգավորվելով պետության կողմից,

¹ <http://www.un.org/ru/youthink/infrastructure.shtml> ՄԱԿ պաշտոնական կայքի հրապարակում

² Supporting business environment reforms: Practical Guideline for Development Agencies, Donor Committee For Enterprise Development, 2008 Edition, p. 2, 36 pages

առանցքային դեր ունի աղքատության հաղթահարման գործընթացում: Հատկապես էլեկտրամատակարարման հուսալի համակարգը ձեռնարկություններին և սպառողներին թույլ է տալիս տնտեսել ներդրումները պաշարներում կամ թանկարժեք այլ ընտրանքային համակարգերում:

Ուստի էլեկտրաէներգետիկական համակարգի դերի ու նշանակությունը լիովին բացահայտման տեսանկյունից կարևորել ենք արտադրական ենթակառուցվածքների տնտեսագիտական բովանդակություն մեկնաբանումը: Մեկնաբանենք տնտեսագիտական գրականության մեջ առկա ենթակառուցվածքների սահմանումներից որոշները:

Տնտեսագիտական բացատրական բառարանում ենթակառուցվածքը սահմանվում է որպես տնտեսության ճյուղերի ամբողջություն, որն ապահովում է հիմնական արտադրական գործունեությունը և սպասարկում բնակչությանը³: Ենթակառուցվածքը հեղինակների կողմից, փաստորեն, ներկայացվում է արտադրական և ոչ արտադրական (սոցիալական) ենթակառուցվածքների ամբողջություն:

Ենթակառուցվածքը կապիտալ սարքավորում է, որն օգտագործվում է հասարակական հասանելի ծառայությունների տրամադրման համար և ներառում է տրանսպորտը, հեռահաղորդակցությունը, գազամատակարարումը, էլեկտրամատակարարումը, ջրամատակարարումը⁴: Դրանք անհրաժեշտ հիմքեր են ստեղծում ժամանակակից երկրներում տնտեսական գործունեության այլ տեսակների համար:

Մեկ այլ սահմանմամբ, ենթակառուցվածքը հասարակության տնտեսական ակտիվությանը և ամենօրյա կյանքին աջակցող հիմնական կառույցների համալիր է, և ներառում է ճանապարհները, էլեկտրամատակարարման և ջրամատակարարման համակարգերը, հեռահաղորդակցության համակարգերը, ինչպես նաև հասարակական տրանսպորտը⁵: Այլ մոտեցմամբ՝ ենթակառուցվածքները ներառում

³ Կիրակոսյան Գ. Ե., Ղուլչյան Հ. Բ., Տիգրանյան Ի. Տ., Տնտեսագիտական բացատրական բառարան, Եր., «Տնտեսագետ» 1999, էջ 142:

⁴ Экономика. Толковый словарь.

М.: "ИНФРАМ", Издательство "Весь Мир". Дж. Блэк. Общая редакция: д.э.н. Осадчая И.М.. 2000, 768 с.

⁵ <http://www.un.org/ru/youthink/infrastructure.shtml> ՄԱԿ պաշտոնական կայքի հրապարակում

են ճանապարհներ, հաղորդակցություն, տրանսպորտ, պահեստավորում, էլեկտրամատակարարում, ջրամատակարարում, սպորտային օբյեկտներ, կանաչ ապաստում, հանրային ծառայություններ: Երբեմն ենթակառուցվածքները ներառում են գիտություն, կրթություն, առողջություն⁶:

Ենթակառուցվածքը սահմանվում է նաև որպես ճյուղերի, այդ ճյուղերին պատկանող ձեռնարկությունների և կազմակերպությունների, դրանց գործունեության տեսակների ամբողջություն է, որը կոչված է ստեղծել և ապահովել ապրանքների արտադրության և շրջապտույտի նորմալ գործունակության, մարդկանց կենսագործունեության համար անհրաժեշտ պայմաններ: Ենթակառուցվածքում ներառվում են ճանապարհները, կապը, տրանսպորտը, պահեստային տնտեսությունը, արտաքին էներգամատակարարումը, ջրամատակարարումը, մարզական օբյեկտներ, կանաչ ապաստումը: Երբեմն ենթակառուցվածքին են վերաբերում գիտությունը, կրթությունը, առողջապահությունը⁷:

Չհերքելով գիտության և պրակտիկայի կողմից արտադրական ենթակառուցվածքներին տրվող կարևորությունը, դեռևս արտադրական ենթակառուցվածքի սահմանման, բովանդակության մեկնաբանման հարցում առկա է տարակարծություն:

Ենթակառուցվածքներ հասկացությունը զարգացել է տարբեր տեսությունների կողմից՝ մաքսիստական, նորքեյնսյան, նորինստիտուցիոնալ իզմի: Մաքսիստական քաղաքատնտեսությունում արտադրական ենթակառուցվածքը հանդես է գալիս որպես արտադրողական ուժերի, ավելի կոնկրետ, աշխատանքի միջոցների բաղկացուցիչ տարր, որն ապահովում է աշխատանքային գործընթացի իրագործման համար անհրաժեշտ ընդհանուր նյութական պայմաններ: Տնտեսական աճի նորքեյնսյան տեսության կողմնակիցների կարծիքով ենթակառուցվածքը ներառում է այնպիսի տնտեսություններ, որոնց զարգացումը հասարակության, մասնավորապես մասնավոր ձեռնարկատիրության նորմալ գործելու

⁶ http://dic.academic.ru/dic.nsf/econ_dict/6966 электронный словарь “Академик”

⁷ Райзберг Б.А., Лозовский Л.Ш., Стародубцева Е. Б. Современный экономический словарь. -2-е изд., испр. М.: ИНФРА-М. 1999. 479 с.

անհրաժեշտ պայման է: Նորինստիտուցիոնալ ուղղությունը ենթակառուցվածքը կապում է ինստիտուցիոնալ դաշտի ձևավորման հետ՝ սեփականութան իրավունքի, պայմանագրային հարաբերությունների ստեղծում և փոխազդեցության գործառնական ծախսերի կրճատում:

Արտադրական ենթակառուցվածքի ծագման օբյեկտիվ հիմքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ արտադրական ենթակառուցվածքը արտադրողական ուժերի երկարատև զարգացման արդյունք է և որոշվում է դրամեջ մտնող ճյուղերի վիճակով (փոխկապվածությունը ներկայացված է հավելված 1-ում):

Համակարգված մոտեցումը թույլ է տալիս արտադրական ենթակառուցվածքը դիտարկել որպես դրամեջ մտնող տարրերի բարդ ամբողջություն: Դրանց միջև առկա բազմաթիվ կապերը ենթակառուցվածքը վերածում են համակարգի և որոշում դրաներին դինամիկան:

Կարևորվում է տնտեսական աճի, մասնավորապես, արտադրության և ենթակառուցվածքների միջև առկա կապերի բնույթի բացահայտումը: Հավելվածներ 2, 3, 4-ում ներկայացված են արտադրական գործընթացների անընդհատությունն ապահովող ուղղահայաց, ըստ գործունեության ոլորտների ենթակառուցվածքի ֆունկցիոնալ նշանակությունը արտացոլող հորիզոնական, տնտեսության տարբեր ճյուղերի ձեռնարկությունները և ենթակառուցվածքային տարրերը փոխհամաձայնեցնող անկյունային կապերը:

Այժմ էլ տարածված է այն տեսակետը, որ արտադրական ենթակառուցվածքը որոշակի տարածքի արտադրական համալիրի նորմալ գործունակությունը ապահովող ինժեներական, ագրոմելորատիվ և այլ կառույցների ամբողջություն է, կամ էլ շենքերի, գործող կառույցների, ցանցերի և համակարգերի համակցություն:

Մեր կարծիքով, նման կերպ սահմանելով արտադրական ենթակառուցվածքը, հասկացությունը չհիմնավորված նեղացվում է՝ հանգեցնելով այդ խմբի ճյուղերի բազային, ֆունդային բաղադրիչին, որը շատ կարևոր է, բայց միակը չէ:

Ենթակառուցվածքային ծառայությունները առարկայական չեն, դրանց կուտակման, պահպանման, պահեստավորման անհնարինություն պայմաններում դրանց սպառումն անընդհատ է: Արտադրական ենթակառուցվածքի կազմի ամբողջական ներկայացումը պահանջում է ներառել նաև գործարար ծառայությունների ոլորտը՝ գովազդը, մարքեթինգային սպասարկումը, վարձակալությունը, լիզինգը, կազմակերպության կառավարման, ներդրումային քաղաքականության հարցերով խորհրդատվությունը, նախագծային և ինժեներախորհրդատվական ծառայությունները, աշխատուժի ժամանակավոր պահանջմունքների ապահովման ոլորտը:

Այսպիսով, արտադրական ենթակառուցվածքը վերարտադրության բոլոր փուլերում հասարակական արդյունքի անընդհատ շարժը ապահովող և ազգային տնտեսության արդյունավետության բարձրացման, նյութական արտադրության պահանջմունքների բավարարման, ռեսուրսների ռացիոնալ օգտագործման նպատակով յուրահատուկ ենթակառուցվածքային ծառայությունների ստեղծման և օգտագործման առիթով տնտեսավարող սուբյեկտների միջև ծագող տնտեսական հարաբերությունների ամբողջությունն է:

Էլեկտրաէներգետիկական համակարգը էներգետիկայի բնագավառի բաղկացուցիչ մասն է: Տնտեսագիտական գրականության մեջ էներգետիկայի բնագավառի մեկնաբանման հարցում առկա են որոշակի տարածայնություններ: Այսպես՝ ՌԴ-ի էներգետիկայի նախարարությունը այն սահմանում է որպես էներգոհամակարգ՝ տեխնիկական օբյեկտ, մի շարք էլեկտրակայանների, էլեկտրական էներգիայի ընդունիչների և էլեկտրական ցանցերի ամբողջություն՝ իրար մեջ և ռեժիմի ընդհանրության հետ փոխկապակցված⁸: ՀՀ էներգետիկայի օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառը հասարակական ծառայություններ մատուցելու համար էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ դրանց համակցված արտադրության), էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման) ու բաշխման, էլեկտրաէներգետիկական և

⁸ ՌԴ էներգետիկայի նախարարության 30.06.2003թ. -ի որոշում № 277, կետ 2.1 <http://so-ups.ru/fileadmin/files/laws/orders/pr277-300603me.pdf>

բնական գազի ու նոր տներին համակարգերի օպերատորի ծառայության իրականացման, էլեկտրաէներգետիկայի և ջերմաէներգետիկայի ու նոր տներում նորարարական հզորությունների կառուցման կամ վերականգնման, ինչպես նաև էլեկտրաէներգետիկայի, ջերմաէներգետիկայի և բնական գազի ու նոր տներում հաղորդման (փոխադրման) կամ բաշխման ցանցերի կառուցման, էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման գործունեության մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտների (անկախ դրանց սեփականության ձևից), այդ գործունեությունների իրականացման համար անհրաժեշտ գույքի և էներգետիկական շուկային ծառայություններ մատուցող կառույցների համախուլմբն է⁹:

Մեր կարծիքով ավելի բնորոշ իչ է «էներգետիկ բնագավառ» ձևակերպումը, քանի որ այն տնտեսական համակարգի բավականին խոշոր միավոր է և իր հերթին ընդգրկում է մի շարք ենթահամակարգեր և որոշ աղբյուրներում այն ներկայացվում է որպես բնագավառ: Մասնավորապես Մուլդավայի Հանրապետության էներգետիկայի մասին օրենքում նշվում է՝ էներգետիկա՝ ազգային տնտեսության բնագավառ, որը ներառում է էլեկտրական և ջերմային էներգետիկայի ձեռնարկությունների և օբյեկտների ցանց, գազային, պինդ և հեղուկ վառելիքային տնտեսություններ, ուսումնական կենտրոններ, նախագծային, հետազոտական և այլ կազմակերպություններ¹⁰:

Այսպիսով, ընդհանրացնելով նշված սահմանումները, կարելի է եզրակացնել, որ տնտեսագիտական գրականության մեջ կայունացել է այն ըմբռնումը, որ էներգետիկայի բնագավառը հասարակական ծառայություններ մատուցելու համար էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ դրանց համակցված արտադրության), էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման) ու բաշխման, էլեկտրաէներգետիկական և բնական գազի ու նոր տներին համակարգերի

⁹ Հայաստանի Հանրապետության օրենքը էներգետիկայի մասին, գլուխ 1, հոդված 3
Ընդունվել է 07.03.2001

¹⁰ Закон Республики Молдова об энергетике №1525 от 19.02.1998г.

օպերատորի ծառայություն իրականացման, Էլեկտրաէներգետիկայի և ջերմաէներգետիկայի ոլորտներում նոր արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման, ինչպես նաև Էլեկտրաէներգետիկայի, ջերմաէներգետիկայի և բնական գազի ոլորտներում հաղորդման (փոխադրման) կամ բաշխման ցանցերի կառուցման, Էլեկտրական Էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման գործունեության մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտների (անկախ դրանց սեփականության ձևից), այդ գործունեությունների իրականացման համար անհրաժեշտ գույքի և Էներգետիկական շուկային ծառայություններ մատուցող կառույցների համախուլմբն է¹¹:

Էներգետիկ բնագավառի ենթահամակարգ համարվող Էլեկտրաէներգետիկական համակարգի Էության բովանդակության ընդգրկուն մեկնաբանման առումով ներկայացնենք Էլեկտրաէներգետիկական համակարգի առավել տարածված մի քանի սահմանումներ:

ՌԴ Էլեկտրաէներգետիկայի մասին դաշնային օրենքում Էլեկտրաէներգետիկական համակարգը սահմանվում է որպես Էլեկտրաէներգետիկայի օբյեկտների և Էլեկտրաէներգիա սպառողների Էլեկտրական Էներգիա ընդունող սարքավորումների ամբողջականություն՝ Էլեկտրական Էներգիայի միասնական տեխնոլոգիական արտադրության, փոխանցման և սպառման գործընթացում միմյանց կապված աշխատանքի ընդհանուր ռեժիմով, կենտրոնացված գործառնական, գործակարգավորական կառավարման պայմաններում¹²: Էլեկտրաէներգետիկական համակարգի այլ ձևակերպում ունի Ղազախստանի Հանրապետության Էլեկտրաէներգետիկայի մասին օրենքը, որն այս համակարգը սահմանում է որպես ոլորտ: Օրենքի այդ մասը շարադրված է հետևյալ կերպ՝ Ղազախստանի Հանրապետության միացյալ Էլեկտրաէներգետիկական համակարգը Էլեկտրական կայանների, Էլեկտրահաղորդման գծերի և ենթակայանների համախուլմբ է, որն

¹¹ Հայաստանի Հանրապետության օրենքը Էներգետիկայի մասին, գլուխ 1, հոդված 3 Ընդունվել է 07.03.2001

¹² Ռ. Դ. Դաշնային օրենք N 35-Փ3 Էլեկտրաէներգետիկայի մասին գլուխ 1, հոդված 3, ընդունվել է 26.03.2003

ապահովում է հուսալի և որակյալ էներգամատակարարում
Ղազախստանի Հանրապետության սպառողներին:
Էլեկտրաէներգետիկան Էլեկտրական և ջերմային էներգիայի
արտադրության, փոխանցման և օգտագործման ոլորտ է¹³:

Ավելի ընդլայնված սահմանում է ներկայացվում ՀՀ
էներգետիկայի մասին օրենքում, համաձայն որի
Էլեկտրաէներգետիկական համակարգը սահմանվում է որպես
Էլեկտրական էներգիայի արտադրության, հաղորդման (փոխանցման)
ու բաշխման, Էլեկտրաէներգետիկական ոլորտի օպերատորի
ծառայության իրականացման, Էլեկտրական էներգիայի ներկրման և
արտահանման մեջ ներգրավված տնտեսվարող սուբյեկտների (անկախ
դրանց սեփականության ձևից), այդ գործունեությունների
իրականացման համար անհրաժեշտ գույքի և էներգետիկական
շուկային ծառայություններ մատուցող կառույցների
համախումբ¹⁴: Եթե ՌԴ օրենքում համակարգը սահմանվում է ավելի
նեղ համակարգի ներսում գործող կառույցների տեխնոլոգիական և
կառավարման գործառույթների ամբողջություն, ապա ՀՀ
էներգետիկայի մասին օրենքում ներկայացված սահմանման մեջ
ներառված է ոչ միայն այդ նեղ համակարգը, այլև արտահանման,
ներմուծման մեջ ներգրավված տնտեսվարող սուբյեկտները, և ՀՀ
վճարային հաշվեկշռի բարելավման տեսանկյունից էական
նշանակություն ունեցող կազմակերպություններին և շուկային
ծառայություններ մատուցող կառույցները: Սա հատկապես
կարևորվում է, քանի որ Էլեկտրաէներգիայի արտահանումը ՀՀ-ից և
տարածաշրջանային շուկայում հիմնական մասնակից լինելը կարող
է զգալիորեն բարելավել ՀՀ վճարային հաշվեկշռը և ավելացնել
պետական բյուջեի եկամուտները: Այս դիտարկման լույսով հիմք
ունենք եզրակացնելու, որ ժամանակակից տնտեսագիտական
գրականության մեջ և օրենսդրական ակտերում առանձին
տնտեսագետների կարծիքները էներգետիկ բնագավառի և
Էլեկտրաէներգետիկական համակարգի էության բացահայտման և


¹³ Закон Республики Казахстан от 9 июля 2004 года № 588-III Об электроэнергетике

¹⁴ Հայաստանի Հանրապետության օրենքը էներգետիկայի մասին, գլուխ 1, հոդված 3, ընդունվել է 07.03.2001թ.

բովանդակության մեկնաբանման հարցում էականորեն չեն տարբերվում, չեն հակասում միմյանց, լրացնում ու ավելի ամբողջական են դարձնում հիմնախնդրի դիտարկումը:

ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի նկարագրությունը և դրա բաղկացուցիչները մանրամասն արտացոլված են գծապատկեր 1.1-ում:

ՀՀ Կառավարություն
 Էներգետիկայի և բնական պաշարների
 նախարարություն



Գծապատկեր 1.1 ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի կառուցվածքը

Ակնհայտ է, որ Էլեկտրաէներգիայի շուկան մենաշնորհ մրցակցային է, իսկ փոխադրումը, բաշխումը և համակարգի ծառայությունները՝ մոնոպոլ շուկաներ: Ներկայացված են նաև պետական մարմինները, որոնք սահմանում են պետական քաղաքականության ուղղությունները և իրագործում է կառավարությունը կամ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը և ոլորտում կարգավորող գործունեություն և իրականացնող մարմինը: Վերջինս իրականացնում է ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը:

ՀՀ-ում Էլեկտրաէներգիայի արտադրությունը տեղի է ունենում հիմնական արտադրողներ՝ միակ Ատոմակայանի, ՋԷԿ-երի ու ՀԷԿ-երի կողմից: Այնուհետև արտադրված Էլեկտրաէներգիան հաղորդվում է «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ, որի մի մասը արտահանվում է և մյուսն մասն ուղղվում է «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, որտեղից էլ՝ Էլեկտրաէներգիայի սպառողներին: Փոխանցվող Էլեկտրաէներգիայի կարգավորումն ու հաշվառումը իրականացվում են համապատասխանաբար «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի և «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից: Իսկ համակարգն ամբողջությամբ գտնվում է ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի վերահսկողության և կարգավորման իրավասության ներքո: ՀՀ Էներգետիկայի բնագավառում կարգավորում իրականացնող Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ) կարգավորումն իրականացնում է օրենքով սահմանված կերպով և լիազորություններով: Այս բնագավառում կարգավորումը նպատակ ունի Էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի շուկաների գործունեության կանոնների, կարգավորող սակագների և լիցենզիայի պայմանների սահմանմամբ ու վերահսկմամբ հավասարակշռել սպառողների և գործունեության լիցենզիան ունեցող անձանց շահերը, սահմանել գործունեության միատեսակ

պայմաններ և նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը¹⁵:

Կարգավորման առաջնային սկզբունքներն են¹⁶՝

- Կարգավորման իրականացումն ինքնուրույն մարմնի կողմից,
- Սպառողների և էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռումը,
- Մրցակցային շուկայի զարգացմանը համընթաց՝ կարգավորման շրջանակների սահմանափակումը:

Էլեկտրաէներգիա արտադրող հիմնական կայաններից բացի, այս համակարգում նշանակալի դեր ունեն նաև երկու գործառնություն իրականացնող կազմակերպություններ՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Չաչվարկային կենտրոն» ՓԲԸ-ները: Առաջինն իրականացնում է համակարգի կարգաբերումը և տեխնիկական մասը, իսկ «Չաչվարկային կենտրոն» ՓԲԸ-ն իրականացնում է համակարգի կազմակերպությունների միջև առևտրային փոխադրությունների կարգավորումը:

ՀՀ Էլեկտրաէներգետիկական համակարգի հաջորդ կարևոր օղակը հոսանքի հզորության հաղորդումն է, որը կատարում է «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն:

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի հիմնական գործառնություններն են¹⁷՝

- 220-110կՎ Էլեկտրական ցանցեր սպասարկումը, շահագործումը, վերականգնումը տեխնիկական վերազինում և նախագծային աշխատանքների կատարումը,
- Էլեկտրական էներգիայի մեծածախ առքուվաճառքը բաշխողին կամ անմիջապես սպառողին կամ արտահանողին,
- Չաղորդման ցանցով իր և ներկրողի, և բաշխողի, և սպառողների, և արտահանողի սեփականությունը

¹⁵ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք, 8-րդ հոդված, ընդունվել է 07.03.2001թ.

¹⁶ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք, 9-րդ հոդված, ընդունվել է 07.03.2001թ.

¹⁷ «ԲԷՑ» կողմից Էլեկտրական էներգիայի հաղորդման և իջեցնված գործունեություն իրականացնելու պայմանները, Լիցենզիա N 0006, տրված ՀՀ Էներգետիկայի հանձնաժողովի 1999թ. հունիսի 18-ի N 9 որոշմամբ

հանդիսացող էլեկտրական էներգիայի հաղորդումը, էլեկտրական էներգիայի տարանցումը երրորդ երկերներ, հաղորդման ցանցերի ընդլայնումն ու զարգացումը:

2016թ-ին էլեկտրաէներգիայի մուտքը «ԲԷՑ» ՓԲԸ կազմել է 5151.8 մլն կՎտժ¹⁸:

Էլեկտրաէներգետիկական համակարգի հաջորդ նշանակալի բաղադրիչը էլեկտրաէներգիայի բաշխումն է՝ «Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի միջոցով: Այն իրականացնում է էլեկտրաէներգիայի բաշխումը և իրացումը: «ՀԷՑ» ՓԲԸ-ի ցանցերի ամբողջական երկարությունը 36000կմ է¹⁹:


Էլեկտրաէներգետիկական համակարգն ունի մի շարք առանձնահատկություններ: Առաջին ու ամենակարևորն այն է, որ համակարգում արտադրված էլեկտրաէներգիան հնարավոր չէ կուտակել, պահեստավորել հետագայում օգտագործելու նպատակով: Սա համակարգի կառավարումը դարձնում է առավել դժվար և պատասխանատու, քանի որ երկրին հոսանք մատակարարելու գործընթացի անընդհատությունն ապահովելը արդյունավետ կառավարման կարևորագույն մարտահրավերներից է: Հաջորդ առանձնահատկությունն այն է, որ ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգը ուղղակիորեն կապված լինելով հարևան երկրներից Իրանի, Վրաստանի և Արցախի համապատասխան համակարգերի հետ, պարտավոր է ապահովել այդ երկրների համակարգում գործող հաճախականության մակարդակի հետ համապատասխանությունը, այլապես վթարները անխուսափելի կլինեն: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշման համաձայն՝ համակարգում էլեկտրական հոսանքի հաճախությունը բնականոն ռեժիմում պետք է լինի անվանական 50 Հց՝ ± 0.2 Հց-ից ոչ ավելի շեղումով (բնականոն թույլատրելի) և կարճ ժամանակով ± 0.4 Հց-ից ոչ ավելի (առավելագույն թույլատրելի): Ընդ որում,

¹⁸ http://psrc.am/images/2017_finans/Energy/Araqum_2016-4.pdf ՀԾԿՀ պաշտոնական կայքի հրապարակում

¹⁹ <http://ena.am/AboutUs.aspx?hid=38&lang=1> «ՀԷՑ» ՓԲԸ-ի պաշտոնական կայք, ընդհանուր տեղեկությունների բաժին

հաճախությամբ շեղումների վերականգնումը մինչև բնական թույլատրելի մեծությունն պետք է իրականացվի 15 րոպեից ոչ ուշ²⁰:

Հետազոտության տեսական հիմքերի ամրապնդման և էներգետիկ բնագավառի էության բացահայտման, բովանդակության դերի հստակեցման տեսանկյունից կարևոր է մեկնաբանել էներգետիկ անվտանգության հիմնախնդիրը: Էներգետիկ բնագավառի ամենակարևոր բաղադրիչներից մեկը դրա անվտանգությունն է ինչը ուղիղ կապ ունի երկրի տնտեսական անվտանգության հետ: Ցանկացած երկրի տնտեսության և տնտեսական անվտանգության երաշխավորներից մեկը երկրի՝ էլեկտրաէներգետիկական համակարգը ներառող, էներգետիկ բնագավառն է: Տնտեսագիտական գրականության մեջ պետության տնտեսական անվտանգության համակարգը ներկայացվում է ներքին և արտաքին ենթահամակարգերով, որոնք ունեն իրենց բաղադրիչները: Թաթուլ Մկրտչյանն այս համակարգը ներկայացնում է հետևյալ գծապատկերի միջոցով²¹



Գծապատկեր 1.2 Պետություն տնտեսական անվտանգության համակարգ

Նա պետություն տնտեսական անվտանգության, մասնավորապես՝ ներքին անվտանգության ենթահամակարգում, էներգետիկ բաղադրիչն առանձնացնում է, որպես առանձնակի կարևորություն ունեցող և նշում, որ այն իրենից ենթադրում է ներքինս պաշտան համար անհրաժեշտ էներգակիրների բավարար քանակի կայուն մատակարարում: Այդ նպատակով բոլոր երկրներում մշտապես իրականացվում են վերլուծություններ՝ բացահայտելու այն հանգամանքները, որոնց ի հայտ գալը կարող է խաթարել երկրի վառելիք էներգետիկ համակարգի գործունեությունը: Մասնավորապես անհրաժեշտ պայման է էներգակիրների ներկրման համակարգի դիվեսիֆիկացումը:

Էներգետիկ անվտանգության վերաբերյալ ուսումնասիրությունների մեթոդաբանություն ունի մի շարք հաջորդական փուլեր՝ էներգետիկ համակարգի ընդհանուր վիճակի վերլուծություն, ցուցանիշների համակարգի ձևավորում, էներգետիկ անվտանգության ինտեգրալ ցուցանիշների արժեքների որոշում և այլն²²:

Տնտեսագիտական գրականությունում էներգետիկ անվտանգության սահմանման հարցում տարակարծությունն չկա և առկա սահմանումներն, ըստ էության, փոխընդհանուր են: Այսպես՝ էներգետիկ անվտանգությունը վստահությունն է, որ առկա կլինի տվյալ տնտեսական պայմաններում պահանջվող քանակությամբ և որակով էներգիա²³: Էներգետիկ անվտանգությունը անձի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր «էներգետիկ շահերի» պաշտպանվածության վիճակն է ներքին ու արտաքին

²² Կարապետյան Կ. Վ. Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության հեռանկարները -2008-380 էջ ,էջ 80:

²³ Бушуев В. В. [и др.] /Энергетическая безопасность России; РАН. Сиб. отд-ние. -М.: Наука, 1998. - 301 с: сю 32-34, ил. - Библиогр.:

սպառնալիքներից²⁴: Էներգետիկ անվտանգությանը երկրի, նրա քաղաքացիների, հասարակության, պետության և տնտեսության՝ նորմալ պայմաններում ու արտակարգ իրավիճակներում պաշտպանվածության վիճակն է ընդունելի որակի տնտեսապես հասանելի վառելիքաէներգետիկ ռեսուրսների պակասուրդի սպառնալիքից, ինչպես նաև վառելիքի և էներգիայի կայուն մատակարարման սպառնալիքից²⁵:

Մեր կողմից բերված սահմանումներում, ճիշտ է կարմիր թելով անցնում է էներգետիկ անկախության գաղափարը, սակայն էներգետիկ անվտանգությանը նույնացվում է էներգետիկ անկախության հետ: Նման մոտեցումը թյուրըմբռնման տեղիք է տալիս: Համակարծիք ենք Աշոտ Մարկոսյանի, Էլյանորա Մաթևոսյանի տեսակետին, ովքեր բերում են այս երկու հասկացությունների տարբերակիչ սահմանումները՝ էներգետիկ անվտանգությանը դիտարկվում է որպես երկրների ապահովվածությանը տեղական էներգառեսուրսներով, որը հաշվի է առնում շուկայի պահանջարկը, ինչպես նաև վառելիքի և էներգիայի ներմուծման այլ ընտրանքային աղբյուրներն օգտագործելու և պաշարելու հնարավորությունը:

Էներգետիկ անվտանգությանը՝ երկրի էներգետիկայի ոլորտի պաշտպանվածությանն է արտաքին և ներքին պայմաններից, գործոններից և գործընթացներից, որոնք վտանգ են ներկայացնում այդ ոլորտի կայուն զարգացման և երկրի էներգետիկ անկախության համար²⁶:

Գլոբալ ագման ներկա թափի պայմաններում ծառանում է համընդհանուր էներգետիկ անվտանգության ապահովումը և միջազգային էներգետիկ շուկայի ենթակառուցվածքը մղվում է

²⁴ Благодатских В.Г., Богатырев Л.Л., Бушуев В.В., Воропай Н.И. и др. Влияние энергетического фактора на экономическую безопасность регионов Российской Федерации. - Екатеринбург: Изд-во Уральского университета, 1998. - 288 с, с. 73-76

²⁵ Бушуев В. В. [и др.] /Энергетическая безопасность России; РАН. Сиб. отд-ние. -М.: Наука, 1998. - 301 с: с. 32-34, ил. - Библиогр.: և Благодатских В.Г., Богатырев Л.Л., Бушуев В.В., Воропай Н.И. и др. Влияние энергетического фактора на экономическую безопасность регионов Российской Федерации. - Екатеринбург: Изд-во Уральского университета, 1998. - 288 с, с. 73-76

²⁶ Մարկոսյան Ա., Մաթևոսյան Է., Սարգսյան Ս., Հայաստանի Հանրապետության էներգետիկայի զարգացման և Էլեկտրաէներգիայի արտահանման հիմնախնդիրները, Երևան 2017, 170 էջ, էջ 106

առաջին պլան²⁷: Փաստորեն, միասնական կանոններով գործող միասնական էներգետիկ տարածքի ձևավորումը էներգետիկ շուկաների զարգացման վերջնական նպատակն է:

Էներգետիկ անվտանգության հիմնական սկզբունքներից մեկը հնարավորին չափ քիչ էներգիա օգտագործելու անհրաժեշտությունն է՝ միաժամանակ բավարարելով պահանջարկը և նվազեցնելով էներգետիկ կորուստները: Գիտական հանրույթում²⁸ էներգետիկ անվտանգության հիմնախնդիրներից կարևորվում են՝ համընդհանուր էներգետիկ շուկաների թափանցիկության, կանխատեսելիության և կայունության բարձրացումը, էներգետիկայի ոլորտում ներդրումային միջավայրի բարելավումը, էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացումը, էներգիայի աղբյուրների բազմազանեցումը, նորարարական էներգետիկական տեխնոլոգիաների կիրառումը, էներգետիկ ենթակառուցվածքի ֆիզիկական անվտանգության ապահովումը, էներգետիկ աղբատության ծավալների կրճատումը:

Այսպիսով, արտադրական ենթակառուցվածքի կարևոր տարր հանդիսացող և ներքին տնտեսական անվտանգության կարևոր բաղկացուցիչ համարվող էներգետիկ անվտանգությունն ապահովող էլեկտրաէներգետիկական համակարգը էլեկտրական էներգիայի արտադրության փոխանցման ու բաշխման, էլեկտրաէներգետիկական ոլորտի օպերատորի ծառայության իրականացման, էլեկտրական էներգիայի ներկրման և արտահանման մեջ ներգրավված տնտեսվարող սուբյեկտների, այդ գործունեությունների իրականացման համար անհրաժեշտ գույքի և էներգետիկական շուկային ծառայություններ մատուցող կառույցների համախուլմբ է:

²⁷ Մարկոսյան Ա., Մաթևոսյան Է., Սարգսյան Ս., Հայաստանի Հանրապետության և էներգետիկայի զարգացման և էլեկտրաէներգիայի արտահանման հիմնախնդիրները, Երևան 2017, 170 էջ, էջ 105

²⁸ Կարապետյան Կ.Վ. Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության հեռանկարները -2008-380 էջ ,էջ 59

1.2 Էլ եկտրաէներգիայի սակագնի հաշվարկման մեթոդաբանական խնդիրները

Յուրաքանչյուր բնույթի գործունեության ուղղության կամ ռազմավարության տարբերակներից ընտրության կատարելու հիմքը ռեսուրսների՝ համեմատության մեջ ավելի արդյունավետ օգտագործման եղանակն է, այսինքն՝ ռեսուրսների օգտագործման բարձր արդյունավետությունը: Արդյունավետությունն ընդհանրապես կարելի է համարել ցանկացած տիպի և բնույթի գործունեության կարևորագույն բնութագիր: Տ.գ.դ. պրոֆեսոր Միքայել Մելքումյանն իր աշխատության մեջ առաջարկում է տարանջատել տարբեր տեսակի արդյունավետություններ, օրինակ՝ միանվագ և բազմակի – հապատասխանաբար ըստ արդյունքի և ծախսերի տարբերության և հարաբերության²⁹:

$$U_{ii}^1 = U_p - \sigma_p$$

$$U_{ii}^2 = \frac{U_p}{\sigma_p}$$

Որտեղ՝

U_{ii}^1 -ը և U_{ii}^2 -ը արդյունավետության ցուցանիշներն են ընդհանուր տեսքով համապատասխանաբար որպես արդյունքի (U_p) և ծախսերի (σ_p) տարբերություն կամ հարաբերություն:

Էլեկտրական էներգիա արտադրող ձեռնարկություններում, ինչպես մյուս բոլոր շահույթ հետապնդող ձեռնարկություններում՝ ձեռնարկատիրական գործունեությունն ուղղված է շահույթի ստացմանը: Եթե ստացվող արդյունքը համընկնում է սպասվելիք նպատակի հետ, ապա այդպիսի ձեռնարկատիրական գործունեությունն անվանում են արդյունավետ: Արդյունավետությունը որակական ցուցանիշ է, որը բնութագրում է ձեռնարկատիրական գործունեության կատարելագործման խորքային գործընթացները, որոնք տեղի են

²⁹ Մելքումյան Մ. Ս., Միկրոէկոնոմիկա: Ուսումնական ձեռնարկ/ՀԳՏՀ Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոն, Ե., Տնտեսագետ, 2011, 440 էջ, էջ 234-238

ունենում նրա բոլոր բնագավառներում և օղակներում³⁰: Որոշ տարբերություներ կան արդյունքի և արդյունավետության միջև: Արդյունքը գնահատում է միայն ստացված արժեքը, նորը, մինչդեռ արդյունավետությունը հաշվի է առնում նաև այն պայմանները, որոնց շնորհիվ իրականացվել են այդ նպատակները, ստեղծվել՝ արդյունքը: Արդյունավետությունը համեմատական ցուցանիշ է, որը գնահատում է գործունեության հիմքում ընկած որակական փոփոխությունները, որոնց շնորհիվ առաջանում են քանակական փոփոխություններ: Գործունեության ցանկացած տեսակի արդյունավետությունը ընդունված է որոշել ստացված արդյունքի և ծախսերի հարաբերությամբ:

Տեստեսական գործունեության արդյունավետությունը՝ կատարված ծախսերի համեմատությամբ ստացված արդյունքի (շահույթի, վաճառքի ծավալի, շահութաբերության մակարդակի և այլն) մեծությունը, զգալի չափով պայմանավորված է կառավարման որակով ու նպատակասլությունով: Յուրաքանչյուր կազմակերպություն, մասնավորապես՝ ձեռնարկություն, ստեղծվում է որոշակի առաքելության և նպատակների իրագործման համար: Ըստ այդմ՝ ձեռք են բերվում նյութական ռեսուրսներ, աշխատույժ, թողարկվում նախանշված տեսականու և ծավալի արտադրանք և ծառայություններ, այնուհետև կազմակերպում են դրանց իրացումը: Ռեսուրսների ձեռքբերում, արտադրություն, իրացում, եռօղակ պարբերաշրջանը կրկնվում է անընդհատ և այդ պարբերաշրջանի ճիշտ կառավարումից մեծապես կախված է արդյունավետությունը³¹:

Տեստեսական արդյունավետությունը բնութագրվում է այնպիսի արժեքային ցուցանիշներով, ինչպիսիք են թողարկված կամ իրացված արտադրանքի քանակը, ստացված շահույթն ու շահութաբերությունը, այս կամ այն ռեսուրսի խնայողության մակարդակը, ինքնարժեքի իջեցումից ընդհանուր տնտեսումը և այլն:

³⁰ Մելքումյան Մ. Ս., Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում: Ուսումնական ձեռնարկ/ՅՊՏՅ Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոն, 2014, 512 էջ, էջ 111:

³¹ Ղուչչյան Յ. Բ., Ձեռներեցի սեղանի գիրք, Երևան, 1997, էջ 416:

Տնտեսական արդյունավետության գույքահեռ առկա է նաև կառավարման համակարգի արդյունավետության հասկացությունը, որը էապես մեծ տարբերություններ չունի տնտեսական արդյունավետությունից: Դա առավել ակնհայտ է դառնում կառավարման համակարգի տնտեսական արդյունավետության հաշվման բանաձևից: Կառավարման համակարգի գործունեության տնտեսական արդյունավետությունը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևով.

$$Արդ_{ԿՀ} = \frac{\Delta Արդյունք_{արմ}}{\text{Ծախս}_{ԿՀ}}$$

որտեղ՝

$Արդ_{ԿՀ}$ - որոնելի հաշվարկվող ցուցանիշն է,

$\Delta Արդյունք_{արմ}$ - կառավարման համակարգի կատարելագործմամբ պայմանավորված արտադրության արդյունքի հավելածն է,

$\text{Ծախս}_{ԿՀ}$ - կառավարման համակարգին ուղղված ծախսերն են:

Ըստ Տ.գ.դ. Կ. Կարապետյանի «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության հեռանկարները» վերնագրով աշխատության³² էլեկտրաէմեգետիկական համակարգի գործունեության արդյունավետությունը բնութագրող ցուցանիշներ կարելի է համարել՝

- Օգտագործված միավոր էներգիայի նյութի ճնշումը ՀՆԱ-ն,
- Էլեկտրաէներգիայի սպառումը մեկ շնչի հաշվով (կՎտժ)
- Տեղափոխման և բաշխման կորուստները, %-ով արտադրանքի նկատմամբ

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից կատարված վերլուծության³³ էներգետիկ համակարգի արդյունավետությունը սահմանվում է հետևյալ երկու գործոններով՝

1) էներգետիկ համակարգի շահագործում՝ էլեկտրաէներգիայի հոսքի մատակարարում ապահովելու համար,

³² Կարապետյան Կ. Վ. Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության հեռանկարները -2008-380 էջ ,էջ 366:

³³ http://www.minenergy.am/storage/files/pages/pg_7791595395721_3.1_GAP_Analysis_Armenia_Final_Arm.pdf Տարբերությունների վերլուծության (GAP) Հայաստանի էլեկտրաէներգետիկ շուկայի մարտահրավերները և օրենսդրական խոչընդոտները, Հունիս 2016, էջ 58

2) վերջնական սպառողի սակագնի նվազում կամ, առնվազն՝ սակագնի աճի նվազում:

Կառավարման համակարգի գործունեության արդյունքները գնահատող արդյունավետության ցուցանիշը կարելի է կիրառել էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման արդյունավետությունը նկարագրելու նպատակով, սակայն պետք է հաշվի առնել ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման որոշակի առանձնահատկություններ:

Սակագների ձևավորման փաստացի գործընթացը տեղի է ունենում յուրաքանչյուր տարի և բաղկացած է մի քանի փուլերից: Առաջին փուլում ՀԾԿՀ-ն շուկայի մասնակիցներից ստացված տեղեկատվության հիման վրա տարվա կտրվածքով կազմում է Հայաստանում էլեկտրաէներգիայի սպառման կանխատեսում (կիլովատ-ժամ), այդ թվում ըստ առանձին և արումների (220 և 380 Վ, 6(10), 35 և 110 կՎ) և սպառման ժամանակի (գիշերային և ցերեկային): Արդյունքում, ՀԾԿՀ-ում ձևավորվում է էլեկտրաէներգիայի սպառման կանխատեսում յուրաքանչյուր հաստատված սակագնով, էլեկտրաէներգիայի սպառման միջին կշռությամբ սակագնով և Հայաստանի ներքին շուկայում էլեկտրաէներգիայի սպառումից «ՀԷՑ» ՓԲԸ-ի ընդհանուր հասույթի մասով՝ դրամական չափման միավորով:

Սակագնագոյացման գործող մեթոդաբանության³⁴ համաձայն, Ընկերության հասույթը էլեկտրաէներգիայի սպառումից պետք է հավասար լինի սպառված էլեկտրաէներգիայի գնման համար ծախսերի գումարին և սակագնային մարժային, որի մեջ ներառված են.

1. գնված էլեկտրաէներգիայի արժեքը,
2. շահագործման ծախսերը,
3. դեբիտորական պարտքերի ռեզերվը,
4. թույլատրված մինչհարկային շահույթը,
5. հիմնական միջոցների ամորտիզացիան

³⁴ <http://psrc.am/images/News/haytararutyun/2017/13.12.17n/2.pdf> ՀԾԿՀ որոշումը ՀՀ Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի նոյեմբերի 1-ի №79ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

6. թերստացված մարժայի փոխհատուցումը:

Սակագնային մարժայի բոլոր բաղադրիչները նորմավորվում են լիցենզիային կից հավելված հանդիսացող սակագնային մարժայի հաշվարկի մեթոդիկայի համաձայն: Ընդ որում, «ՅԵՑ» ՓԲԸ-ն փաստացի որոշում է սկզբից սակագնային մարժայի չափը, այնուհետև նվազեցնելով ստացված սակագնային մարժան պլանավորված հասույթից՝ ստանում է ընկերության կողմից գնվող էլեկտրաէներգիայի ամբողջական ինքարժեքը:

ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի բաղկացուցիչ օբեյկտների գործունեությանը կարգավորվում և կառավարվում է համապատասխան օրենքների և որոշումների միջոցով: Կարգավորման ենթակա էլեկտրաէներգիայի սակագների հաշվարկման մեթոդաբանությանը իրականացվում է ՀՀ հանրային ծառայությանները կարգավորող հանձնաժողովի կողմից ընդունված 2005 թվականի նոյեմբերի 4-ի 158 Ա որոշմամբ: Այդ մեթոդաբանությանը սահմանում է էլեկտրական էներգիայի հաղորդման գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման և արտադրողի սակագների հաշվարկման սկզբունքները: Սկզբունքների մեջ մտնում են անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքը, ծախսերի վերլուծությանը և սակագնի որոշումը: Սակագնի հաշվարկման առանցք է անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքը: Դա ենթադրում է հասույթի մի այնպիսի մեծության ապահովում, որի դեպքում հասույթը ապահովում է լիցենզավորված անձի հուսալի, անվտանգ և անընդհատ գործունեության համար պահանջվող ամբողջ գործառնական ծախսերը և ներգրավված կապիտալի դիմաց թույլատրելի (ողջամիտ) շահույթը: Անհրաժեշտ հասույթը հաշվարկվում է որպես թույլատրելի տարեկան ծախսերի հիմնական միջոցների մաշվածության և թույլատրելի շահույթի հանրագումար: Այստեղ՝ թույլատրելի ծախսերի հատվածում, ընդգրկվում են սակագների հաշվարկման մեկ տարվա ընթացքում կատարվող ընթացիկ ծախսերը, որոնց միջոցով կապահովվի կազմակերպության անխափան աշխատանքը: Այստեղ ներառվում են շահագործման և պահպանման ծախսերը ինչպես նաև վառելիքային

ծախսերը: Մաշված ության առանձնահատկություններն այս դեպքում այն է, որ դահաշվարկվում է գծային մեթոդով:

Իսկ թույլատրելի շահույթի համար սահմանվում է այն քանակը, որը էլեկտրաէներգիա արտադրող կազմակերպությանը թույլատրում է ներգրավված կապիտալի հետ առընչվող պարտավորությունները և չխանգարել էլեկտրաէներգիա արտադրող կազմակերպության գարգացման համար անհրաժեշտ լրացուցիչ սեփական կամ փոխառու միջոցների ներգրավումը:

Թույլատրելի շահույթի սահմանման նպատակով օգտագործվում են հետևյալ երկու ուղղությունները՝

- 1) գուտ ակտիվների շահույթի նորմայի եղանակ, որը շահույթի հաշվարկման բազայի և թույլատրելի շահույթի նորմայի արտադրյալ
- 2) անհրաժեշտ ֆինանսական ծախսերի հատուցման եղանակ:

Հայաստանում սպառողներին մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագները հաստատվել են 1999 թվականին և փոփոխվել են նաև կապված առանձին սակագների տեսակների տարանջատման հետ (ըստ լարման և ժամանակի):

Աղյուսակ 1.1 Վերջնական սպառողին առաջարկվող սակագները 1999-2017թթ.(դր/կՎտժ)³⁵

Լարում	1999 ³⁶		2009		2013		2014		2015		2016		2017	
	Ց.	Գ.	Ց.	Գ.	Ց.	Գ.	Ց.	Գ.	Ց.	Գ.	Ց.	Գ.	Ց.	Գ.
110կՎ	-	-	-	-	-	-	-	-	-	-	34,7	30,7	33.48	29.28
35կՎ	16		21	17	29	25	32.85	28.85	39.78	35.78	37,2	33,2	35.98	31.98
6(10)կՎ	20 ³⁷		25	17	35	25	38.85	28.85	45.78	35.78	43,2	33,2	41.98	31.98
0,38կՎ	25	25	30	20	38	28	41.85	31.85	48.78	38.78	46,2	36,2	44.98	34.98

³⁵ <http://ena.am/AboutUs.aspx?id=13&lang=1> 2009-2017թթ. ՀԵՑ տարեկան հաշվետվություններ

³⁶ <http://www.arlis.am/documentview.aspx?docid=18032> ՀՀ Էներգետիկայի Հանձնաժողովի Որոշումը սպառողներին առաջարկող էլեկտրական էներգիայի սակագների մասին ընդ. 11.11.1998թ.

³⁷ 6 (10) կՎ լարման ոչ ուղիղ բջիջներով սնվող սպառողներին՝ 25 դրամ/կՎտժ

Առաջին անգամ ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ գնման սակագները բարձրացել են 2009 թվականի ապրիլի 1-ից: Երկրորդ անգամ վաճառքի սակագների բարձրացումը տեղի է ունեցել ՀՀ ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԵՄԻԿԱԿԱՆ համակարգի սակագների վերանայումից հետո՝ 2013 թվականի հունիսի 7-ից: 2014 թվականի օգոստոսի 1-ից ուժի մեջ է մտել վաճառքի սակագների ավելացման մասին ՀԾԿՅ ռոշումը, և սակագները ևս մեկ անգամ բարձրացել են 2015 թվականի օգոստոսի 1-ից: 2016 թ. օգոստոսի 1-ից ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ սակագները նվազել են առանց մարժայի նվազման: 2016թ. դեկտեմբերի 23-ին ՀԾԿՅ-ն ևս մեկ անգամ սակագների իջեցման ռոշում է ընդունում: Նոր սակագները սկսում են գործել 2017թ. փետրվարի 1-ից:

Անհրաժեշտ է նշել, որ նույնիսկ, եթե Հանձնաժողովը կիրառում է շահույթի նորմայի կարգավորման մեթոդը (Rate of Return methodology), պետական ընկերությունների շահույթի նորման կազմում է ընդամենը 10% (ներառյալ հարկերը, տեղական արժույթով): Այս ընկերությունները խոշոր ներդրումներ են կատարում երաշխավորվելով՝ պետության կողմից երաշխիք տրամադրելու պայմանով: Այսպիսով, պետական սեփականություն հանդիսացող ընկերությունները չեն կարողանում օգտվել առևտրային վարկերից և գործել որպես ստանդարտ առևտրային սուբյեկտներ:

ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱ արտադրող կայանների կողմից արտադրված ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ սակագները կարգավորվում են շահույթի նորմի հաշվարկման մեթոդով ոգիայով: Դա, մեր կարծիքով, բավարար չափով խթաններ չի կարող ապահովել համակարգում կարգավորվող մենաշնորհների ծախսերի օպտիմալացման տեսանկյունից: Անհրաժեշտ իրավաօրենսդրական նորմերի բացակայությունը ուղղակիորեն խոչընդոտում է սպառողների՝ հարևան երկրներից ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱ ներմուծելու հնարավորությանը: Վերջնական սպառողների համար սահմանված սակագները տարբերակված են ըստ լարման մակարդակների և յուրաքանչյուրն իր հերթին ունի ցերեկային և գիշերային ժամերի տարբերակված սակագներ: Քանի որ չկան վերջնական սպառողի կողմից հզորության համար սահմանված

վճարներ, պիկային ժամանակահատվածի սակագներ կամ ծառայություն համար վճարներ: Գիշերային սակագինը ձմեռային ամիսներին գործում է 23:00-07:00 ժամերին, ամառային ամիսներին՝ 22:00-06:00 ժամերին³⁸: Ձմռան ամիսներին օրվա կտրվածքով երեկոյան ծանրաբեռնվածությունը ընկնում է ժամը 19:00-21:00 ժամանակահատվածի վրա, իսկ ամռանը դա համեմատաբար ավելի ուշ ժամերի է տեղի ունենում՝ ժամը 21:00-23:00, կապված օրվա ցերեկային լույսի տևողության հետ:

Խորհրդային տարիներին Չայաստանում օրվա կտրվածքով էլեկտրաէներգիայի պահանջարկի տատանողականությունը արմատապես հակառակ պատկերն ուներ: Այդ տարիներին, երբ երկրում գործում էին մեծ թվով խոշոր գործարաններ, որոնք էլեկտրաէներգիայի սպառման մեջ էական դեր ունեն, օրվա կտրվածքով էլեկտրաէներգիայի ծանրաբեռնվածությունը նկատվում էր աշխատանքային ժամերի շրջանում: Իսկ դրանց՝ աշխատանքային օրվա ավարտին դադարից հետո էլեկտրաէներգիայի պահանջարկը կտրուկ անկում էր ապրում, երեկոյան ժամերին բարձրանալու փոխարեն: Ուստի կարելի է եզրակացնել, որ այս տեսանկյունից, այժմ Չայաստանում էլեկտրաէներգիայի սպառումն մեջ կենցաղային սպառումն էական կշիռ ունի:

Ցերեկային և գիշերային սակագների սահմանված միջին տարբերության մեծությունն այժմ բարձր լարման (110 կՎ, 35 կՎ) սպառողների համար կազմում է ընդամենը 11.9%, իսկ միջին (6/10 կՎ) և ցածր լարման սպառողների համար՝ 22%: Այս տարբերությունները չեն օժանդակում համակարգում բեռի կառավարման բարելավման գործընթացին: Գիշերային և ցերեկային սակագների տարանջատումը ունի նաև մեկ այլ խնդիր լուծելու նպատակ: Այսպես, օրվա կտրվածքով էլեկտրաէներգիայի օգտագործման երեկոյան բարձր ծանրաբեռնվածությունից հետո ծանրաբեռնվածության՝ գիշերային ժամանակահատվածի կտրուկ անկումը ևս էլեկտրաէներգիա արտադրող կայանների արտադրության գործընթացի կառավարման հարցում խնդիրներ է առաջացնում:

³⁸ <http://ena.am/pagewm.aspx?id=2&mid=23&lang=1> «ՅԷՑ» ՓԲԸ-ի պաշտոնաան կայքի հրապարակում

Մասնավորապես առումակայ անի և ջերմաէլեկտրակայ անների դեպքում բարձր հզորությամբ աշխատանքի կտրուկ իջեցումը որոշակի ժամանակ է պահանջում, և աշխատանքի բարդություններ է առաջացնում, իսկ հիդրոէլեկտրակայ աններն այս հարցում ավելի ճկուն են: Գիշերային ցածր սակագինը նաև այդ ժամերին էլեկտրաէներգիայի պահանջարկ ստեղծելու նպատակ ունի: Դիցուք, եթե մեծ քանակությամբ էլեկտրաէներգիա սպառող կազմակերպությունները հնարավորությամբ դեպքում իրենց գործունեությունը կազմակերպեն գիշերային ժամերին, ապա դա կբերի օրվա ընթացքում էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկի տատանումների որոշակի հարթեցման: Սակայն գործնականում նման լուծումներ չեն նկատվում:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների ներքո սահմանվում է նաև սակագնի մշակման կարգը: Ըստ այս կարգի՝ էլեկտրաէներգիա արտադրող կազմակերպության համար, էլեկտրաէներգետիկական համակարգին մատուցվող ծառայության հաշվառման հնարավորությունից և նպատակահարմարությունից ելնելով, կիրառվում են միադրույք, երկդրույք և բազմադրույք սակագներ, որոնց հաշվարկման մանրամասն կարգը կարելի է տեսնել Հավելված 5-ում:

Մատուցված ծառայությունների ծավալի միավորը էլեկտրաէներգիայի քանակի միավորն է, իսկ սակագինը հաշվարկվում է, որպես էլեկտրաէներգիա արտադրող կազմակերպության անհրաժեշտ հասույթի ու տարվա ընթացքում ներքին սպառողների և արտահանողների համար հաղորդվող էլեկտրաէներգիայի քանակի հարաբերություն:

Մեր կարծիքով էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման հարցում մեծ նշանակություն ունի սակագնի մարժայի հաշվարկման մեթոդաբանության շահույթի նորմի նվազագույն շեմը: Մեր

գնահատականով այն օբյեկտիվորեն նոր քննարկման կարիք ունի, քանի որ սահմանվել է ավելի քան 15 տարի առաջ կազմելով 12%³⁹:

Ըստ սակագների հաշվարկման մեթոդաբանության՝⁴⁰ թույլատրելի շահույթը հաշվարկվում է որպես շահույթի հաշվարկման բազայի և ակտիվների շահութաբերության նորմայի արտադրյալ: Ծահույթի հաշվարկման բազան՝ օգտակար և օգտագործվող ակտիվներում կուտակված ներդրումների գումարի և կուտակված մաշվածության տարբերությունն:

Շրջանառու կապիտալը, դա ընթացիկ գործունեության մեջ ներդրվող կապիտալ է ամեն օպերացիոն ցիկլի ընթացքում: Ծահույթի հաշվարկման բազայում ներառվող շրջանառու կապիտալի մեծությունը հաշվարկվում է որպես լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ բոլոր ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների տարբերություն, որոնք որոշվում են ելնելով դրանց՝ Յանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ համաձայնեցված շրջանառության ժամկետներից:

Մեր կարծիքով սակագնի հաշվարկման մեթոդաբանության մեջ վերանայման կարիք ունի թույլատրելի շահույթի հաշվարկը: Այստեղ հաշվարկի մեջ ներառվում է ըստ ակտիվների շահութաբերությունը, որը պարունակում է հիմնական կապիտալը և կատարված ներդրումները, առանց մաշվածության ներգրավման: Մեր կարծիքով էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից, առավել նպատակահարմար է այստեղ օգտագործել շահույթի և հասույթի համեմատությունը: Սա բացատրվում է այն փաստով, որ ազատ շուկայական հարաբերություններում և մրցակցային հավասար պայմաններում գործող ընկերության ներդրումների ռիսկերը, կապված շահութաբերության հետ, ընկած են հենց իր պատասխանատվության վրա: Սակայն բնական մենաշնորհի

³⁹ ՀՀ Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002թ. նոյեմբերի 1-ի N 79 Ա որոշմամբ հաստատված լիցենզիայի պայմանների Յավելված 2, կետ 1.1

⁴⁰ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=35506> Որոշում էլեկտրական Էներգիա արտադրող ընկերությունների կողմից առաքված էլեկտրական Էներգիայի (հզորության) սակագների հաշվարկման մեթոդաբանությունը հաստատելու մասին

պարագայում ԶԾԿՅ-ի կողմից հաստատված ներդրումների շահույթաբերությունն ապահովված է, քանի որ ներդրումների թույլատրումից հետո ռիսկերը ներառվում են սակագնում ու պատասխանատվությունը փոխանցվում է վերջնական սպառողին: Այս մեթոդաբանության համաձայն թույլատրելի գուտ շահույթը հաշվարկվում է որպես շահույթի հաշվարկման բազայի, այսինքն բաժնետոմսերի ամբողջական գումարի, տվյալ ժամանակաշրջանի ներդրումների հանրագումարի և մաշվածության տարբերություն՝ բազմապատկված շահույթաբերության նորմայով: Այս մոտեցումն իհարկե արդարացի էր հետխորհրդային ժամանակաշրջանում, երբ էլեկտրաէներգետիկական համակարգը դեռ կազմավորման և կայացման փուլում էր և առաջնային անհրաժեշտություն կար ապահովել համակարգում գործող ընկերությունների խրախուսումը՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ գործունեության և ներդրումների համար: Իսկ այս պահին համակարգը կարելի է գնահատել որպես՝ այդ փուլն արդեն հաղթահարած, և ըստ այդմ անհրաժեշտ է կարգավորել ոչ թե ըստ ակտիվների շահույթաբերության մեթոդաբանության, այլ ըստ կազմկապերային գործունեության շահույթաբերության:

Ներկայումս սակագնային մարժայի հաշվարկման անհրաժեշտ հասուն թիվ բանաձևն⁴¹ ունի հետևյալ տեսքը՝

$$ԱՅ = ԳԷԱ + ԾՊԾ + Մ + ՅՏ + ԹԾ + ԱԴՊ + ՓԳ$$

ԳԷԱ - Գնվող էլեկտրաէներգիայի արժեք (հաշվարկի մեթոդով ոգիան տես՝ հավելված 6)

ԾՊԾ - Շահագործման և պահպանման ծախսեր

Մ - հիմնական միջոցների մաշվածություն

ՅՏ - ԶՅ օրենսդրությամբ սահմանված հարկերն են, բացի շահույթահարկից և ԱԱԶ, տուրքերը ու պարտադիր այլ վճարները

ԹԾ - թույլատրելի շահույթ

⁴¹ <http://psrc.am/images/News/haytararutyun/2017/13.12.17n/2.pdf> ԶԾԿՅ 13.12.2017 նիստի №542-Ա որոշում 2002 թվականի նոյեմբերի 1-ի №79 ադրոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

ՓԳ - Լիցենզավորված անձի անհրաժեշտ հասույթի և գնված էլեկտրական էներգիայի արժեքի տարբերության՝ հաշվարկային և փաստացի մեծությունների շեղման արդյունքում ձևավորված փոխատուցման ենթակագումարն է:

ԱԴՊ անհուսալի դեբիտորական պարտքերն են
Այստեղ ԹՇ հաշվարկման համար օգտագործվող՝
$$\text{ԹՇ} = \text{ՇԲ} \times \text{ՇՆ}$$

Որտեղ՝

ՇԲ - շահույթի բազան է

ՇՆ – շահույթի նորման

Մեր առաջարկով թույլատրելի շահույթը կլինի՝

$$\text{ԹՇ} = \text{ՇԲ} \times \frac{\text{Շ}}{\text{Հ}}$$

Շ - Լիցենզավորված գործունեության գուտշահույթը

Հ - Լիցենզավորված գործունեության ընդհանուր հասույթ

Այս դեպքում շահույթի նորմը, օրինակ, 2016 թվականի⁴² համար կկազմի՝

$$23285 \text{ մլն (Շ)} \div 192743 \text{ մլն (Հ)} = 12,08\%$$

Առաջարկվող մոտեցման արդյունքը նշանակալիորեն մոտ է 3ԾԿ3 կողմից սահմանված նվազագույն շահույթաբերության նորմի՝ 12%-ի սահմանաչափին (որն ինչպես արդեն նշվել է, վերանայման կարիք ունի): Չեռնաբար, և՛ էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման, և՛ վերջնական սպառողի շահերը պահպանելու նպատակով հարկ է վերանայել սակագնային մարժայի մեթոդիկան հաշվի առնելով նշված առաջարկությունը:

Ինչ վերաբերում է շահույթի նորմի նվազագույն սահմանին, ապա դա, այնուամենայնիվ կարելի է սահմանել նաև հաշվի առնելով ՀՀ պետական երկարաժամկետ պարտատոմսերի միջին տոկոսադրույթի մեծությունը: Այս փոփոխության հիմնավորումը կապված է գործունեության երաշխավորված շահույթաբերության հետ:

⁴² <http://ena.am/downloads/2016-annual-arm.pdf> «ՀԷՏ» ՓԲԸ 2016թ, տարեկան հաշվետվություն, էջ 29

Այսպես, տվյալ ոլորտը և պետական պարտատոմսերն ապահովում են ներդրումների և գործունեության երաշխավորված տոկոսդրույքով եկամտաբերության: Ուստի էլեկտրաէներգիայի ոլորտում ներդրումների հոսքն ապահովելու համար անհրաժեշտ է սակագնի մարժայի հաշվարկման մեթոդիկայում շահույթի նորմի նվազագույն շեմը սահմանել գործող 12%-ից բացի նաև տվյալ տարվա պետական երկարաժամկետ պարտատոմսերի շեմը՝ հարկումից հետո, այլապես ներդրողը կարող է գերադասել պետական պարտատոմսերի ձեռք բերումը: Օրինակ՝ 2017թ. համար առաջնային շուկայում տեղաբաշխված երկարաժամկետ պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 12.3691%⁴³, 2016թ. համար՝ 11.0709%⁴⁴:

Էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում ենք լիցենզավորված անձի համար հաշվարկվող անհրաժեշտ հասույթի նկատմամբ կիրառել սեզոնային ճշգրտող գործակից, որը կորոշի սակագնի մարժան սպառողական յուրաքանչյուր խմբի համար:

Այսպես՝

$$\text{Սակագնի մարժա} = \frac{\text{Անհրաժեշտ հասույթ(դրամ)} \times k}{\text{Ի(կվտժ)}} - \text{ԷԳՄՍ}$$

- k-ն ճշգրտող գործակիցն է
- Ի-ն Լիցենզավորված անձի կողմից իրականացվող էլեկտրական Էներգիայի քանակությունն է
- ԷԳՄՍ-ն էլեկտրաէներգիայի գնման միջին սակագինն է
- Սեզոնային ճշգրտումը կարելի է իրականացնել հաշվարկային տարին բաժանելով երկու մասի և սակագնային մարժան հաշվարկել տարեկան երկու անգամ: Քանի որ ցուրտեղանակը տարվա ընթացքում էլեկտրաէներգիայի սպառման ծարանաբեռնված ժամանակահատված է համարվում, ՀԾԿՀ-ն կարող է ճշգրտող ողջամիտ գործակիցը սահմանել 1-ից բարձր: Դա հիմնավորվում է նաև նրանով, որ ձմռան

⁴³ <http://www.minfin.am/website/images/files/289f339b.pdf> Տեղեկանք պետական գանձապետական պարտատոմսերի վերաբերյալ, Էջ 1, առ 31.12.2017

⁴⁴ <http://www.minfin.am/website/images/files/31.12.2016.pdf> Տեղեկանք պետական գանձապետական պարտատոմսերի վերաբերյալ, Էջ 1, առ 31.12.2016

օգտագործվում է ջերմաէլեկտրակայանների կողմից մատակարարված էլեկտրաէներգիան, որը գազի գնից կախված՝ ունի թանկ ինքնարժեք: Իսկ գարնանը և ամռանը, երբ նկատվում է էլեկտրաէներգիայի սպառման համեմատաբար թեթև ծանրաբեռնվածություն, ՀԾԿՀ-ն կարող է սահմանել 1-ից ցածր ճշգրտման ողջամիտ գործակից, ինչը կբերի էլեկտրաէներգիայի սակագնի նվազման: Անհրաժեշտ է դիտարկել նաև այն հանգամանքը, որ ամռան և գարնան սեզոններին մատակարարված էլեկտրաէներգիան արտադրվում է հիմնականում ատոմակայանի և հիդրոէլեկտրակայանների կողմից, որն ունի էականորեն ցածր սակագին քան ՁԷԿ-երինը: Սեզոնային ճշգրտող գործակիցը կսահմանվի ՀԾԿՀ կողմից և կախված կլինի էլեկտրաէներգիայի պահանջարկի կանխատեսումից, էլեկտրաէներգիա արտադրող կայաններին պատվիրված հոսանքի ծավալից ինչպես նաև տարվա եղանակային կանխատեսումից՝ ցուրտ կամ տաք լինելուց: Այստեղ ՀԾԿՀ-ն կհամագործակցի ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայության (Հայպետհիդրոմետ) պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) հետ եղանակային կանխատեսումների տվյալներ հավաքագրելու և օգտագործելու համար: Մեր կարծիքով նման տարբերակված մոտեցումը թույլ կտա ունենալ առավել արդյունավետ, օպտիմալ և ողջամիտ էլեկտրաէներգիայի սակագին:

Կարելի է եզրակացնել, որ սակագնի ձևավորման մեթոդաբանությունը թերի է, իսկ երկդրոյքային սակագնով միասնական մեթոդաբանությունը բացակայում է: ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի ընդհանուր կառուցվաքի և կառավարման ձևի շրջանակներում մեծածախ շուկայի գործունեության արդյունավետությունը կարելի է ցածր համարել, իսկ համակարգում սակագնի մարժայի հաշվարկման մեթոդոլոգիան ունի վերանայման կարիք: Մանրածախ շուկայի շահագործումն իրականացվում է միայն փաստացի ռեժիմներով և սակագնի սահմանված վերին շեմով: Էներգետիկ շուկայի գործունեության արդյունավետության բարձրացման առանցքային խնդիր է նաև

սպառողների պաշտպանության իրավաօրենսդրական գործիքակազմի բացակայությունը: Սեզոնային գործակցի ներդրումը սակագնի մարժայի հաշվարկման մեթոդաբանությունում կարող է էական դրական ազդեցություն համակարգում սակագների իջեցման առանցքային նպատակի համար:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ԵՎ ԱՌԿԱ ԿԱՊԵՐԻ ՎԵՐԼՈՒՇՈՒԹՅՈՒՆԸ

2.1 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԵՏԻՎԱԿԱՆ ԿԱՄԱՐԱՐՈՒՄԻ ԿՈՆԿՐԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՏՈՒՄԸ ԵՎ ԱՌԿԱ ԿԱՊԵՐԻ ՎԵՐԼՈՒՇՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի տնտեսությանը խորհրդային տարիներին, մինչև 1988 թվականը, թե՛ տնտեսական աճի տեմպով, թե՛ մեկ շնչին ընկնող համախառն եկամտով խորհրդային հանրապետությանը ներքին շարքում բացարձակ առաջատարներից էր, իսկ Էլեկտրաէներգիայի արտադրության համադրելի էր եվրոպական զարգացած տնտեսությանը ներքին միջին ցուցանիշին:

Անկախության առաջին տարիներին, մինչև 1995թ. տնտեսական անկումը ուղեկցվում էր խոր Էներգետիկական ճգնաժամով: 1990թվականների վերջին հաղթահարելով ճգնաժամը Էլեկտրաէներգետիկական սկսեց դանդաղ տեմպերով զարգանալ, սակայն Էներգիայի բարձր ինքնարժեքը չէր խթանում տնտեսության հետագա վերականգնումը:

Էներգետիկայի բնագավառի բաղկացուցիչներից Էլեկտրամատակարարման համակարգը ամենախոշորն է՝ 985.000⁴⁵ բաժանորդների քանակով: Էներգետիկայի բնագավառում ընդգրկված են Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջերմամատակարարման համակարգերը: Այն ներառում է մոտ 4079.6 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ Էլեկտրակայաններ, որից տնօրինելին՝ մոտ 2400 ՄՎտ, շուրջ 35000 կմ ընդհանուր երկարությամբ տարբեր լարման Էլեկտրահաղորդման գծեր, մոտ 9000 Էլեկտրական ենթակայաններ⁴⁶, շուրջ 140 մլն մ³ տարողությամբ գազի ստորգետնյա պահեստարան, 1740 կմ մայրուղային և ավելի քան 11007 կմ բաշխիչ գազատար ցանցեր, 2227 գազակարգավորիչ կետեր ու

⁴⁵ <http://www.minenergy.am/page/537> Հայաստանի Հանրապետության Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության պաշտոնական կայքի հրապարակում

⁴⁶ <http://ena.am/AboutUs.aspx?hid=38&lang=1> «ՀԷՑ» ՓԲԸ պաշտոնական կայքի հրապարակում

բազում այլ հանգույցներ, սարքեր ու սարքավորումներ⁴⁷, որոնց զգալի մասը գտնվում են ծառայության ժամկետները սպառած և ֆիզիկապես մաշված վիճակում:

Դրվածքային արտադրական հզորությունների զգալի մասը շահագործվում է 40 տարուց ավել, այդ թվում ՋԷԿ-երի (ջերմային էլեկտրակայանների) հիմնական սարքավորումների աշխատանքի տևողությունը անցել է սահմանային 200 հազ. ժամը, իսկ դրանց տեխնիկատնտեսական և բնապահպանական ցուցանիշներն արդեն չեն համապատասխանում միջազգային պահանջներին, ՅԷԿ-երից՝ «ՁորաՋԷԿ»-ի, Սևան-Յրագդանյան կասկադի («Միջազգային էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ), Որոտանի ՅԷԿ-երի համալիրի («Քոնթուր գլոբալ հիդրոկասկադ») տեղակայված սարքավորումների 70%-ը շահագործվում է ավելի քան 40 տարի, իսկ 50% -ը՝ ավելի քան 50 տարի, «ՅԱԷԿ» ՓԲԸ-ի (Յայկական ատոմային էլեկտրակայան) գործող երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետն ավարտվեց 2016թ-ին և որոշում ընդունվեց այն երկարաձգելու մասին:

Վերջին ժամանակաշրջանում էլեկտրաէներգիայի արտադրության, դրա տեղափոխման, բաշխման ցանցերի վիճակի առողջացման և այժմեականացման նպատակով պետության միջոցներով ներգրավվել են և շարունակելու են ներգրավվել Գերմանական KfW բանկի, ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (ՃՄՅԳ), Յամախարիայի բանկի (ՅԲ) միջոցները, պլանավորվում նաև Ասիական Չարգացման Բանկի մասնակցությունը նոր ծրագրերի ֆինանսավորմանը⁴⁸:

Էլեկտրաէներգետիկական ոլորտը ներառում է էլեկտրաէներգիայի արտադրությունը, փոխանցումը և բաշխումը: Էլեկտրաէներգիան արտադրվում է էլեկտրաէներգիա արտադրող կայաններում (Ատոմակայան, ՋԷԿ-եր և այլն), այնուհետ «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն փոխանցում է

⁴⁷ <http://www.minenergy.am/page/540> Յայաստանի Յանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության պաշտոնական կայքի հրապարակում

⁴⁸ ՅՅ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն 2014-2016 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիր, էջ 3

«Հայ աստանի էլեկտրական ցանցեր» ընկերությանը, որն իր հերթին կատարում է բաշխման գործառույթ: ՀՀ-ում կան թվով վեց էլեկտրաէներգիա արտադրող խոշոր կայաններ և շուրջ 170 փոքր կայաններ: Խոշոր կայաններ են Ատոմակայանը, Երևանի և Հրազդանի ՋԷԿ-երը, Սևան-Հրազդան ու Որոտանի ՀԷԿ-երի կասկադները և Հրազդան-5 կայանը: Հարկ է նշել, որ թվարկված խոշոր կայաններն արտադրում են հանրապետությունում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի շուրջ 93%-ը: Մնացած 7%-ն արտադրվում է փոքր ՀԷԿ-երում և էներգետիկ ռեսուրսներ օգտագործող այլ կայաններում: Չնայած այն փաստին, որ Ատոմակայանն արտադրում է էլեկտրաէներգիայի մեծ մասը, ջերմային էլեկտրակայանները նույնպես էական նշանակություն ունեն համակարգում: Դրանք օգտագործվում են հիմնականում հոսանքի ձմեռային ծանրաբեռնված օգտագործման արդյունքում առաջացած պակասը լրացնելու, ինչպես նաև Ատոմակայանի պլանային՝ ամառային կամ աշնանային, դադարների ժամանակ Հայ աստանում գործում են երեք ջերմային էլեկտրակայաններ: Դրանք են՝

- «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» կայանը
- «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն (Երևանի ՋԷԿ)» կայանը
- «Հրազդան -5» կայանը

«Վանաձորի ՋԷԿ»-ը այժմ չի աշխատում, քանի որ դրա հոսանքի հիմնական սպառողի՝ «Վանաձոր Բիմպրոմ»-ի գործունեությունն այժմ դադարեցված է:

Այս երեք կայանները միասին ունեն մեծ հզորություն և ընդունակ են սպասարկել երկրի էլեկտրաէներգիայի պահանջարկի մեծ մասը, սակայն դրանց ներուժն ամբողջությամբ չի կիրառվում, քանի որ այս կերպ արտադրված էլեկտրաէներգիան ունի թանկ ինքնարժեք:

Երևանի ՋԷԿ-ի մոտակայքում 2017թ. մեկնարկել է մեկ այլ՝ նոր ջերմային կայանի կառուցումը «Ռենկո» ընկերության կողմից: Նոր ՋԷԿ-ի շինարարությամբ պլանավորվում է մոտ 234ՄՎտ հզորությամբ և մինչև 53 տոկոս ընդհանուր ՕԳԳ-ով համակցված ցիկլով գազային էլեկտրակայանի կառուցում: Ծրագրի

իրականացման համար կներդրվի մոտ 285 մլն ԱՄՆ դոլար: Կառուցման աշխատանքների ժամկետը սահմանվել է 26 ամիս և կավարտվի 2019 թվականի երկրորդ կեսին⁴⁹:

«ՅրագՋԵԿ»-ը կառուցվել է Յրագդան և Մարմարիկ գետերի միախառնման տարածքի մերձակայքում, ծովի մակերևույթից 1715-1730մ բացարձակ բարձրության վրա: «ՅրագՋԵԿ»-ը նախագծվել է 1960-ական թվականների սկզբին, բավական խիստ կլիմայական պայմաններում գործելու համար: Մինչ 1993թ. այս ջերմաէլեկտրակայանի համար որպես հիմնական վառելիք օգտագործվում էր մագնիթը, իսկ որպես պահուստային՝ բնական գազը: 1993թ-ից հետո որպես հիմնական վառելիք սկսեց օգտագործվել է բնական գազը, իսկ պահուստային վառելիք՝ մագնիթը⁵⁰: Կայանը բաղկացած է բլոկային և ոչ բլոկային մասերից, ընդհանուր 1110ՄՎտ հզորությամբ:

«Երևանի ՋԵԿ» ՓԲԸ-ի հիմնադրումը տեղի է ունեցել 1963 թվականին: 1997 թվականին ստեղծվել է պետական «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ընկերությունը: «Երևանի ջերմաէլեկտրակենտրոնի» նախագծման աշխատանքները մեկնարկել են 1959 թվականին և իրականացվել են ԽՍՀՄ «Տեպլոէլեկտրոպրոյեկտ» ինստիտուտի կողմից: Որոշում է կայացվել շինարարությունն իրականացնել Յայաստանի արդյունաբերական էներգատար կենտրոններից մեկում՝ Երևանի հարավային արդյունաբերական հանգույցում: «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն»-ի շինարարությունը մեկնարկել է 1961թ. -ին: «Երևանի ՋԵԿ»-ի յոթ տուրբոազրեգատներից առաջինը՝ 50 ՄՎտ հզորությամբ առաջին տուրբինային տեղակայանքի շահագործումը մեկնարկել է 1963թ. -ին, իսկ վերջինը՝ 1967թ. -ին: Կայանը ներառում է 300 ՄՎտ հզորությամբ բլոկային մասը և 250 ՄՎտ ոչ բլոկային մասը, որը խառը տեսակի կայան է:⁵¹ Միայն 2015 թվականին Երևանի ՋԵԿ-ը «Յայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին մատակարարել է

⁴⁹ <http://www.minenergy.am/article/860> Յայաստանի Յանրապետության Էներգետիկ Ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության պաշտոնական կայքի հրապարակում

⁵⁰ <http://raztes.am/arm/history/> «ՅրագՋԵԿ» ԲԲԸ պաշտոնական կայքի հրապարակում

⁵¹ <http://www.minenergy.am/page/531> ԷԲՊՆ պաշտոնական կայքի հրապարակում

823.1 մլն կՎտժ էլեկտրական էներգիա (հզորություն), որը գումարային արտահայտությամբ կազմում է 30470.8 մլն դրամ (ներառյալ ԱԱՀ)⁵²:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի սեփականություն հանդիսացող «Յրազդան-5» կայանի 440 ՄՎտ հզորություն ունեցող շոգեգազային էներգաբլոկը շահագործվում է 2012թ.-ից, որի նախագծումն ու կառուցումը տևեց շուրջ չորս տարի:

Հայաստանում ջերմային էլեկտրակայանների գործունեության մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել վերջին տարիներին դրանց տնտեսական գործունեությունը բնութագրող տարբեր ցուցանիշների շարժընթացը: Համակարգում դրանց դերը գնահատելու նպատակով դիտարկենք ՁԷԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի ծավալը Հայաստանում արտադրված էլեկտրաէներգիայի ողջ ծավալում:

Աղյուսակ 2.1

ՁԷԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի տնտեսակարար կշռի փոփոխությունը (մլն կՎտժ)⁵³

	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Բոլոր կայանները	6491.4	7432.7	8036.2	7710	7750	7798	7315
Ձերմային կայաններ	1438.3	2390.3	3399	3173.1	3288.6	2801	2563.5
Մասնաբաժինը (%)	22.15	32.15	42.29	41.15	42.43	35.92	35.04
Տարեկան աճ/նվազում % (ՁԷԿ-եր)	-	39.82	29.67	(7.12)	3.51	(17.3)	(9.27)

Դիտարկելով 2010-2016թթ. ցուցանիշները նկատում ենք, որ երկու տարի անընդմեջ Հայաստանում եղել է ջերմային էլեկտրակայանների արտադրած հոսանքի՝ 1 մլրդ կՎտժ-ի աճ: Ինչնօվ է դա պայմանավորված: 2010-2011-ի աճը երևան ՁԷԿ-ում շահագործման հանձնված համակցված ցիկլով նոր էներգաբլոկի

⁵² http://psrc.am/images/docs/reports/electric/2015/4-er/Araqum-vcharum_2015-4_popoxvac.pdf ՀԾԿՅ Տեղեկանք 2015 թվականի ընթացքում էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների կողմից առաքված էլեկտրական էներգիայի (հզորության) վերաբերյալ (ներքին սպառման մասով)

⁵³ <http://www.armstat.am/file/doc/99493648.pdf> Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2015 (Էջ 280)

արդյունքն է, որն ունի մոտ 240 Մվտ դրվածքային հզորություն: Իսկ 2011-2012թթ. աճը՝ «Գազարոմ Արմենիա» ՓԲԸ-ին պատկանող «Յրագդան-5» կայանի աշխատանքի մեկնարկի հետևանք է: Նշենք, որ «Երևան ՋԷԿ»-ի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի հիմնական մասն օգտագործվում է Իրանի Իսլամական Հանրապետության արտահանելու նպատակով: Այսինքն կարևոր է դիտարկել այն հանգամանքը, որ էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների գարնցվող աճը միանշանակորեն չի ենթադրում էլեկտրաէներգիայի ներքին պահանջարկի ավելացում: Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 2.1-ի տվյալներում՝ ընդհանուր արտադրված հոսանքի կազմում, ջերմային էլեկտրակայաններից առաքված էլեկտրաէներգիայի մասնաբաժինն աճել է՝ 2014-ին հասնելով 42.43%-ի: Դա նշանակում է, որ մեր էլեկտրաէներգետիկ համակարգը գնալով ավելի կախված է դառնում ՋԷԿ-երից, որոնց արտադրած հոսանքի ինքնարժեքն ուղղակիորեն կախված է էլեկտրաէներգիա արտադրելու համար անհրաժեշտ գազի գնից: Աղյուսակ 2.2-ում հաշվարկված է 2016-2017թթ. ՋԷԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի ընդհանուր արտադրության ծախսերում էներգակիրների ծախսերի մասնաբաժինը, ինչը բավականին կարևոր է պատկերը հասկանալու համար, հատկապես այն դեպքում, երբ արտադրության ծախսերի հաշվարկում էներգակիրների ծախսերը՝ միակ փոփոխուն ծախսերն են: Դա նշանակում է, որ տվյալ կայանի հոսանքի սակագինը փոփոխվում է, հիմնականում, միայն էներգակիրների ծախսերից:

Աղյուսակ 2.2

2016-2017թթ. ՋԷԿ-երի կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի ընդհանուր արտադրության ծախսերը և էներգակիրների ծախսերը (մլն. դրամ)⁵⁴

	Հրագ 5	Հրագ ՋԷԿ	Երևան ՋԷԿ
Էներգակիրների ծախսեր	12527.68	18289.51	15948.53
Արտադրության ծախսեր	15217.9	22405	28709.63
Էներգակիրների ծախսերի	82.32	81.63	55.55

⁵⁴ http://psrc.am/images/News/haytarutyun/2016/24.06.16/Hashvark_hamakarg.pdf ՀԾԿՀ պաշտոնական կայքի հրատարակում

մասնաբաժինը ծախսերում (%)	արտադրության		
Միադրույք սակագին (դրամ, առանց ԱԱՀ)	33	40.97	30.44

Դատելով նշված թվերից՝ կարելի է համարել, որ մեր ջերմաէլեկտրակայանները հիմնականում արդյունավետ են աշխատում, քանի որ էներգակիրների ծախսերը արտադրության ծախսերի մեծ մասն են կազմում: Դա նշանակում է, որ էներգակիրների՝ այս դեպքում գազի, մեկ միավորի արժեքը էական ազդեցություն ունի կայանի արտադրած միավոր էլեկտրաէներգիայի գնի վրա: Օրինակ՝ «Հրազդան 5» կայանի դեպքում, երբ էներգակիրների ծախսերը 82%-ն են կազմում արտադրության ծախսերի, կարելի է ընդունել, որ դրամիադրույք սակագնում ևս, էներգակիրների մասնաբաժինը գուցա հեռաբար 82% է կազմում, այսինքն՝ 33 դրամում 27 դրամ, հաշվի առնելով, որ դրանք միակ փոփոխուն ծախսերն են:

Ընդհանրացնելով ՁԵԿ-երի արտադրած հոսանքի մասնաբաժնի աճի միտումները և դրան գուցա հեռ այդ հոսանքի ինքնարժեքի վրա ուղիղ ազդեցություն ունեցող գազի գինը, կարելի է ասել, որ այս համակարգում ամենամեծ խնդիրներից մեկը ներկրվող գազի բարձր գինն է: Իսկ լուծումը գտնվում է առողջ տնտեսական և դիվանագիտական հարաբերությունների միջոցով գազի գների այնպիսի համաձայնության գալու մեջ, որը նպաստավոր կլինի ՁԵԿ-երի՝ ավելի արդյունավետ աշխատելու համար:

Էներգետիկ շուկայում իր ուրույն տեղն ունի էլեկտրաէներգիայի բաշխումը, ուստի առավել հանգամանորեն ներկայացնենք «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի \$ինանսական տնտեսական գործունեության արդյունքները: «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն վերջին տարիների \$ինանսատնտեսական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս բնագավառում գործընթացներն ունեն դրական միտում և սակարող ենք հիմք համարել երկրի տնտեսական զարգացում և համախառն եկամտի աճ կանխատեսելու համար:

Ընկերության բաժնետիրական կապիտալը կազմում է 18 654 221 100 ՀՀ դրամ և բաժանված է 246423 հատ հասարակ (սովորական)

բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 75 700 ՀՀ դրամ⁵⁵: Արտոնյալ բաժնետոմսերը բացակայում են: Կազմակերպությունը հիմնադրվել է 2002թ. ՀՀ-ում գործող չորս պետական տարածաշրջանային էլեկտրաէներգիայի բաշխման և իրացման ցանցերի՝ «Երևանի էլեկտրացանց», «Կենտրոնական էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց» և «Հարավային էլեկտրացանց» ՓԲԸ-ների միաձուլման իսկ հետո՝ մասնավորեցման շնորհիվ⁵⁶: Կառավարության մեկ այլ որոշմամբ⁵⁷ հաստատվեց «ՀԷՑ» ՓԲԸ-ի կանոնադրությունն ու սահմանվեց կանոնադրական կապիտալի չափը՝ 1879410000 դրամ: 2006 թ.-ից սկսած այն «ԻՆՏԵՐ ՌԱՕ ԵԵՍ»-ի խմբի մաս էր կազմում: 2012թ.-ից մինչև 2015թ. կազմակերպության ֆինանսական վիճակը վատթարացավ տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով՝ հասնելով սնանկության շեմին:

Այն, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունը հայտնվել էր ծանր ֆինանսատնտեսական վիճակում, հայտնի է եղել բոլորին, այդ թվում համակարգի պետական պատասխանատուներին, սակայն, վերջին տարիներին միակ քայլը, որ կատարվել էր այդ վիճակից դուրս գալու համար սակազնի բարձրացումն էր, որը երեք տարում աճեց 65%-ով: Սակայն դա էլ չօգնեց խուսափել նոր պարտքերի կուտակման արատավոր արակտիկայից:

2013թ. -ին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում նախատեսված 13.4մլրդ դրամ շահույթի փոխարեն ստացել է 9.8մլրդ դրամի վնաս (կուտակած ընդհանուր վնասը 44.47մլրդ դրամ) և արդյունքում խախտվել են վարկային պարտավորությունները⁵⁸: «Երևսթ ընդ Յանգ» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության հրապարակման համաձայն «ՀԷՑ»-ի ֆինանսական արդյունքները վկայում էին «Էական անորոշության առկայության մասին, որոնք կարող են կասկածի տակ դնել ընկերության գործունեության

⁵⁵ <http://ena.am/downloads/2016-annual-arm.pdf> «ՀԷՑ» ՓԲԸ 2016թ, տարեկան հաշվետվություն, էջ 36

⁵⁶ ՀՀ Կառավարության 2002թ. փետրվարի 21-ի «ՀՀ էներգետիկայի կառավարման բարելավման միջոցառումների մասին» N 152 որոշում

⁵⁷ ՀՀ Կառավարության 2002թ. փետրվարի 22-ի «ՀՀ էներգետիկայի բնագավառի կառավարման բարելավման միջոցառումների մասին» N 166 որոշում

⁵⁸ «Երևսթ ընդ Յանգ» ՓԲԸ 2014թ. փետրվարի 14-ին ներկայացված 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար անկախ աուդիտորական եզրակացության ամփոփ ֆինանսական հաշվետվություն

անընդհատությամբ շարունակելու ունակությունները»⁵⁹: Առևտրի տրոլը առաջնային կարևորությունն պարունակող խնդիրների շարքում ներկայացրել է ընկերության 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գարնցված 9.8 մլրդ դրամի վնասը, ընթացիկ պարտավորությունների 27.8 մլրդ դրամով գերազանցումը ընթացիկ ակտիվներին, ինչպես նաև վարկային սահմանափակող պայմանագրերի՝ կովենանտների խախտումը: «ՀԷՑ»-ի գործունեության արդյունքում 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ խախտվել են «Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի» և «Վեշեկոնոմբանկի» հետ 2009թ. վարկային պայմանագրերի կովենանտները, որը պատճառ է դարձել պարտավորությունների չկատարման համար: Անկախ առևտրական եզրակացության մեջ նշվում է նաև որ, 2013թ. վերջի դրությամբ 18 մլրդ դրամի գումարի վարկերը դասակարգվել են որպես ոչ ընթացիկ պարտավորություններ: Եթե այդ վարկերը վերադասակարգվեին, 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կավելանային կարճաժամկետ վարկերը, իսկ երկարաժամկետ վարկերը կնվազեին 18 մլրդ դրամով:

2015 թ. սեպտեմբերի 30-ին «Ինտեր ՌԱՕ» և «Տաշիր» ընկերությունների խմբի միջև պայմանագիր կնքվեց Հայաստանի Էլեկտրաէներգետիկական ակտիվների ձեռք բերման շուրջ: Պայմանագրի կնքմամբ կազմակերպության բաժնետոմսերի 100 տոկոսի տնօրինումը փոխանցվեց «Տաշիր» Ընկերությունների խմբին:

2015-2016թթ կազմակերպության արդյունավետության ցուցանիշները զգալիորեն բարելավվել են և հիմա ունեն դրական զարգացման ուղղություն՝ հաղթահարելով նախկինում ունեցած ֆինանսական խնդիրները:

Ընկերության հիմնական գործունեությունը Էլեկտրաէներգիայի գնման և բաշխման գործառնային է, որն իրականացվում է ՀՀ հանրային ծառայությունների կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիայի հիման վրա և վերջինիս

⁵⁹ «Երևսթընդ Յանգ» ՓԲԸ 2013թ. փետրվարի 28-ին ներկայացված 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար անկախ առևտրական եզրակացության ամփոփ ֆինանսական հաշվետվություն

կողմից սահմանված և հաստատված մեծածախ և մանրածախ առքի ու վաճառքի սակագներով:

2016թ. տվյալներով ընկերությունը սպասարկում է շուրջ 1006447 բաժանորդ⁶⁰: Գնվող էլեկտրաէներգիայի միջին տարեկան ծավալը կազմում է շուրջ 6,2 մլրդ կՎտ.ժ, իսկ վաճառքինը՝ շուրջ 5,6 մլրդ կՎտ.ժ:

Ընկերության հիմնական արտադրական հզորությունները բաղկացած են 0,4 կՎ մինչև 110 կՎ լարման 8793 ենթակայաններից և տրանսֆորմատորային կետերից, 261 բաշխիչ կետերից, 31,8 հազ. կմ ընդհանուր երկարությամբ էլեկտրահաղորդման օդային և մալուխային գծերից⁶¹:

Կազմակերպության առաջնային նպատակներից է գործունեության նշանակալի բարեփոխումը և ընդարձակումը, այդ թվում նաև մուտքը տարածաշրջանի էներգետիկ շուկա:

«ՅԷՑ»-ի կարևորագույն խնդիրներից է գործունեության թափանցիկության ապահովումը, բաժնետերերի շահերի և կոռուպցիոն վտանգներից գործընկերների ու աշխատակիցների պաշտպանումը:

2016 թվականին Յայաստանի էլեկտրական ցանցեր»-ը խոշոր հարկատուների ցանկի 2-րդ հորիզոնականում է՝ 17.1 մլրդ դրամից ավել չափով վճարած հարկերով⁶²:

Եկամուտների կազմի և կառուցվածքի վերլուծությունը կատարվում է հորիզոնական և ուղղահայաց մեթոդներով:

«Յայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն իրականացնում է էլեկտրաէներգիայի բաշխման գործունեություն և հանդիսանում է բնական մենաշնորհայ դոմինանտ: Այն ամրագրված է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրամադրված լիցենզիայով՝ համաձայն ՀՀ «Էներգետիկայի մասին» օրենքի:

⁶⁰ <http://psrc.am/am/sectors/electric/service-quality-indicators> ՀԾԿՀ պաշտոնական կայքի հրապարակում

⁶¹ <http://ena.am/AboutUs.aspx?hid=38&lang=1> «ՅԷՑ» ՓԲԸ պաշտոնական կայքի հրապարակում

⁶² <http://taxservice.am/Content.aspx?itn=TILists> ՀՀ Հարկային ծառայության պաշտոնական կայքի հրապարակում

Ընկերության եկամուտները բաժանվում են երեք բաղկացուցիչ մասերի՝

- Գործառնական գործունեությանից եկամուտներ (Էլեկտրաէներգիայի վաճառքից),
- Գործառնական այլ գործունեությանից եկամուտներ,
- Շարունակվող գործունեությանից եկամուտներ.

Փաստացի եկամուտների 99 տոկոսը կազմում է Էլեկտրաէներգիայի վաճառքից եկամուտը: Այն ձևավորվում է ՀՀ ներքին տարածքում վաճառքից, ինչպես նաև Վրաստան և Արցախի հանրապետության արտահանումից: Դեպի Արցախ արտահանումն ունի փոքր մասնաբաժին և Արցախում սեփական էներգետիկ հզորությունների աճով պայմանավորված, այն տարեցտարի փոքրանում է՝ 2017 թ. առաջին կիսամյակում իրականացվել է 39.4մլն Կվտժ Էլեկտրաէներգիայի ներկրում: Արտահանման ծավալները կաճեն Վրաստան- Հայաստան-Իրան բարձր արման նոր օդային գծի կառուցմամբ, որի արդյունքում կձևավորվի տարածաշրջանային էներգետիկ մեծածախ կայուն շուկա: Ստորև ներկայացված աղյուսակ 2.3-ում արտացոլված է «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ եկամուտների կազմը՝ բացարձակ և հարաբերական մեծություններով:


Աղյուսակ 2.3 Եկամուտների կազմի դինամիկան 2012-2016թթ.⁶³

		2012	2013	2014	2015	2016				
		Մլն դր.	Մլն դր.	Մլն դր.	Մլն դր.	Մլն դր.	Մլն դր.			
	Անվանում									
	Եկամուտներ	112489	134798	20%	159118	18%	183086	15%	194359	6%
1	Գործառնական գործունեությանից եկամուտներ (ԷԼԵԿՏՐԱՔՆԵՐԳԻՅԱԿԱՆ ՎԱՃԱՔ)	112281	132101	18	157935	20	181005	15	192743	6
1.1	Ներքին շուկա	109926	130393	19	156809	20	179612	15	192052	7
1.2	Արտասահմանում	2355	1708	(27)	1126	(34)	1393	24	691	(50)
2	Գործառնական այլ եկամուտներ	681	1031	52	1643	59	617	(62)	868	41
2.1	Տեխնիկական պայմանների տրամադրումից հասույթ	719	1001	39	1592	59	703	(56)	846	20
2.2	Այլ պաշարների վաճառքներից (օտարումներից) եկամուտներ	(61)	11	(118)	32	190	(108)	(441)	-	(100)
2.3	Վարձակալությանից եկամուտներ	22	20	(11)	20	-	22	11	23	3
3	Շարունակվող այլ գործունեությանից եկամուտներ	(472)	1666	(453)	(461)	(128)	1464	(418)	748	(49)
3.1	Տոկոսային եկամուտներ	286	234	(18)	164	(30)	155	(5)	45	(71)
3.2	Այլ պահուստների հակադարձում	(968)	851	(188)	111	(87)	(9)	(108)	280	(3275)
3.3	Եկամուտներ (ծախեր) տույժերից, տուգանքներից	250	183	(27)	1050	(673)	1049	(200)	140	(87)

⁶³ <http://www.ena.am/AboutUs.aspx?id=13&lang=1> 2012-2016թթ. ՀԵՑ Տարեկան հաշվետվությանից

3))			
3.										
4	Անհատույց ստացված ակտիվներից եկամուտներ	(144)	277	(293)	247	(11)	246	-	236	(4)
3.										
5	Այլ եկամուտներ	103	120	17	67	(44)	24	65	47	102

Ընկերության ընդհանուր եկամուտները 2012-2016թթ. ընթացքում աճել են շուրջ 73%-ով՝ 112.5 մլրդ դրամից դառնալով 194.4 մլրդ դրամ: Ընդ որում, գործառնական եկամուտները ունեն հարաբերական կայուն փոփոխության շարժընթաց, իսկ գործառնական այլ գործունեությունից եկամուտների և շարունակվող այլ գործունեությունից եկամուտների փոփոխությունը տարաբնույթ է, քանի որ առավել քան ենթակա են արտաքին գործոնների ազդեցության: Գործառնական եկամուտների աճը հիմնականում կախված է էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությունից, իսկ վաճառվող էլեկտրաէներգիայի քանակական փոփոխությունից համեմատաբար ունի քիչ կախվածություն: Ներքին շուկայում յուրաքանչյուր տարի նախորդ տարվա համեմատ եկամուտները փոփոխվել են հետևյալ 17.5%-ով:



Գծապատկեր 2.1 «ՂԷՑ» եկամուտներ

Արտահանումից եկամուտների մասնաբաժինը չնչին է: Նախկինում դրանում որոշակի տոկոս էր կազմում արտահանումը դեպի Վրաստան, սակայն այն էապես կրճատվեց այնտեղ հիդրոէներգետիկայի բուռն զարգացման հետևանքով:

Ներկայ ու մս նույն պատճառով է ապես կրճատվում է արտահանումը Արցախի հանրապետություն: Մինչ 2017 թվականը Հայաստանի և Արցախի հանրապետությունների միջև էլեկտրաէներգետիկական հոսքերի սալտոնի օգուտ Հայաստանի է, սակայն առաջիկա տարիներին նախատեսվում է, որ Արցախը սեփական արտադրանքով կբավարարի ներքին պահանջները և կունենա արտահանում դեպի Հայաստան:


2016թ. «ՀԵՑ» ՓԲԸ տարեկան հաշվետվության⁶⁴ համաձայն ընկերությունը մարել է ժամկետանց վարկային պարտավորություններն ամբողջությամբ և էականորեն կրճատել կրեդիտորական պորտֆելը: 2015թ. նկատմամբ 2016-ին շահույթն աճել է 6.4%-ով ինչը շահագործման ծախսերի կրճատման և ֆինանսական ծախսերի նվազման արդյունք է: Հետաքրքրական է նաև EBITDA ցուցանիշի շարժընթացը վերջին տարիների ընթացքում, որն ըստ «ՀԵՑ» հաշվետվության⁶⁵ 2012-2016թթ. համար կազմել է համապատասխանաբար 5,3 մլն, 3,3 մլն, 10,1 մլն, 34,7 և 41 մլն դրամ: Այս ցուցանիշները վկայում են ընկերության դինամիկ զարգացման մասին: Ընկարության ակտիվների շահութաբերությունը սկսած 2015թ. -ից ունի դրական արդյունքներ, իսկ 2016թ-ին կազմել է 15.5%: Ընթացիկ լիկվիդայնության գործակիցը 0.54 է նախորդ տարվա 0.62-ի փոխարեն:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 15-ին կայացած նիստում որոշվեց համաձայնություն տալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2016-2020 թվականի ներդրումային ծրագրի՝ 2017-2020 թվականների հատվածի ճշգրտումներին և 2018-2027 թվականների ներդրումային ծրագրին: Համաձայնեցված ներդրումային ծրագրերի համաձայն ընկերությունը 2016-2027 թվականների ընթացքում կիրականացնի շուրջ 350 միլիարդ դրամի ներդրումներ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

⁶⁴ <http://ena.am/downloads/2016-annual-arm.pdf> 2016թ. «ՀԵՑ» ՓԲԸ տարեկան հաշվետվություն, էջ 23

⁶⁵ <http://ena.am/AboutUs.aspx?id=13&lang=1> 2012-2016թթ. «ՀԵՑ» ՓԲԸ տարեկան հաշվետվություններ

Ներդրումների ծրագրերը նախատեսում են 6(10)/0,4 կՎ լարում ունեցող ցանցերի սարքավորումների ամբողջությամբ փոխարինում և նորացում, 35 - 0,4 կՎ լարում ունեցող ցանցերում էլեկտրահաղորդման գծերի վերանորոգում և նորացում, ինչպես նաև երկրորդային էլեկտրամատակարարման ապահովում, ցանցի ընդարձակում և նոր բաժանորդների ներգրավում, էլեկտրական եներգիայի ավտոմատացված հաշվառման համակարգի ներդրում 0,4 կՎ լարում ունեցող ցանցերում և կառավարման միջազգային ստանդարտների կիրառում: Ծրագրի իրականացման արդյունքը կլինի կազմակերպության ծախսերի կրճատումը, կորուստների համապատասխանեցումը եվրոպական սահմանված ստանդարտներին, հոսանքազրկումների քանակի և տևողության մոտ երկու անգամ կրճատումը, լարման շեղումների բացառումը⁶⁶:



Գծապատկեր 2.2 «ՂԷՏ» ՓԲԸ էլեկտրաէներգիայի կորուստները (%)⁶⁷ 2004-2016թթ.

⁶⁶ <http://www.ena.am/news.aspx?kind=0&hid=369&lang=1> «Ղայ աստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ պաշտոնական կայքի հրատարակում

⁶⁷ <http://ena.am/downloads/annual-report-2015-Arm-and-rus.pdf> «Ղայ աստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ տարեկան հաշվետվությունը 2015, էջ 24
<http://www.ena.am/downloads/2016-annual-arm.pdf> «Ղայ աստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ տարեկան հաշվետվությունը 2016, էջ 20
<http://ena.am/AboutUs.aspx?id=13&lang=1> «Ղայ աստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ տարեկան հաշվետվություններ

ՀԷՑ Էլ ԵկտրաԷներգիայի Կորուստների շարժընթացը
Ներկայացված է Գծապատկեր 2.2-ում, ինչպես տեսնում ենք վերջին
տարիներին, համապատասխան բարեփոխումների արդյունքում
արձանագրվել է դրանց Էական նվազում:

Այժմ ներկայացնենք «ՀԱԷԿ» ՓԲԸ արդի վիճակի
վերլուծությունը: ՀԱԷԿ-ի կազմում կա երկու Էներգաբլոկ՝ ՋՋԷՌ-
440 (արտադրանք Ջ-270) տիպի երկու ռեակտորով: ՀԱԷԿ-ի առաջին
հերթի նախագիծը մշակվել է 1969թ.՝ հիմք ընդունելով Ջ-230
ռեակտորներով ատոմակայանների առաջին սերնդի նախագիծը և
հաշվի առնելով ՀԱԷԿ-ի տարածքի տեղադրության
առանձնահատկությունները: ՀԱԷԿ-ի տարածքի
սեյսմակայունությունը MSK64 սանդղակով՝ 8 բալ է:

Առաջին Էներգաբլոկը արդյունաբերական շահագործման է
հանձնվել 1976թ. դեկտեմբերի 22-ին, իսկ երկրորդը՝ 1980թ. հունվարի
5-ին: Յուրաքանչյուր Էներգաբլոկի հզորությունը՝ 407,5 Մվտ է:
ԽՍՀՄ Պետատոմհսկողության կողմից վերակառուցման նպատակով
1986թ. մայիսին ՀԱԷԿ-ի երկու Էներգաբլոկները կանգնեցվել են:
ԽՍՀՄ ատոմային Էներգետիկայի նախարարությունը ԽՍՀՄ
Պետատոմհսկողության համաձայնությամբ 1986թ. մայիսից մինչև
1988թ. գարուն վերականգնել է ՀԱԷԿ-ի երկու Էներգաբլոկների
աշխատանքը այն հաշվով, որ այդ ընթացքում կպատաստվեր
վերակառուցման նախագիծը:

ԽՍՀՄ Կառավարությունը 1988թ. օգոստոսին Էլ նելով ՀԱԷԿ-ի
վերակառուցման տնտեսական աննպատակահարմարությունից
որոշում է ընդունել 1990-1991թթ. ընթացքում կայանը հանել
շահագործումից:


Հայաստանի հյուսիսում 1988թ. դեկտեմբերի 7-ին տեղի
ունեցած ավերիչ երկրաշարժից հետո ԽՍՀՄ Մինիստրների
խորհուրդը որոշում ընդունեց Էներգաբլոկները կանգնեցնել
նախատեսվածից ավելի վաղ: 1989թ. փետրվարի 25-ին կանգնեցվել է
առաջին Էներգաբլոկը, իսկ 1989թ. մարտի 18-ին՝ երկրորդը:

ՀՀ Կառավարությունը 1993թ. ապրիլի 7-ին որոշում է ընդունել
ՀԱԷԿ-ի երկրորդ Էներգաբլոկի շահագործման մասին: Կայանի
երկրորդ Էներգաբլոկը վերագործարկվել է 1995թ. նոյեմբերի 5-ին:

ՀԱԷԿ-ի յուրաքանչյուր էներգաբլոկը կազմված է հետևյալ հիմնական սարքավորումներից. 1 ռեակտորից, 2 տուրբինից, 2 գեներատոր և 2 հատգլխավոր տրանսֆորմատորից:

Հայկական ԱԷԿ-ն աշխատում է բեռնվածքի կրման բազային ռեժիմում: Ըստ նախագծի ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի դրվածքային հզորությունը կազմում է 407,5 ՄՎտ: Համաձայն «Թիվ 2 էներգաբլոկի թողարկման փուլային ծրագրի» ՀԱԷԿ-ն աշխատում է դրվածքային հզորության 92%-ի չափով և տնօրինելի հզորությունը կազմում է 375 ՄՎտ: 2016թ. թիվ 2 էներգաբլոկի միջին էլեկտրական բեռնվածքը կազմել է 352.29 ՄՎտ:

Ընկերության կառավարման մարմիններն են՝ Բաժնետերերի ընդհանուր ժողովը, Տնօրենների խորհուրդը, Գլխավոր տնօրենը: Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը վերահսկող մարմինը վերստուգիչ հանձնաժողովն է: Ընկերության կառավարող և վերահսկող մարմինների կառուցվածքը՝



Գծապատկեր 2.3 Ընկերության կառավարող և վերահսկող մարմինների կառուցվածքը.

Համաձայն ՀՀ Կառավարության 06.11.2003թ. 1694-Ն որոշման 2-րդ կետի ՀՀ սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են ՀՀ էներգետիկ

ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին, որպես միակ բաժնետեր:

ՀՀ Կառավարության որոշման⁶⁸ համաձայն վերստուգիչ հանձնաժողովի լիազորությունների կատարումը վերապահված է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ներքին աուդիտի բաժնին:

Ընկերությունը պարտավոր է ամեն տարի անցկացնել բաժնետերերի ընդհանուր ժողով (բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով):

Տնօրենների խորհուրդն իրականացնում է ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը: Տնօրենների խորհրդի իրավասությունները սահմանվում են ՀՀ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով և ընկերության կանոնադրությամբ: Տնօրենների խորհրդի գործունեության կարգը որոշվում է Ընկերության տնօրենների խորհրդի գումարման և անցկացման Կանոնակարգով՝ հաստատված բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Գլխավոր տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացառությամբ բաժնետերերի ընդհանուր ժողովի և Տնօրենների խորհրդի բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերի: Գլխավոր տնօրենը կազմակերպում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումների կատարումը, հաշվետու է նրանց և չունի իրավունք ընդունելու որոշումներ՝ պարտադիր ինչպես Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի, այնպես էլ ընկերության Տնօրենների խորհրդի համար:

Վերստուգիչ հանձնաժողովն իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը: Վերստուգիչ հանձնաժողովի իրավասությունները սահմանվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և ընկերության կանոնադրությամբ: Վերստուգիչ հանձնաժողովի գործունեության կարգը որոշվում է Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի

⁶⁸ ՀՀ Կառավարության 31.05.2012թ. 732-Ն որոշում

մասին Կանոնակարգով՝ հաստատված Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Գրանցված կանոնադրական կապիտալը՝ 2016թ. տվյալներով՝ 146635991000 դրամ է, որը բաժանված է 4000 հատ հասարակ բաժնետոմսի, յուրաքանչյուրը 3665899.77 դրամ անվանական արժեքով⁶⁹: «ՀԱԷԿ» ՓԲԸ բաժնետոմսերի միակ սեփականատերը Հայաստանի Հանրապետության է: «ՀԱԷԿ» ՓԲԸ ֆինանսատնտեսական գործունեության վերլուծության համար օգտագործվել են 2013-2016թթ. ֆինանսատնտեսական տարեկան հաշվետվությունների տվյալները:

Ընկերության ակտիվները նախորդ տարվա համեմատությամբ 2016թ.-ին⁷⁰ աճել են 8442167 հազ. դրամով և առ 31.12.2016թ. կազմել են 106878260 հազ. դրամ: Այդ թվում.

- հիմնական միջոցներ – 49136434 հազ. դրամ (նվազել են 3728322 հազ. դրամ);
- անավարտ ոչ ընթացիկ ակտիվներ – 18141540 հազ. դրամ (աճել են 9533204 հազ. դրամ, պատճառը՝ շահագործման ժամկետի երկարացման հետ կապված հետագա կապիտալացվող ծախսեր և տեղակայման ենթակասարքավորումների ավելացում);
- ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվներ – 651574 հազ. դրամ (աճել են 96674 հազ. դրամ), պատճառը՝ կարևոր անվտանգության համակարգերի գիտահետազոտական մշակման աշխատանքներ;
- ընթացիկ շրջանառու ակտիվներ – 36484703 հազ. դրամ (աճել են 2540611 հազ. դրամ) – հիմնականում առաջացել են միջուկային վառելիքի հավելյալ մատակարարման (2017թ. համար) հետևանքով:

Շրջանառու կապիտալի տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում 2016թ.-ին կազմել է 34.14%: Ընթացիկ դեբիտորական պարտավորությունները նվազել են 7311.մլն դրամ (59.9%-ով), ինչը հիմնականում պայմանավորված է բաց թողնված էլեկտրաէներգիայի դիմաց նախկինում կուտակված պարտքերի վճարումներով: Կրեդիտորական պարտքերը նվազել են 3977.8մլն դրամով:

⁶⁹ «ՀԱԷԿ» ՓԲԸ 2016 թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն, էջ 4
⁷⁰ «ՀԱԷԿ» ՓԲԸ 2016 թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն, էջ 27

Կրեդիտորական պարտավորությունների նվազումը հիմնականում պայմանավորված է վարկային պարտավորությունների գծով պարտքերի նվազմամբ: Արտադրանքի իրացումը (հիմնական գործունեությունը հաշվարկված եկամուտները) կազմել է 23736970 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 13.2%-ով:

Աղյուսակ 2.4

Ընկերության 2015-2016թթ. ժամանակաշրջանի գործունեության տեսական ցուցանիշների շարժընթացը

Ցուցանիշի անվանումը	2015թ.⁷¹ վատ	2016թ.⁷² վատ	Շեղում ս.3-ս2	Շեղում %
1	2	3	4	5
Արտադրանքի իրացումից եկամուտ	27345200	23736970	-3608230	-13,20
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-27883381	26761067	1122314	-4,03
Չամփառն շահույթ	-538181	-3024097	-2486016	461,93
Վարչական ծախսեր	-1114657	-1137392	-22735	2,04
Իրացումից շահույթ (վնաս)	-1652838	-4161489	-2508651	151,78
Գործառնական եկամուտ	381804	52602	-329202	-86,22
Գործառնական ծախսեր	-1168490	-600502	567988	-48,61
Գործառնական շահույթ (վնաս)	-2439524	-4709389	-2269865	93,05
Ֆինանսական ծախսեր	-1287588	-241795	1045793	-81,22
Շահույթ այլ ոչ գործառնական գործունեությունից	839736	841463	1727	0,21
Շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով նվազեցումը	-2887376	-4109721	-1222345	42,33
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	1833638	642211	-1191427	-64,98
Ժամանակաշրջանի շահույթ	-1053738	-3467510	-2413772	229,07

Նախորդ տարվա համեմատությամբ հասույթը նվազել է 3608230 հազ. դրամով, ինչը պայմանավորված է 2015թ. -ի համեմատությամբ առաքված էլեկտրաէներգիայի ծավալների նվազմամբ՝ 376.3մլն կվտ.ժ-

⁷¹ «ՀԱԷԿ» ՓԲԸ 2015 թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն, էջ 19

⁷² «ՀԱԷԿ» ՓԲԸ 2016 թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն, էջ 32

ով⁷³: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015թ.-ի որոշմամբ⁷⁴ հաստատվել և 2015թ. օգոստոսի 1-ից գործողության մեջ է մտել «ՀԱԷԿ» ՓԲԸ կողմից մեծածախ էներգետիկ շուկա առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) դրույքը: Իսկ 2016թ.-ի Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մեկ այլ որոշմամբ⁷⁵ հաստատվել և 2016թ. օգոստոսի 1-ից գործողության մեջ է մտել «ՀԱԷԿ» ՓԲԸ կողմից մեծածախ էներգետիկ շուկա առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) դրույքը, որը գործել է առ 31.12.2016թ. :

Այլ ուսակ 2.5

ՀԱԷԿ էլեկտրաէներգիայի սակագինը 2015-2016թթ.

Սակագին	01.01.2014-01.08.2015 ⁷⁶	01.08.2015-31.12.2016 ⁷⁷	ավելաց.
Էլեկտրաէներգիայի դրույք, դրամ/կվտ.ժ. (առանց ԱԱՀ)	4.597	6.418	1.821
Հզորության դրույք, դրամ/կվտ (առանց ԱԱՀ)	3608.78	4079.41	470.63
Միադրույք սակագին	10.377	12.773	2.396

Էլեկտրաէներգիայի իրացումից վնասները 2016թ.-ին կազմել են 4161489 հազ. դրամ: Գործառնական այլ ծախսերը կազմել են 600502 հազ. դրամ և նախորդ տարվա համեմատությամբ աճել են 567988 հազ. դրամով: Գործառնական այլ գործունեությունից վնասը հաշվետու տարում կազմել է 547900 հազ. դրամ:

2016թ.-ին ընկերության վնասները մինչև հարկումը կազմել են 4109721 հազ. դրամ և ընթացիկ շահույթահարկի գծով ծախսը կազմել է 577930 հազ. դրամ⁷⁸: Հաշվի առնելով ծախսերի ճանաչման հաշվապահական և հարկային հաշվառումների միջև գոյություն

⁷³ «ՀԱԷԿ» ՓԲԸ 2016 թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն, էջ 32

⁷⁴ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015թ.-ի հունիսի 17-ի թիվ 173Ա որոշում

⁷⁵ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հունիսի 24-ի թիվ 192Ա որոշում

⁷⁶ «ՀԱԷԿ» ՓԲԸ 2015 թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն, էջ 20

⁷⁷ «ՀԱԷԿ» ՓԲԸ 2016 թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն, էջ 33

⁷⁸ «ՀԱԷԿ» ՓԲԸ 2016 թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն, էջ 34

ուևնեցող տարբերությունները, հաշվապահական հաշվառման մեջ արտացոլվում է այդ ծախսերի տարբերությունը: Այդ տարբերությունը համարվում է հարկվող ժամանակավոր տարբերություն, իսկ հաջորդող ժամանակաշրջանում առաջացող շահույթահարկի վճարման պարտավորությունը հանդիսանում է հետաձգված հարկային պարտավորություն (ակտիվ): Արդյունքում 2016թ. շահույթահարկի գծով հետաձգված հարկային պարտավորությունների նվազման արդյունքում հետաձգված շահույթահարկի գծով եկամուտը կազմել է 1220141 հազ. դրամ: Ընկերության շահույթահարկի գծով եկամուտը կազմել է 642211.0 հազ. դրամ:

ՀԱԷԿ արտադրած էլեկտրաէներգիայի ինքնարժեքի կառուցվածքը պահվում է գաղտնի, այդ պատճառով վերլուծություն կատարել հնարավոր չէ: Ինքնարժեքը կազմված է հետևյալ հոդվածներից՝ վերանորոգման ծախսեր, օժանդակ նյութեր, միջուկային վառելիք, աշխատավարձ (հաշվի առած արձակուրդային գումարների պահուստը), սոց. վճարներ (հաշվի առած արձակուրդային գումարների պահուստը), ամորտիզացիա, ապահովագրական ֆոնդի մասնահանումներ, աշխատած միջուկային վառելիքի պահպանման ֆոնդին մասնահանումներ, ԱԷԿ-ը շահագործումից հանելու ֆոնդին մասնահանումներ, չփոխատուցվող հարկեր, գնովի էլեկտրաէներգիա, կարգավորման պարտադիր վճարներ և այլ ծախսեր:

2014-2016թթ. ընթացքում 2-րդ էներգաբլոկում արտադրվել է 7612.24 մլն կվտ.ժ. էլեկտրաէներգիա, այդ թվում 2014թ. – 2464.83 մլն կվտ.ժ., 2015թ. – 2787.67 մլն կվտ.ժ. 2016թ. – 2359.74 մլն կվտ.ժ.:

Աղյուսակ 2.6

«ՀԱԷԿ» ՓԲԸ արտադրական ցուցանիշները 2014-2016թթ. համար

N	Ցուցանիշի անվանումը	2014թ. ⁷⁹	2015թ. ⁸⁰	2016թ. ⁸¹
---	---------------------	----------------------	----------------------	----------------------

⁷⁹ «ՀԱԷԿ» ՓԲԸ 2014թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն, Էջ 22

⁸⁰ «ՀԱԷԿ» ՓԲԸ 2016թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն, Էջ 11

⁸¹ «ՀԱԷԿ» ՓԲԸ 2016թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն, Էջ 21

1	Էլ Եկ տր աէ ն եր գի այ ի ար տադր ու թյ ու ն	2464828862	2787673560	2380466365
2	Ծախս ը ս ե փակ ան ն տն տե ս ակ ան կար ի ք ն եր ի հ ամ ար , տե խն ու լ ո գի ակ ան կ որ ու ս տն եր	199189897	216575491	185619264
3	Առ աք վ ած Է Լ Ե կ տր աէ ն եր գի ա	2265638965	2571098069	2194847101

Ընկերության 2014-2016թթ. գործունեության կառավարման արդյունավետությանը բնութագրող ցուցանիշները ներկայացված են ստորև.

Աղյուսակ 2.7

«ՀԱԷԿ» 2014-2016թթ. գործունեության կառավարման արդյունավետությանը բնութագրող ցուցանիշները

	2014թ. ⁸²	2015թ. ⁸³	2016թ. ⁸⁴
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	7.7455	3.6002	3.0902
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի միջին ժամկետ	46	100	116
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	3.7791	3.5381	2.2232
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի միջին ժամկետ	95	102	162
Պաշարների շրջանառելիության գործակից	1.3013	1.4469	1.0346
Պաշարների շրջապտույտի միջին ժամկետ	277	249	348

⁸² «ՀԱԷԿ» ՓԲԸ 2014թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն, Էջ 17

⁸³ «ՀԱԷԿ» ՓԲԸ 2015թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն, Էջ 18

⁸⁴ «ՀԱԷԿ» ՓԲԸ 2016թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն, Էջ 31

Նշված տվյալների համաձայն 2014-2016թթ. ընթացքում էականորեն փոփոխվել է դեբիտորական պարտքերի շրջանառելիության գարծակիցը՝ նվազելով ավելի քան 2 անգամ: Այսինքն նշված ժամանակաշրջանի համար դեբիտորական պարտքերը կանխիկի փոխարկելիությունը նվազել է, իսկ դեբիտորական պարտքերի շրջապտույտի միջին ժամկետը ավելացել է 2.5 անգամ:

Չուտ շահույթի պլանային առաջադրանքը սահմանվում է Ընկերության բիզնես ծրագրով, որը հաստատվում է Ընկերության տնօրենների խորհրդի որոշմամբ: Ստացված փաստացի գուտ շահույթի մեծության վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է Ընկերության տնօրենների խորհրդին՝ եռամսյակային և տարեկան բիզնես-պլանի կատարման շրջանակներում:

Հաշվետու տարվա արդյունքներով ընկերության շահույթի և վնասի հաշվետվությունը հաստատվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, որը միաժամանակ որոշում է ընդունում փաստացի շահույթի բաշխման և բաժնետերերին շահաբաժինների վճարման վերաբերյալ:

ՀԱԷԿ-ի աշխատակիցների փաստացի ցուցակային թվաքանակը 2016թ. տարեվերջին կազմել է 1759 մարդ⁸⁵: Անձնակազմի աշխատանքի վարձատրության փաստացի վճարված միջոցները 2016թ. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ում կազմել է 6619.7 մլն դրամ: 2016թ. \$ինանսական տարվա արդյունքով ընկերության վնասը կազմել է 3467510 հազ. դրամ⁸⁶: Հաշվի առնելով այն, որ ՀՀ Կառավարության որոշման⁸⁷ համաձայն կատարված շահաբաժինների հաշվարկի բազան բացակայում է (-2976860 հազ. դրամ), Ընկերությունը չի կարող հայտարարել (որոշում ընդունել) շահաբաժինների վճարման վերաբերյալ: Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկվել է 2016թ.-ի տարեկան արդյունքներով շահաբաժին չվճարել:

⁸⁵ «ՀԱԷԿ» ՓԲԸ 2016թ. \$ինանսատնտեսական գործունեության հաշվետվություն, էջ 57

⁸⁶ «ՀԱԷԿ» ՓԲԸ 2016թ. \$ինանսատնտեսական գործունեության հաշվետվություն, էջ 39

⁸⁷ ՀՀ Կառավարության 30 նոյեմբերի 2006թ. N1110-Ն որոշում

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ 2016թ. շահաբաժիններ չեն վճարվել, քանի որ 2015թ.-ի տարեկան արդյունքներով նույնպես բացակայում էր շահաբաժինների հաշվարկի բազան:

ՀՀ Էլեկտրաէներգետիկական համակարգի ներկա վիճակի ընդգրկուն վերլուծության համար անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՀ Էլեկտրակայանների կողմից վերջին տասը տարիների ընթացքում արտադրված Էլեկտրաէներգիայի ծավալների փոփոխության շարժընթացը:

Այլ ուսակ 2.8

ՀՀ էլեկտրակայանների կողմից 2005-2016թթ. ընթացքում արտադրված էլեկտրաէներգիայի ծավալների փոփոխության 2 արժընթացը⁸⁸(Կվտժ)

	2005	2006	2007	2008	2009	2010*	2011	2012	2013	2014	2015	2016
«ՀԱԷԿ» ՓԲԸ	2716.3	2640.3	2553.4	2461.7	2493.7	2490	2548.1	2311	2359.7	2464.8	2787.7	2380.5
«Հրազ ՋԷԿ» ՓԲԸ	1435.5	1138.3	1131.6	1495.5	887.8	348.4	628.1	797	660.1	957	546.8	441.4
«Հրազդան 5» կայան	-	-	-	-	-	-	57.9	935.1	1079	857.5	638.4	694.8
«Երևանի ՋԷԿ»	391.7	337	357.1	336.4	240.7	1064.7	1685.7	1641.9	1405.7	1447.9	1594.6	1427.3
«ՄԷԿ» ՓԲԸ	519.2	583.9	521.3	576.2	486.5	727.1	650.9	632.3	467.9	474.7	453.4	405.5
«Որոտան»/«Քոնթոլ Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ	1027.6	1007.9	1030	907.6	1130.6	1311.4	1289.1	1118.8	965.2	833.1	915.9	988.3
Փոքր կայաններ	225.8	231	301.3	312.8	399.2	519.4	549.4	575	744.1	688.9	839.9	959.6
Ընդամենը	6316.1	5940.9	5897.5	6114.1	5671	6490.9	7432.7	8036.2	7710	7750	7798.1	7315.3

⁸⁸ 2005-2016թթ. ՀՀ Հանրային ծառայության էլեկտրակայանների կարգավորման հանձնաժողովի էլեկտրական էներգիայի հաշվետվության էլեկտրական էներգիայի հրատարակումները՝ <http://psrc.am/am/sectors/electric/reports>

Աղյուսակ 2.8-ի տվյալները փաստում են, որ դիտարկվող ժամանակահատվածում Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները, աճման կամ նվազման հստակ միտումներ չեն դրսևորել: 2005թ. -ին գրանցելով 6316 կՎտժ արտադրված Էլեկտրաէներգիայի ցուցանիշ⁸⁹ ծավալները նվազել են տարիներ շարունակ և այս շեմը, չնայած ընթացքում նկատվող աճին և նվազմանը, առաջին անգամ հաղթահարվել է հինգ տարի անց, 2010-ին հասնելով 6490 կՎտժ արդյունքի⁹⁰: Տարիների ընթացքում այս ցուցանիշի անկանոն փոփոխությունը մի շարք պատճառներ ունի, օրինակ՝ երկրում տնտեսական ակտիվությունը, ՀՀ-ից Էլեկտրաէներգիա գնող երկրների պահանջարկը և այլն: Արտադրվող Էլեկտրաէներգիայի ծավալներում զգալի մաս է կազմում Որոտանի, ՄԷԿ-ի և մնացած փոքր հիդրոէլեկտրակայանների կողմից արտադրված Էլեկտրաէներգիայի ընդհանուր ծավալը, իսկ դրանց արտադրանքի վրա ուղղակիորեն ազդում են եղանակային պայմանները, մասնավորապես տարվա ջրառատ կամ սակավաջուր լինելը: Սակայն, չնայած նշված փաստերին, ուսումնասիրելով դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում արտադրված Էլեկտրաէներգիայի ծավալները հիդրոէլեկտրակայանների կողմից արտադրված Էլեկտրաէներգիայի ծավալներին գուգահեռ, չենք տեսնում միտումների համաչափություններ կուցանիշների միջև: Դանշանակում է, որ հիդրոէլեկտրակայանները արտադրության ընդհանուր ծավալների վրա նշանակալի ազդեցություն չունեն: Ճիշտ հակառակ պատկերն է Ատոմակայանի դեպքում՝ այս օբյեկտի և երկրում արտադրված Էլեկտրաէներգիայի աճի և նվազման միտումները ընթանում են գրեթե գուգահեռ: Ատոմակայանը 2005թ. -ի 2716.3 կՎտժ արդյունքը⁹¹ չի ապահովել տաս տարի շարունակ՝ մինչ 2015թ. , իսկ 2012-2015թթ. չորս տարիների ընթացքում Ատոմակայանի արտադրած

⁸⁹ http://psrc.am/docs/reports/electric/MainCharateristics4Q_2005.pdf ՀԾԿՀ, Էլեկտրաէներգետիկական համակարգի 2005թ. հիմնական ցուցանիշները
⁹⁰ http://psrc.am/docs/reports/electric/EI_En_aragum_4_2010.pdf ՀԾԿՀ, տեղեկանք Էլեկտրաէներգետիկական համակարգի 2010թ. առաքված Էլեկտրակայան Էներգիայի (հզորության) վերաբերյալ
⁹¹ http://psrc.am/docs/reports/electric/MainCharateristics4Q_2005.pdf ՀԾԿՀ, Էլեկտրաէներգետիկական համակարգի 2005թ. հիմնական ցուցանիշները

Էլեկտրաէներգիայի ծավալի տեսակարար կշիռը հետզհետեւ աճել է 28.76%-ից հասնելով 35.75%-ի: Սա նշանակում է, որ մեծանում է Էլեկտրաէներգետիկական համակարգի կախվածությունը մեկ արտադրողից: Հաշվի առնելով նաև Ատոմակայանի «մեծ տարիքը» և մաշվածության աստիճանը, հիմք ունենք եզրակացնելու, որ սա մեծ վտանգ է երկրի էներգետիկ անվտանգության տեսանկյունից:

Դիտարկվող ժամանակահատվածում Էլեկտրաէներգիա արտադրող կազմակերպությունների արտադրած Էլեկտրաէներգիայի ծավալների էական կառուցվածքային տեղաշարժեր են արձանագրվել: 2015թ. -ի դրությամբ Էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում մեծացել է ՀԱԵԿ-ի տեսակարար կշիռը դիտարկվող ժամանակահատվածում տեսակարար կշիռը կազմել է միջինում 37.69% (տես՝ հավելված 7): Տեսակարար կշիռի ամենամեծ տատանումներն արձանագրվել են ՋԵԿ-երի մոտ: Ամենացածր՝ 19.9% տեսակարար կշիռը գուցանիշը արձանագրվել է 2009թ.-ին՝ պայմանավորված ինչպես նախորդ տարվանկատմամբ ՋԵԿ-երի կողմից արտադրված Էլեկտրաէներգիայի 38.4% կրճատմամբ, այնպես էլ ՀԵԿ-երի արտադրած Էլեկտրաէներգիայի 12.23% աճով: ՋԵԿ-երի պատկերն ավելի ամբողջական ներկայացնելու նպատակով նշենք, որ դրանց կողմից առաքված Էլեկտրաէներգիայի ինքնարժեքի թանկ լինելու պատճառով հնարավորինս քիչ ծավալով Էլեկտրաէներգիա է առաքվում, բացառությամբ Երևան ՋԵԿ-ի նոր շոգեգազային էներգաբլոկով արտադրված Էլեկտրաէներգիայի, որի գինը մրցունակ է համարվում⁹²: Այդ փոփոխություններով պայմանավորված ՀԵԿ-երի տեսակարար կշիռը 3.85 տոկոսային կետով աճել է 2009թ. նկատմամբ: 2011թ. պատկերը կտրուկ փոխվել է: ՀԵԿ-երի արտադրած Էլեկտրաէներգիայի ծավալների փոփոխությունը այդքան էլ էական չէ, չնայած շատ կարևոր է նշել, որ զգալի աճել են փոքր կայանների կողմից արտադրված Էլեկտրաէներգիայի ծավալները, նույնիսկ այն պարագայում, երբ 2015թ. ՄԵԿ-ի և Որոտանի գումարային արտադրանքը էականորեն չի փոխվել, փոքր կայանների արտադրանքը աճել է 21.9%-ով: Ի դեպ միայն ՓՀԵԿ-երի


⁹²Նոր էներգաբլոկը գործում է 2010թ. -ից

ցուցանիշներն են, որ դիտարկվող ողջ ժամանակաշրջանում մշտապես աճել են, եթե 2005թ. -ին ՓՅԿ-երը արտադրել են 225800 կվտժ, ապա 2015թ. արտադրվել է 3.7 անգամ ավել էլեկտրաէներգիա: ՓՅԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի աճը պայմանավորված է նաև դրանց թվի աճով:

Դիտարկվող ժամանակահատվածում Ատոմակայանի միջին տեսակարար կշիռը 37.6% է, ՁԵԿ-երինը 38.2%, ՅԵԿ-երինը 24.2%: Սա խոսում է էլեկտրաէներգետիկ շուկայի տարբերակված լինելու մասին Ատոմակայան, ՁԵԿ, ՅԵԿ տեսակներով: Նման պնդումը, կարծես թե, այդքան էլ հիմնավոր չէ, քանի որ մեր կողմից կատարված հաշվարկները փաստում են, որ չնայած արձանագրված դրական տեղաշարժերին 2015թ., 2005թ. -ի նկատմամբ ՅԵՐՖինդալ Յիրշմանի գործակիցի ցուցանիշը բարելավվել է: Այն դիտարկվող ժամանակահատվածում գրեթե միշտ գերազանցել է 2500 սահմանաչափը, որը փաստում է, որ շուկայի կենտրոնացվածությունը բարձր է: 2011-2015թթ ՅԵՐՖինդալ Յիրշմանի գործակիցը գտնվել է 2000-2500 միջակայքում, փաստելով շուկայի միջին կենտրոնացվածությունը, այնուամենայնիվ ցուցանիշը ավելի մոտ է բարձր համակենտրոնացման շեմին (տես հավելված 8): Այս դիտարկման լույսով հիմք ունենք եզրակացնելու, որ կենտրոնացվածության բարձր աստիճանը կարևոր հիմնախնդիր է, հատկապես, էներգետիկ անվտանգության տեսանկյունից:

ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի ներկա վիճակի ընդգրկուն վերլուծության համար անհրաժեշտ է դիտարկել նաև ՀՀ և հարևան երկրներ արտահանված և ներմուծված էլեկտրաէներգիայի ծավալների փոփոխությունները և սպառման կառուցվածքը վերջին տասնյոթ տարիների ընթացքում:

Դիտարկվող ողջ ժամանակահատվածում արտադրված էլեկտրաէներգիայի ոչ զգալի մասն է օգտագործվում բնակչության կողմից:




Գծապատկեր 2.4 2005-2015թթ. Բնակչության կողմից սպառված

Էլեկտրաէներգիայի ծավալների հարաբերությունը սպառման հետ


ճիշտ է, մինչև 2010թ, բնակչության կողմից սպառվող էլեկտրաէներգիայի տեսակարար կշիռը աճել է, սակայն 2010թ.-ից նկատվել տեսակարար կշռի նվազում: Մինչդեռ մինչև 2013 թ. բնակչության կողմից սպառվող էլեկտրաէներգիայի ծավալներն աճել են:

Յետաքրքրական է նաև դիտարկել էլեկտրաէներգիայի տարեկան սպառումը ըստ սպառողների խոշորացված խմբերի:



Գծապատկեր 2.5. «Յայ աս տան ի Էլ Ե կ տր ակ ան ց ան ց եր» ՓԲԸ-ի կողմից մատակարարված Էլ Ե կ տր ակ ան Եր գ ի ան (ը ս տ ս պ առ ո ղ ն եր ի խ շ ո Ր ա ց վ ած խ մ ք եր ի) 2017թ. ⁹³

Ինչպես երևում է գծապատկեր 2.5-ից «ՅԷՑ» ՓԲԸ Էլ Ե կ տր ակ ան Եր գ ի այ ի ս պ առ մ ան հ ի մ ն ակ ան ս ե կ տ ո Ր ը ք ա ժ ի ն Է ը ն կ ն ու մ ք ն ակ չ ու թ յ ան ը , ար դ յ ու ն ա ք եր ու թ յ ան ը և այ լ ս պ առ ո ղ ն եր ի ն : Ի ս կ ք յ ու ջ Ե տ այ ի ն կ ա զ մ ակ եր պ ու թ յ ու ն ն եր ի , ո ռ ո գ մ ան , տր ան ս պ ո Ր տ ի ու ջր ան Ե ա ց մ ան ս պ առ ու մ ն ու ն ի հ ամ Ե մ ատ ա ք ար փ ո ք Ր տ Ե ս ակ ար ար կ շ ի ո :



Գծապատկեր 2.6. «Յայ աս տան ի Էլ Ե կ տր ակ ան ց ան ց եր» ՓԲԸ-ի կողմից մատակարարված Էլ Ե կ տր ակ ան Եր գ ի ան (ը ս տ ս պ առ ո ղ ն եր ի խ շ ո Ր ա ց վ ած խ մ ք եր ի) 2003, 2008, 2011 և 2017թթ. ⁹⁴

⁹³ http://psrc.am/images/docs/reports/electric/2017/4-er/Himnakan_bnutagrer_2017-4.pdf 2017թ. Էլ Ե կ տր ակ ան Եր գ ի այ ի ար տ ա դ Ր ու թ յ ան հ ի մ ն ակ ան ք ն ու լ թ ա գ Ր եր ի Յ Ծ Կ Յ պ ա շ տ ո ն ակ ան հ Ր ա պ ս ար ակ ու մ

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տարեկան պաշտոնական հրապարակումների տվյալներից պարզ է դառնում, որ ՀՀ տնտեսական զարգացման տարբեր շրջափուլերում «ՀԵՑ» ՓԲԸ կողմից մատակարարված էլեկտրաէներգիայի սպառման ծավալային կառուցվածներում էական փոփոխություններ չեն արձանագրվել, անգամ 2009թ. տնտեսական ճգնաժամից տարիներ առաջ և հետո:

Դիտարկվող ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի արտահանումը փոփոխությունների կայուն միտում չի դրսևորել, իսկ 2009-2010թթ. արտահանման կտրուկ աճը պայմանավորվել է 2009թ-ին ստորագրված Իրան-Հայաստան գազ-էլեկտրաէներգիա փոխանակության պայմանագրով:

Աղյուսակ 2.9

ՀՀ և հարևան երկրներ արտահանված և ներմուծված էլեկտրաէներգիայի ծավալների փոփոխությունը 2000-2015թթ. ընթացքում (Կվտժ)⁹⁵

Էլ. Էներգիա	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008
Արտադրված	5958.6	5744.8	5518.8	5500.9	6030	6316.9	5941.3	5897.6	6114.4
Ներմուծված	352	330.2	306.2	306.7	259.7	337.6	354.9	418.7	343.4
Արտահանված	814.8	700.9	659.9	583.1	1012.3	1151.1	754.5	451.3	359.6
Էլ. Էներգիա	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Արտադրված	5671.5	6491	7433	8036	7710	7750	7798	7315.3	7762.9
Ներմուծված	291.1	246	301	98	198	191	174	272.6	319.5
Արտահանված	336	1061	1383	1696	1226	1236	1424	1226.4	1439.6


Իսկ ներմուծումը վերջին տարիներին հետզհետե նվազել է՝ 2006-2015թթ. կրճատվելով ավելի քան 50%-ով: 2015թ. ներմուծվել է ընդամենը 174000Կվտժ էլեկտրաէներգիա: ՀՀ-ում արտադրված էլեկտրաէներգիայի ծավալները վերջին 10 տարիներին կայուն

⁹⁴ <http://psrc.am/am/sectors/electric/reports> էլեկտրաէներգիայի արտադրության հիմնական բնութագրերի ՀԾԿՀ պաշտոնական հրապարակումներ 2003, 2008, 2011 և 2017թթ.

⁹⁵ <http://psrc.am/am/sectors/electric/reports> 2000-2017թթ. էլեկտրաէներգիայի արտադրության հիմնական բնութագրերի ՀԾԿՀ պաշտոնական հրապարակումներ

կերպով աճել են, իսկ 2012թ. կուլ միևնույն 80364վտ/ժ ցուցանիշը նույն թվականին գործարկված, «Գազարոմ Արմենիա» ՓԲԸ-ի սեփականություն հանդիսացող, «Հրազդան-5» կայանի 440 ՄՎտ հզորություն ունեցող շոգեգազային էներգաբլոկի արդյունքն է:


Հետզհետեամային տարիներին արդյունաբերության մեջ մեծ տեսակարար կշիռ ունեցող «ճյուղերում» արտադրողականության ցուցանիշի հերթականության էական փոփոխություն տեղի չի ունեցել: Դիտարկվող ժամանակահատվածում արտադրողականության ամենաբարձր մակարդակը արձանագրվել է մետաղական արտադրությունում, բացառությամբ 2014թ. -ին, երբ էլեկտրաէներգիայի արտադրության արտադրողականությունը գերազանցել է մետաղական հանքաքարի արդյունաբերության ցուցանիշը: Էլեկտրաէներգիայի արտադրողականության աճի տրենդը հիմնականում դրական է թեքված: 2016թ. էականորեն աճել է մետաղական հանքաքարի արդյունաբերության արտադրողականությունը (Տես հավելված 9):



Գծապատկեր 2.7 2009-2016թթ. արդյունաբերության տարբեր ճյուղերի արտադրողականությունը ընթացիկ գներով⁹⁶

⁹⁶ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2016, էջ 58
 ՀՀ ԱՎՃ, արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման
http://armstat.am/file/article/5nish_2_2010.pdf, էջ 78
http://armstat.am/file/article/5nish_12_2012.pdf էջ 83
http://www.armstat.am/file/article/5nish_12_2014.pdf էջ 83
<http://www.armstat.am/file/article/5nish-12-2015.pdf> էջ 98


Վիճակագրական տվյալները փաստում են, որ տնտեսության տարբեր ոլորտներում արտադրողականության ցուցանիշները միմյանցից էականորեն տարբերվում են: ՀՀ-ում աշխատանքի արտադրողականության ամենաբարձր մակարդակը գրանցվել է արտահանման ուղղվածությամբ ճյուղերում, ինչպես նաև այն ոլորտներում, որտեղ զգալի է օտարերկրյա սեփականության առկայությունը:



Գծապատկեր 2.8 Աշխատանքի արտադրողականությունը 2015թ. (մեկ աշխատողի հաշվով ավելացված արժեք, ՀՀ դրամ)⁹⁷

Արտադրողականության բարձր մակարդակը բացատրվում է նաև այդ ոլորտներում կառավարման ժամանակակից մոտեցումներով և աշխատուժի ներուժի օգտագործման առավել բարձր արդյունավետությամբ: Այն հայտ է, որ առանձին ոլորտներում արտադրողականության մակարդակները և տնտեսության կառուցվածքի առանձնահատկությունները հսկայական ազդեցություն ունեն տնտեսության մեջ արտադրողականության ընդհանուր մակարդակի վրա: Նշվածը հիմնավորելու համար ներկայացնենք աշխատուժի բաշխումը տնտեսության ճյուղերի միջև:

⁹⁷ <http://www.armstat.am/file/article/5nish-12-2015.pdf> ՀՀ ԱՎՃ, արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման էջ 98



Գծապատկեր 2.9 Չբաղվածներն ըստ տնտեսական գործունեության խմբերի 2006-2015թթ.⁹⁸

Այս դիրտարկման լույսով հիմք ունենք եզրակացնելու, որ ՀՀ աշխատանքի շուկայի կառուցվածքն ուրվագծում է աշխատուժի անարդյունավետ բաշխումը տնտեսության ճյուղերի միջև: Ներկայումս ՀՀ երեք ամենաարտադրողական ոլորտներին (\$ինանսական միջնորդություն, հանքարդյունաբերություն և շինարարություն) բաժին է ընկնում երկրում ընդհանուր զբաղվածության ընդամենը 9%-ը: Միևնույն ժամանակ, աշխատուժի գրեթե կեսը կենտրոնացած է արտադրողականության ամենացածր մակարդակ ունեցող երեք ոլորտներում (կացության և հանրային սննդի կազմակերպում, գյուղատնտեսություն և կրթություն):

2.2 Էներգետիկայի և տնտեսության մյուս ոլորտների միջև կոռելացիոն կապերը ՀՀ-ում

Էներգետիկ բնագավառի ներքին խնդիրները բացահայտելու համար, նախևառաջ անհրաժեշտ է ուսումնասիրել դրանք առաջացնող և լուծման հնարավոր պայմաններ ապահովող մակրոմիջավայրը: Ուստի Էներգետիկայի և տնտեսության մյուս ճյուղերի՝

⁹⁸ <http://armstat.am/file/doc/99499388.pdf> ՀՀ Վիճակագրական տարեգիրք 2016 – Չբաղվածություն, էջ 59
<http://armstat.am/file/doc/99466628.pdf> ՀՀ Վիճակագրական տարեգիրք 2011 – Չբաղվածություն էջ 57

գյուղատնտեսության, հանքագործական արդյունաբերության, մշակող արդյունաբերության, շինարարության, մեծածախ և մանրածախ առևտրի, փոխադրումների և պահեստային տնտեսության, կացության և հանրային սննդի կազմակերպման, տեղեկատվության և կապի, ֆինանսական և ապահովագրական գործունեության, կամ, առհասարակ տնտեսության ճյուղերի միջև եղած փոխադարձ կապերի ու սուբմնասիրությունն ու դրանց ամրության աստիճանի գնահատականը կարևորվում են:


Էներգետիկայի ոլորտում իրականացվող քաղաքականությունը ուղղված է երկրի էներգետիկ անկախության ապահովմանն ու անվտանգության բարձրացմանը, առումային էներգետիկայի հետագա զարգացմանը, էներգակիրների մատակարարման դիվերսիֆիկացմանը և տեղական առաջնային (վերականգնվող, այլընտրանքային) էներգաապառարկների լիիրավ օգտագործմանը և էներգախնայողության ժամանակակից միջոցների իրականացմանն ու նոր տեխնոլոգիաների ներդրմանը⁹⁹:

Սակայն Էլեկտրաէներգետիկական համակարգի հետագա զարգացման տեսակետից ճիշտ որոշումների ընդունումն ժամանակ պետք է հաշվի առնել հատկապես էներգետիկ շուկայի առաջարկի և պահանջարկի համապատասխանության ապահովման կարևորությունը:

ՀՀ համախառն ներքին արդյունքը 2009թ. -ին մոտ 14% բեկումնային անկումից հետո ունի կայուն աճի միտում և 2005թ. -ի ցուցանիշի նկատմամբ 2016-ին գրեթե կրկնապատկվել է՝ հասնելով 5079864.6 մլն դրամի¹⁰⁰:

⁹⁹ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն 2014-2016 թվականների միջնամակետ ծախսային ծրագիր էջ 1

¹⁰⁰ Armstat.am - Համախառն ներքին արդյունք, շուկայական գներով, մլն. դրամ / 2017 (<http://armstat.am/am/?nid=126&id=01001&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%A5> C)




Գծապատկեր 2.10 Համախառն ներքին արդյունք, շուկայական գներով, իրական ՀՆԱ աճի տեմպերը. Դրամ

ՀՀ արտադրված էլեկտրաէներգիայի տարեկան ծավալները նույնպես ունեցել են աճման միտում՝ 2016թ. -ին հասնելով 7.3մլրդ. կվտժ.¹⁰¹: ՀՆԱ-ի և ՀՆԱ-ի մաս կազմող էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների միջև առկա փոփոխությունների միջև առկա օրինաչափությունները բացահայտելու նկատառումով ներկայացնենք ՀՆԱ-ի և էլեկտրաէներգիայի աճի տեմպերը նախորդ տարվա նկատմամբ: Էլեկտրաէներգիայի արտադրության և ՀՆԱ-ի միջև կապը բացահայտելու և գնահատելու համար օգտվել ենք ՀՀ ԱՎԾ կայքի՝ «արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման» հրապարակման՝ էլեկտրաէներգիայի արտադրության մասին տվյալները¹⁰²:

¹⁰¹

<http://armstat.am/am/?nid=126&id=02004&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%A> ՀՀ ԱՎԾ, էլեկտրաէներգիայի արտադրությունը, մլն. կվտ. ժամ / 2017

¹⁰² <http://www.armstat.am/file/article/5nish-06-2016.pdf> ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայք, էջ 73 կետ 35.1



Գծապատկեր 2.11. Էլեկտրաէներգիայի արտադրող ունեւոր (աշխատանքների, ծառայող ունեւորների) ծավալը ընթացիկ գներով (հազ.դրամ)

Գծապատկեր 2.11-ի տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ այս դեպքում ևս գրանցվել է կայուն աճ մինչև 2015թ.: Կարելի է նկատել, որ ՀՆԱ-ի և էլեկտրաէներգիայի ծավալների փոփոխություններն օրինաչափ են: Դեռ ավելին՝ ՀՆԱ-ի¹⁰³ և էլեկտրաէներգիայի արտադրողան ծավալների¹⁰⁴ միջև առկա է բարձր կոռելյացիա՝ գործակիցը շատ բարձր է՝ 0.96: Չնայած նրան, որ վերջին հինգ տարիներին էլեկտրաէներգիայի արտադրողան ծավալը չի գերազանցել ՀՀ ՀՆԱ-ի 2.8%-ը, էլեկտրաէներգետիկական համակարգն առանցքային նշանակություն ունի ՀՀ տնտեսական համակարգում՝ տնտեսական զարգացման տեսանկյունից:

Կարևորելով այն, որ յուրաքանչյուր ոլորտի ներքին խնդիրները բացահայտելու համար, նախևառաջ Լանհրաժեշտ է ուսումնասիրել դրանք պայմանավորող մակրո միջավայրը, փորձել ենք բացահայտել էներգետիկ համակարգի և տնտեսության մյուս ճյուղերի, միջև եղած փոխադարձ կապերը: Այդ կապերը

¹⁰³

<http://armstat.am/am/?nid=126&id=02004&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%A C 2009-2016թթ. ՀՀ ԱՎԾ կայքի հրապարակումները ՀՀ ՀՆԱ վերաբերյալ>

¹⁰⁴ <http://armstat.am/am/?nid=126&id=01001 2009-2016թթ. ՀՀ ԱՎԾ կայքի հրապարակումները ՀՀ-ում էլեկտրաէներգիայի արտադրողան վերաբերյալ>

ուսումնասիրելու և ներկայացնելու համար օգտվել ենք տնտեսական գործունեության տեսակների ՀՀ դասակարգչի երկրորդ խմբագրությանը:

Վիճակագրական տվյալները վերցված են ՀՀ Կենտրոնական բանկի կայքի «վիճակագրություն» բաժնի «իրական հատվածի վիճակագրություն» ենթաբաժնից¹⁰⁵: Իրականում, վերլուծության իրականացման արդեն սկզբնական փուլում առաջանում են բավականին լուրջ խնդիրներ՝ կապված վիճակագրական տվյալների շարքի երկարության հետ, ինչն էլ ավելի է բարդանում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տասնամյակի ընթացքում մի քանի անգամ փոփոխվել է արտադրական եղանակով հաշվարկվող ՀՆԱ-ի մեթոդաբանությունը, այսինքն վիճակագրական շարքի մեջ առաջանում է մի քանի կառուցվածքային բաժանում:

Նշված հանգամանքով պայմանավորված, տարեկան տվյալների օգտագործումը դառնում է գործնականում անհնարին, չնայած, հասկանալի է, որ ճյուղերի միջև հատկապես լագային փոխազդեցությունները առավել հստակ կարող էին երևալ տարեկան տվյալների հիման վրա: Եռամսյակային տվյալներ օգտագործելիս առաջանում են այլ վիճակագրական խնդիրներ (օրինակ՝ սեզոնայինություն), սակայն դիտարկումների քանակը որոշակիորեն ավելանում է: Շղթայակապի նդեքսների օգտագործման միջոցով հնարավոր է դարձել համադրել 2011-2014թթ. և 2015-2016թթ. եռամսյակային տվյալները (բացառությամբ 2016 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների):

Տնտեսության ճյուղերի միջև փոխկապվածությունը և դրանց ամրության աստիճանը բացահայտելու համար իրականացրել ենք կոռելյացիոն վերլուծություն (տես՝ աղյուսակ 2.10): Արդյունքները ներկայացված են Պատերսոնի կոռելյացիոն մատրիցի միջոցով:

¹⁰⁵Արտադրական եղանակով հաշվարկված ՀՆԱ-ի բաղադրատարրերն ըստ Տնտեսական գործունեության տեսակների Հաստատված Հանրապետության դասակարգչի 2-րդ խմբագրության (ՏԳՏՀԴ խմբ. 2)՝ եռամսյակային - <https://www.cba.am/am/SitePages/statrealsector.aspx>

Աղյուսակ 2.10: Տնտեսության ճյուղերի միջև փոխկապվածության Պատրսոնի կոռելյացիոն մատրից¹⁰⁶ (տես հավելված 10)

		A	B	C	D	F	G	H	I	J	K	L	M	N	P	Q
A	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	1														
B	Հանքագործականարդյունաբերություն և բացահանքերիչահագործում	0.49	1													
C	Մշակվողարդյունաբերություն	0.67	0.42	1												
D	Էլեկտրականության, գազի, գոլորշու և ավորակօդի մատակարարում	-0.01	-0.16	0.33	1											
F	Շինարարություն	0.68	0.56	0.79	0.12	1										
G	Մեծածախ և մանրածախ առևտուր	0.72	0.34	0.84	0.40	0.87	1									
H	Փոխարդյուններ պահեստային տնտեսություն	0.79	0.46	0.64	0.01	0.59	0.66	1								
I	Կացության հանրային սննդի կազմակերպում	0.56	0.46	0.74	0.43	0.39	0.49	0.46	1							
J	Տեղեկատվություն և կապ	0.45	0.35	0.74	0.48	0.41	0.58	0.51	0.80	1						
K	Ֆինանսական ապահովագրական գործունեություն	0.35	0.35	0.59	0.53	0.24	0.44	0.55	0.77	0.79	1					
L	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	0.06	-0.03	0.45	0.66	-0.03	0.22	0.11	0.72	0.69	0.75	1				
M	Մասնագիտական, տեխնիկական գիտական և գիտական գործունեություն	0.45	0.40	0.87	0.44	0.72	0.72	0.43	0.71	0.75	0.57	0.53	1			
N	Վարչարարական օժանդակ գործունեություն	0.39	0.28	0.75	0.66	0.38	0.53	0.38	0.91	0.84	0.79	0.84	0.81	1		
P	Կրթություն	0.70	0.58	0.90	0.36	0.84	0.83	0.67	0.76	0.74	0.60	0.43	0.91	0.78	1	
Q	Առողջապահություն	0.68	0.42	0.92	0.53	0.82	0.92	0.63	0.73	0.73	0.62	0.48	0.87	0.78	0.94	1
$r < 0.4 \rightarrow$		$ 0.4 \leq r < 0.6 \rightarrow$				$ 0.6 \leq r < 0.8 \rightarrow$			$r \geq 0.8 \rightarrow$							

¹⁰⁶Այս տեղ, ծավալային սահմանափակումից ելնելով, ներկայացված են ՀՆԱ-ում համեմատաբար մեծ կշիռ ունեցող ճյուղերը:









Ուշագրավ է Էներգետիկայի և գյուղատնտեսության, ինչպես նաև հանքագործական արդյունաբերության և բացահանքերի մշակման ոլորտների միջև, թեկուզև թույլ, բայց բացասական կապը: Իրականում, տնտեսության ճյուղերի միջև կապերը շատ բազմազան են և դրանք ճշգրիտ մեկնաբանելը բավականին բարդ է, առավել ևս, երբ ճյուղերը միմյանց վրա ազդեցություն են ունենում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն: Այսպես, մեկ ճյուղում ներդրումների աճը կարող է ուղղակիորեն էլեկտրաէներգիայի լրացուցիչ պահանջարկ ստեղծել ինչպես այդ ճյուղի կողմից, այնպես էլ անուղղակիորեն մեծացնել պահանջարկը այլ ճյուղերի կողմից՝ բազմարկչային էֆեկտի շնորհիվ: Այնուամենայնիվ վերոնշյալ ճյուղերի միջև բացահայտված բացասական կապը վիճելի է:

Բավականին թույլ է կապը Էներգետիկայի և մշակող արդյունաբերության, շինարարության և կրթության միջև, կազմելով համապատասխանաբար 0.33, 0.12 և 0.36, իսկ Էներգետիկայի և փոխադրումների և պահեստային տնտեսության միջև կապը զրոյական է: Իհարկե, մշակող արդյունաբերությունը Էներգետիկ ոլորտի համար խոշորագույն պատվիրատուներից է, ինչպես և շինարարության ոլորտը, այնպես, որ այս ոլորտների միջև պետք էր ակնկալել ավելի ուժեղ կապ: Մյուս ոլորտների և Էներգետիկայի միջև կապերը համեմատաբար ավելի ամուր են, սակայն ստացված գործակիցների արժանահավատության վերաբերյալ գնահատական տալն ավելի բարդ է՝ ոլորտների միջև հիմնականում անուղղակի կապերի հետևանքով:

Չաշվի առնելով վերոնշյալ բոլոր դատողությունները, եզրահանգել ենք, որ ճյուղերի միջև՝ աղյուսակ 2.10-ում ներկայացված կոռելյացիոն կապերը արժանահավատ չեն: Քանի որ տվյալները եռամսյակային են և որոշները ունեն խիստ սեզոնային կոմպոնենտ, և սեզոնային հարթումը կարող է ամբողջապես փոխել պատկերը, ուստի իրականացրել ենք վիճակագրական շարքերի սեզոնային հարթեցում¹⁰⁷ (տես՝ հավելված 11): Որպես վիճակագրական

¹⁰⁷Սեզոնային հարթեցումն իրականացված է Eviews 9 ծրագրային փաթեթի Census X12 գործիքի միջոցով:

շարքի սեզոնային հարթման օրինակ ներկայացնենք տնտեսության վեց խոշորագույն ճյուղերի թվային շարքերի փոփոխությունը սեզոնային հարթումից առաջ և հետո:



Գծապատկեր 2.12: Թվային շարքերի սեզոնային հարթեցում

Գծապատկեր 2.12-ից ակնհայտ է, որ փաստացի և սեզոնային հարթեցված շարքերի միջև տարբերությունը մեծ է, որոշ դեպքերում՝ օրինակ գյուղատնտեսություն, շինարարություն, առևտուր, ինչպես և ենթադրվում էր՝ առեւելի:

Թվային շարքերը սեզոնայնորեն հարթելուց հետո, ոլորտների միջև կոռելյացիոն կապերի ամրությունը բացահայտելու համար կրկնել ենք նախորդիվ իրականացրած քայլերը՝ ակնկալելով «ավելի լավ» արդյունք (աղյուսակ 2.11)

Աղյուսակ 2.11 Տնտեսության ճյուղերի միջև փոխկապվածության Պատերսոնի կոռելյացիոն

		A	B	C	D	F	G	H	I	J	K	L	M	N	P	Q
A	Գյուղատնտեսություն, անտ. և ձկն.	1														
B	Հանքագործական արդյ. և բացահանքեր իշահագործում	0.03	1													
C	Մշակվող արդյունաբերություն	0.34	-0.15	1												
D	Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	0.55	0.17	0.55	1											
F	Շինարարություն	-0.09	0.26	-0.60	-0.32	1										
G	Մեծածախ և մանրածախ առևտուր	0.28	-0.02	0.67	0.63	-0.60	1									
H	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	0.01	0.11	0.30	0.06	-0.29	0.30	1								
I	Կացության և հանրային սննդի կազմակերպում	0.54	0.05	0.75	0.88	-0.56	0.79	0.26	1							
J	Տեղեկատվություն և կապ	0.24	0.05	0.75	0.66	-0.55	0.75	0.36	0.83	1						
K	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	0.49	0.18	0.66	0.69	-0.46	0.78	0.59	0.82	0.78	1					
L	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	0.53	-0.13	0.78	0.79	-0.61	0.84	0.24	0.91	0.76	0.78	1				
M	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	0.56	-0.11	0.75	0.64	-0.41	0.60	0.18	0.83	0.78	0.63	0.79	1			
N	Վարչարարական և օժանդակ գործունեություն	0.55	0.02	0.78	0.85	-0.55	0.71	0.25	0.97	0.80	0.78	0.92	0.84	1		
P	Կրթություն	0.49	0.12	0.68	0.73	-0.44	0.62	0.40	0.89	0.77	0.77	0.84	0.82	0.93	1	
Q	Առողջապահություն և բնակչության սոցիալական ապաստարկում	0.50	0.05	0.76	0.85	-0.62	0.79	0.31	0.95	0.81	0.80	0.92	0.78	0.94	0.85	1

մատրից (սեգ. հարթված)


Աղյուսակ 2.11-ի տվյալներից ակնհայտ է, որ Էներգետիկայի և տնտեսության մյուս ճյուղերի միջև կապերը բավականին ամուր են: Մասնավորապես, Էներգետիկայի և գյուղատնտեսության միջև կոռելյացիան այժմ 0,55 է՝ նախկին -0,01-ի դիմաց: Իհարկե, 0,55-ը շատ բարձր ցուցանիշ է, սակայն, ի սկզբանե, այս երկու ճյուղերի միջև ավելի բարձր կոռելյացիա սպասել պետք չէր, քանի որ գյուղատնտեսությունը հիմնականում անուղղակիորեն է նպաստում Էներգետիկ ոլորտի աճին կամ ազդեցությունը լագային է: Նույն մակարդակի վրա է նաև կապը մշակող արդյունաբերության և Էներգետիկայի միջև:

Չնայած որ թույլ, բայց այնուամենայնիվ, դրական է դարձել նաև Էներգետիկայի և հանքարդյունաբերության միջև կոռելյացիոն կապը (0.16), ինչը սպասելի էր: Վերջին երկու ճյուղերը Էլեկտրաէներգիայի խոշորագույն սպառողներից են Յայաստանի Յանրապետությունում:

Բավականին հետաքրքրական է կապը շինարարության և Էներգետիկայի միջև: Տեսականորեն, այս երկու ճյուղերի միջև պետք է ենթադրել ամուր դրական կապ, սակայն, արդյունքները խոսում են հակառակ պատկերի մասին՝ կապը թույլ է և բացասական: Սա բացատրվում է նրանով, որ վերջին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո շինարարության ոլորտը ՀՀ-ում շարունակական և զգալի անկում է ունեցել, սակայն, քանի որ, շինարարության ոլորտի կողմից սպառումը Էներգետիկայի համախառն թողարկման մեջ էական կշիռ չունի, տնտեսության մյուս ճյուղերի կողմից պահանջարկի աճի շնորհիվ ետճգնաժամային ժամանակահատվածում Էներգետիկ ոլորտը ցուցաբերել է աճման միտում: Այսպիսով, դիտարկվող ժամանակաշրջանում մեծամասամբ այս երկու ճյուղերի փաստացի ցուցանիշների շեղումները միջինից տարբեր ուղղությամբ են եղել, ինչը և արտացոլված է կոռելյացիոն մատրիցում:

Ընդհանուր առմամբ, սերտ է նաև կապը Էներգետիկայի և տնտեսության մյուս ճյուղերի միջև, որոնք խմբավորել ենք ‘‘ ծառայությունների’’ ներքո: Խմբավորել ենք նաև մշակող արդյունաբերությունը և հանքարդյունաբերությունը

‘ ‘ արդյունաբերության ’ ’ ներքո: Ամփոփենք ոլորտների միջև կոռելյացիոն կապը՝ հաշվի առնելով նաև լագային կապերը :



Գծապատկեր 2.13 Էներգետիկայի և մյուս ճյուղերի միջև լագային կոռելյացիան (տես հավելված 12).

Գծապատկեր 2.13-ը ներկայացնում է կոռելյացիոն կապերը տարբեր լագերում, և քանի որ, տվյալները եռամսյակային են, նախընտրել ենք +/- 4 լագային միջակայքը՝ ճյուղերի միջև կապերը մինչև մեկ տարի առաջ և մինչև մեկ տարի հետո հասկանալու նկատառումով: Արդյունքները բավականին հետաքրքրական են: Այսպես, շինարարության ոլորտի հետ կապը բոլոր լագերում բացասական է, սակայն այդ բացասական կապը էլ ավելի է ամրանում, երբ շարժվում ենք մեկ տարի առաջ: Այսինքն, տվյալ ժամանակային շարքի օգտագործմամբ ստացվում է, որ, եթե այժմ շինարարությունում գրանցվի ժամանակային շարքի միջինից բարձր ցուցանիշ, ապա դա բացասականորեն պետք է ազդի Էներգետիկայի ցուցանիշի վրա առաջիկա մի քանի ժամանակահատվածներում և առավելագույնը՝ 4 եռամսյակ հետո (չորրորդ եռամսյակից հետո կոռելյացիոն կապը ուսումնասիրված չէ): Սակայն, ինչպես արդեն նշել ենք, սակայն ավելի է շինարարության ոլորտում վերջին տարիների կայուն անկման հետ, և ավելի երկար թվային շարք օգտագործելու դեպքում (օրինակ սկսած 2000-

ականների սկզբից), ըստ մեզ, կստացվի ամբողջովին հակառակ պատկեր: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, վերոնշյալ ժամանակաշրջանի թվային շարքերը հնարավոր չէ համադրել ներկայիս հետ, ինչը թույլ չի տալիս ավելի երկար շարքեր օգտագործել:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի կոռելյացիոն կապը էներգետիկայի և արդյունաբերության, ինչպես նաև առևտրի միջև: Ինչպես տեսնում ենք գծապատկեր 2.13-ից, առևտրի և էներգետիկայի միջև կոռելյացիոն կապը գնալով բարձրանում է, երբ տեղափոխվում ենք ժամանակային լագերով դեպի առաջ: Այսինքն, ամենաբարձր գործակիցը ստացվում է T+4 ժամանակահատվածում (մեկ տարի անց), ինչը նշանակում է, որ ներկայիս բարձր շրջանառությունը առևտրում հաջորդ չորս եռամսյակներում դեռևս դրականորեն է ազդում էներգետիկայի բնագավառում համախառն արտադրանքի աճի վրա, ընդ որում ամեն հաջորդ եռամսյակում ավելի զգալի, իսկ 4 եռամսյակ հետո կոռելյացիոն կապը շատ բարձր է՝ մոտ 0,85: Որպես բացատրություն փաստենք այն, որ առևտուրը արտահայտում է զարգացումները ընդհանուր տնտեսության նույնում, շատ սերտ կապված է բոլոր ճյուղերի հետ և առևտրի ոլորտում բարձր շրջանառությունը դրական ազդեցություն է ունենում բոլոր ճյուղերի վրա հաջորդ ժամանակաշրջաններում, որոնք ևս դրական ազդեցություն են ունենում էներգետիկ ոլորտի վրա: Այսպիսով, աճը առևտրում էներգետիկայի ոլորտի վրա ունենում է ուղղակի և անուղղակի ազդեցություն, ընդ որում անուղղակի ազդեցությունը միգուցե առավել զգալի է:

Փոքր ինչ տարբեր է կապը արդյունաբերության հետ: Այստեղ կապը ավելի ուժեղանում է, երբ տեղաշարժվում ենք դեպի հաջորդ եռամսյակներ, բայց կտրուկ թուլանում է երրորդ լագից հետո, սակայն դեռևս մնում է բարձր մակարդակի վրա: Նման պատկեր է նաև ծառայությունների դեպքում, սակայն այստեղ կոռելյացիան խորանում է մինչև երկրորդ լագը, այնուհետև փոքր ինչ թուլանում է, իսկ հետընթաց լագերում կապը գրեթե նույնն է:

Այս դիտարկման լույսով կարելի է եզրակացնել, որ էներգետիկայի բնագավառն ու էլեկտրաէներգետիկական համակարգն

իրենց ուրույն դերն ունեն ՅՅ տնտեսության զարգացման, էներգետիկ և տնտեսական անվտանգության ապահովման գործընթացում: Չնայած այն փաստին, որ էներգետիկան համարվում է տնտեսության մյուս ճյուղերի գործունեությունը սնուցող օղակներից մեկը, այնուամենայնիվ դրա հետ ուժեղ կամ թույլ փոխկապակցվածություն ունեցող այլ ճյուղերն ունեն տարատեսակ ազդեցություն ուսումնասիրվող բնագավառի վրա: Տնտեսության առանձին ճյուղերի և էներգետիկայի միջև կապերի մեր կողմց իրականացված խորը որակական և քանակական ուսումնասիրությունը հնարավոր է դարձնում մակրոմիջավայրում տեղի ունեցող զարգացումները պրոեկտել միկրոմիջավայր և կանխատեսել մեկ տարվա հորիզոնով էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկը՝ կախված տնտեսության առանձին ճյուղերի փաստացի և սցենարային զարգացումներից: Այսպիսով, էլեկտրաէներգիա արտադրող և բաշխող ընկերությունները կարող են կանխատեսել ինչպես էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկը, այպես էլ իրացման ծավալները:

2.3 Էլեկտրաէներգիայի արտադրության ֆունկցիոնալ կապը ՀՆԱ-ի աճից


Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի և լավորակ օդի նկատմամբ պահանջարկը՝ (պահանջարկ ներկայացնող ճյուղերի և էներգետիկայի միջև կապերի բացահայտման և գնահատման համար) մանրամասն ուսումնասիրելուց հետո, անդրադառնանք նաև վերոնշյալ ճյուղի համախառն առաջարկին: Ուսումնասիրության այս փուլում, որպես առավել պրոցիկլիկ փոփոխական, էներգետիկայի ճյուղից առանձնացրել ենք միայն էլեկտրաէներգիայի արտադրությունը և ուսումնասիրել էլեկտրաէներգիայի արտադրությունը կամ առաջարկը¹⁰⁸: Այսպիսով, քանի որ էլեկտրաէներգիայի առաջարկի աճը հիմնականում կախված

¹⁰⁸ Ջրի և գազի առաջարկը ուսումնասիրելը այս մասում մի փոքր նպատակահարմար է, քանի որ առաջինի սպառումը պարունակում է բավականին մեծ կոշտություն՝ կապված ֆիզիոլոգիական պահանջմունքների հետ, իսկ գազի սպառումը շատ ավելի կոռելացված է եղանակային պայմանների հետևյալսպիսով կարող է չհամընկնել տնտեսական ցիկլերի հետ

Ե տնտեսական աճից, վերլուծության այս մասում կներկայացնենք ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ արտադրության ֆունկցիոնալ կապը ՀՆԱ-ի աճից:

Ինչպես գրեթե բոլոր վերլուծություններում, որտեղ անհրաժեշտ է օգտագործել ՀՀ ՀՆԱ-ի երկար շարքեր, հատկապես եռամսյակային, առաջանում են բավականին լուրջ խնդիրներ՝ տարբեր տարիներում արժեքային մակրոցուցանիշների հաշվարկման այլ մեթոդոլոգիաների անցման պատճառով (վիճակագրական շարքերը դառնում են անհամատեղելի): Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայիս ուսումնասիրությունում մեզ հետաքրքիր են ցուցանիշների միջև ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ արտադրության փոփոխությունները, այլ ոչ զրանց մակարդակները, ինչպես նաև այն, որ մեթոդոլոգիաների փոփոխությունը մեծապես չեն ազդել ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ արտադրության/ՀՆԱ հարաբերակցության վրա, որոշ վերապահումներով, հնարավոր է օգտագործել 2005 թվականից մինչև 2017 թվականի երկրորդ եռամսյակի տվյալները¹⁰⁹: Արդյունքում ունենում ենք 50 դիտարկում:

Քանի որ տվյալները եռամսյակային են և պարունակում են ընդգծված սեզոնայինություն, ուսումնասիրության սկզբնական փուլում անհրաժեշտ է իրականացնել փոփոխականների սեզոնային հարթում¹¹⁰: Արդյունքները ներկայացված են ստորև.



Գծապատկեր 2.14:

Էլեկտրաէներգիայի արտադրության և ՅՆԱ-ի սեզոնային որոնք հարթված շարքերը, 2005-2017 շրջանում (տես հավելված 13):

Ինչպես երևում է գծապատկեր 2.14-ից, հարթեցման արդյունքում ցուցանիշների տատանողականությունը բավականին ճշգրտվում է՝ հատկապես համախառն ներքին արդյունքի դեպքում:

Չարկ է նշել, որ վիճակագրական շարքերը մոդելում օգտագործվելուց առաջ լոգարիթմվել են՝ մի շարք պատճառներով.

- Առաջին, լոգարիթմվելով փոփոխականները մենթկարող ենք այլևս ուշադրություն չդարձնել դրանց չափման միավորներին, քանի որ դրանք ստանում են տոկոսային արտահայտություն (ցույց են տալիս էլաստիկություն), իսկ կորերի գործակիցները՝ մասշտաբներից անկախ:
- Երկրորդ, երբ կախյալ փոփոխականը արժեքային է (այսինքն մշտապես մեծ է գրոյից), հավանականությունը, որ մոդելը, որում օգտագործված են լոգարիթմված ցուցանիշներ, կբավարարի դասական գծային մոդելների պայմանները հիմնականում ավելի մեծ է, քան լոգարիթմված չլինելու դեպքում: Խիստ դրական փոփոխականները հաճախ ունենում են պայմանական բաշխումներ, որոնք հետերոսկեդաստիկ են կամ շեղված (skewness), իսկ լոգարիթմումը հիմնականում լուծում է այս խնդիրները:
- Երրորդ, լոգարիթմումը փոքրացնում է ցուցանիշների տատանման չափերը, մեր դեպքում զգալիորեն, ինչը գնահատականները դարձնում է ավելի քիչ զգայուն միջինից շատ շեղվող կետերի նկատմամբ (outlayers):

Ներկայացնենք նաև սեզոնային որոնք հարթված և լոգարիթմված շարքերի միջև կապը, ինչը, ինչպես իհարկե պետք էր ենթադրել դրական է և բավականին ամուր:

Այլ ուսակ 2.12

ՅՆԱ-ի և էլեկտրաէներգիայի առաջարկի սեզոնային որոնք հարթված և լոգարիթմված շարքերի միջև կոռելյացիան (տես հավելված 14)

	ՀՆԱ	ԷԼ ԵԿՏՐՈՒԿԱԵՆԵՐԳԻՎՅԱԿ ԱՐՏԱՊՐՈՒԹՅՈՒՆ
ՀՆԱ	1	
ԷԼ ԵԿՏՐՈՒԿԱԵՆԵՐԳԻՎՅԱԿ ԱՐՏԱՊՐՈՒԹՅՈՒՆ	0.869942	1

Վերոնշյալ ցուցանիշների միջև որակական կապը պարզելուց հետո, կարելի է գնահատել ռեգրեսիոն հավասարում փոքրագույն քառակուսիների եղանակով՝ ցուցանիշների միջև քանակական կապը, ինչպես նաև դրանց նշանակալիությունը հասկանալու նպատակով: Արդյունքները ներկայացված են ստորև:

Աղյուսակ 2.13

ԷԼ ԵԿՏՐՈՒԿԱԵՆԵՐԳԻՎՅԱԿ ԱՐՏԱՊՐՈՒԹՅԱՆ ԷԼ ԱՍՏԻԿՈՒԹՅՈՒՆՆԸ
ՀԱՄԱԽԱՆՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻԳ (ՍԵՉՈՆՅԱԿ ԻՆՈՐԵՆ ԿԱՐԺՎԱԾ և
ԼՈՎԱՐԻԹՄՎԱԾ)¹¹¹

Dependent Variable (կախյալ փոփոխական): LOG_ELECTRICITY_SA				
Method(մեթոդ): Least Squares (փոքրագույն քառակուսիների)				
Sample (adjusted) (ընտրված (ճշգրտված)): 2005Q1 2017Q2				
Included observations: 50 after adjustments (ներառված դիտարկումներ՝ 50 ճշգրտումից հետո)				
Variable (փոփոխական)	Coefficient գործակից	Std. Error (ստ. շեղում)	t-Statistic (վիճակ.)	Prob. (հավան.)
C (կոնստանտ)	-7.731503	1.485399	-5.205	0.0000
LOG_GDP_SA	1.321085	0.108094	12.22161	0.0000
R-squared (քառակուսի)	0.756799			
Adjusted R-squared (ճշգրտված R քառակուսի)	0.751733			
S.E. of regression (սխալ անքննչի գումար)	0.196609	Akaike info criterion (ինֆորմացիոն հայտանիշ)		-0.376018
Sum squared resid (սխալների կառակուսիների գումար)	1.855452	Schwarz criterion (հայտանիշ)		-0.299537
Log likelihood (հավանականություն)	11.40044	Hannan-Quinn crit. (հայտանիշ)		-0.346893
F-statistic (վիճակագրական)	149.3678	Durbin-Watson stat (վիճակագրական)		0.596463
Prob(F-statistic)	0.0000			

¹¹¹ Ռեգրեսիոն հավասարումը գնահատված է “Eviews 9” ծրագրային փաթեթով:

հավանականայ ին	
----------------	--

Այս պիստով, ստացվում է հետևյալ ռեգրեսիոն հավասարումը.

$$\text{LOG_ELECTRICITY_SA} = -7.7315 + 1.321 * \text{LOG_GDP_SA}$$

Ինչպես երևում է ռեգրեսիոն հավասարման արդյունքներից, մոդելը շատ նշանակալի է (“F-statistic”-ը 0 է նույնիսկ ամբողջից չորս նիշ հետո), ստացված կորի գործակիցը և հաստատունը նույնպես շատ նշանակալի են (նույնիսկ 99 տոկոս և ավելի վստահելիության միջակայքում), իսկ կորի գործակիցը կազմում է մոտավորապես 1.3, ինչը նշանակում է, որ այլ հավասար պայմաններում, համախառն ներքին արդյունքի 1 տոկոս աճը միջինում պետք է հանգեցնի էլեկտրաէներգիայի առաջարկի 1.3 տոկոս աճի:

Այստեղ փոքր ինչ անհասկանալի է (չնայած բարձր նշանակալիությանը) հաստատունի (constant) բացասական լինելը, ինչը նշանակում է, որ այլ հավասար պայմաններում, անկախ փոփոխականի հաստատունության դեպքում էլեկտրաէներգիայի արտադրությանը պետք է նվազի:

Հաշվի առնելով նախորդ դիտարկումը, կարելի է գնահատել ռեգրեսիոն հավասարում առանց հաստատունի, դրա փոխարեն օգտագործելով էլեկտրաէներգիայի նախորդ տարվա նույն ժամանակահատվածի արտադրությանը (քանի որ տվյալները եռամսյակային են, ստացվում է 4 լագ): Այստեղ հիպոթեզը հետևյալն է. ծառայությունն մատուցող ընկերությունները տվյալ եռամսյակում առաջարկ ներկայացնելիս հիմնվում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի արտադրած քանակի և համախառն ներքին արդյունքի զարգացումների վրա: Արդյունքները ներկայացնում են քստորև.

Աղյուսակ 2.14

Էլեկտրաէներգիայի առաջարկի կապը համախառն ներքին արդյունքի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի էլեկտրաէներգիայի արտադրության հետ (սեզոնային որոն հարթված և լոգարիթմված)¹¹²

¹¹² Ռեգրեսիոն հավասարումը գնահատված է “Eviews 9” ծրագրային փաթեթով

Dependent Variable(կախյալ փոփոխական): LOG_ELECTRICITY_SA				
Method(մեթոդ): Least Squares (փոքրագույն քառակուսիներ)				
Sample(adjusted) (ընտրված (ճշգրտված)): 2006Q1 2017Q2				
Included observations: 46 after adjustments (ներառված դիտարկումներ՝ 46 ճշգրտումից հետո)				
Variable (փոփոխական)	Coefficient գործակից	Std. Error (ստ. շեղում)	t-Statistic (վիճակ.)	Prob. (հավան.)
LOG_GDP_SA	0.246852	0.082293	2.999651	0.0044
LOG_ELECTRICITY_SA(-4)	0.679339	0.109211	6.220431	0.0000
R-squared (քառակուսի)	0.778018	S.D. dependent var		10.453
Adjusted R-squared (ճշգրտված R քառակուսի)	0.772973			

Ստացվում է հետևյալ ռեգրեսիոն հավասարումը.


$$\text{LOG_ELECTRICITY_SA} = 0.2468 \cdot \text{LOG_GDP_SA} + 0.679 \cdot \text{LOG_ELECTRICITY_SA}(-4)$$

Այս դեպքում ևս, գործակիցները բարձր նշանակալի են (սույնիսկ ավելի քան 99 տոկոս վստահելիության միջակայքում): Այս հավասարման արդյունքում, էլեկտրաէներգիայի արտադրության էլաստիկությունը ՅՆԱ-ից կազմում է 0.25, այսինքն ՅՆԱ-ի 1 տոկոս աճի դեպքում էլեկտրաէներգիայի արտադրությունն այս դեպքում պետք է աճի միջինում 0.25 տոկոսով:

Յետաքրքրական է նաև ուսումնասիրել ՅՆԱ-ի ճեղքի և էլեկտրաէներգիայի գերարտադրության կամ թերարտադրության (ճեղք) միջև կապը: Իհարկե, ՅՆԱ-ի պոտենցյալը, հետևաբար նաև ճեղքը անհաշվելի է (unobservable), սակայն առկա են պոտենցյալի գնահատման բազմաթիվ եղանակներ: Ներկայիս վերլուծությունում նպատակահարմար ենք գտել Յոդրիկ-Պրեսկոտի՝ սահող միջինների հիման վրա հաշվարկվող ֆիլտրը: Խնդիրը առավել բարդ է էլեկտրաէներգիայի արտադրության ճեղքի հաշվարկման մասով, քանի որ այստեղ արտադրության պոտենցյալը լրիվ այլ էություն ունի և կարելի է հաշվարկել որպես ոլորտում առկա հզորությունների համագումար և մշտապես ստանալ բացասական ճեղք: Սակայն, եթե պոտենցյալի հաշվարկան համար օգտագործենք միևնույն սահմանումը ինչ ՅՆԱ-ի դեպքում, այն է. պոտենցյալը հզորությունների միջին լարման դեպքում արտադրության ծավալն

Է, ապա ԷԼ ԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ արտադրության դեպքում ևս կարելի է օգտվել վիճակագրական մեթոդներից ճեղքը հաշվելու նպատակով:

Վերոնշյալ երկու փոփոխականների գծով ճեղքերը՝ արտահայտելով տոկոսային արտահայտությամբ արտենցյալ մեծությունների նկատմամբ: Ստանում ենք հետևյալ պատկերը.



Գծապատկեր 2.15 ՃՆԱ-ի և ԷԼ ԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ արտադրության ճեղքերը (տես հավելված 15)

Ընդհանուր առմամբ, ինչպես երևում է գծապատկեր 2.15-ից, վերոնշյալ փոփոխականների ճեղքերի միջև կապը շատ ամուրի է, քանի որ իրականում կապը հնարավոր է լինի ավելի ամուրի տարբեր լագերում: Բացի այդ ցուցանիշների տատանողականությունն է շատ տարբեր, ինչպես որ կարելի էր ենթադրել, ՃՆԱ-ի ճեղքի միջակայքը շատ ավելի նեղ է: Սակայն, կապը այս երկու ցուցանիշների ճեղքերի միջև դրական է, իսկ կոռելյացիայի ցուցանիշը կազմում է մոտ 0,3: Այսպիսով, կարելի է նշել, որ ՃՆԱ-ի փաստացի ցուցանիշի՝ արտենցյալի գերազանցման դեպքում ԷԼ ԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ գերարտադրվում է: Դա նշանակում է, որ առկա է ԷԼ ԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ արտադրող կայանների ԷԼ ԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ արտադրության ծավալների կառավարման արդյունավետության խնդիր, քանի որ մեր կողմից ստացված արդյունքը փաստում է այդ կայանների ավելորդ ծանրաբեռնված աշխատանքը:

Այս պիսով, գնահատվել է ԷԼԵԿՏՐՈՒԿԱՆԵՐԳԻԱՅԻ արտադրության ԷԼԱՍՏԻԿՈՒԹՅՈՒՆՆԸ համախառն թողարկման հավելածից (կանխատեսման՝ ապագային միտված մոտեցում), ինչպես նաև տվյալ ցուցանիշի նախկին համապատասխան ժամանակահատվածի ցուցանիշից (կանխատեսման իներցիոն մոտեցում): Տնտեսության տարբեր ճյուղերի և էներգետիկայի միջև կապերի, ինչպես նաև համախառն ներքին արդյունքի, դրա աճի (նաև ՅՆԱ ճեղքի) և ԷԼԵԿՏՐՈՒԿԱՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈՒՈՐՏԻ միջև կապերի խորը որակական և քանակական ուսումնասիրությունն հնարավորություն է տալիս կանխատեսել ԷԼԵԿՏՐՈՒԿԱՆԵՐԳԻԱՅԻ արտադրությունը: Դիցուք, տեղադրելով ԷԼԵԿՏՐՈՒԿԱՆԵՐԳԻԱՅԻ արտադրության՝ ՅՆԱ-ից առաձգականության գործակիցը գնահատող հավասարման մեջ կանխատեսվող ժամանակաշրջանի ՅՆԱ-ի հավելածի և ԷԼԵԿՏՐՈՒԿԱՆԵՐԳԻԱՅԻ նախորդ համարելի ժամանակահատվածի՝ սեզոնայնորեն հարթված և լոգարիթմված արժեքները, այնուհետև հակադարձ լոգարիթմելով ստացված արժեքը կստանանք անհրաժեշտ ժամանակաշրջանի կանխատեսումը:

ԳԼՈՒԽ 3. ԷԼԵԿՏՐՈՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

3.1 ԷԼԵԿՏՐՈՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ԿԱՄԱԿԱՐԳԻ ՍԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼ ԱԳՈՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ստեղծվելով 1997թ. ՀՀ Էներգետիկայի հանձնաժողովը սկսեց գործունեություն ծավալել Էներգետիկայի բնագավառում, որպես կարգավորող մարմին, հիմնվելով ՀՀ «Էներգետիկայի մասին» օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի վրա: 2003թ. -ին նույն կարգավորող մարմինը որոշում կայացրեց «Հայ Էներգո» ՓԲԸ-ի վերակազմակերպման արդյունքում դրա կազմից առանձնացնել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ն: Իսկ հաջորդ տարում՝ Հոկտեմբերի 1-ից Հանձնաժողովը որոշեց «Հայ Էներգո» ՓԲԸ-ի գործառույթներն ընդհանրապես դադարեցնել՝ նպատակ ունենալով Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում մեծածախ գնորդ-վաճառողի հարաբերություններից անցում կատարվել ուղիղ պայմանագրային հարաբերությունների: Էլեկտրաէներգետիկական շուկայի նոր կառուցվածքի ներդրումն ապահովելու համար հանձնաժողովը հաստատեց և գործողության մեջ դրեց Էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի, հաշվարկային կենտրոնի, Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը¹¹³:

Մինչ 2006թ. դեռևս կանոնակարգման խնդիր ունեւր ՀՀ Էլեկտրաէներգետիկական շուկայի կանոնների մշակումը: Այդ պատճառով 2006թ. -ին մշակվեց և հաստատվեց «Էլեկտրաէներգետիկական համակարգում Էլեկտրաէներգիայի բաշխման և արտադրման, հաղորդման և իրացնողական անձանց օպերատիվ փոխհարաբերությունների կարգը», որով կարգավորվում

¹¹³ [http://psrc.am/docs/reports/Tar_Hash_2004\(41_1\).pdf.pdf](http://psrc.am/docs/reports/Tar_Hash_2004(41_1).pdf.pdf) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004թ. գործունեության հաշվետվություն, էջ 3

են արտադրման, հաղորդման լիցենզիա ունեցող անձանց սարքավորումների օպերատիվ ենթակայ ության խնդիրները և դրանց կարգավարման ընթացքում նրանց փոխհարաբերությունները: Ինչպես նաև Մշակվեց և հաստատվեց «Էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման միջոցների տեղադրման և շահագործման կարգը», որը կանոնակարգում է Էլեկտրաէներգետիկական շուկայում գործող ընկերությունների փոխհարաբերությունները Էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման համակարգում կիրառվող հաշվառման համալիրների տեղակայման և փոխարինման ընթացքում¹¹⁴: Լրամշակվեցին Էլեկտրաէներգիայի առևժամառ փութացումը (հաշվեկշռող) պայմանագրի օրնակելի ձևը և «Հայաստանի Հանրապետությունից Էլեկտրական Էներգիայի արտահանման կարգը»:

Էլեկտրական Էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների հաստատումից հետո 2007թ. -ին հանձնաժողովի կողմից մշակվեց և հաստատվեց Էլեկտրական Էներգիայի մատակարարման մատակարար-սպառող (բնակիչ), Էլեկտրական Էներգիայի մատակարարման (մատակարար-մինչև 6(10) կՎ լարման) ցանցերից սնվող սպառող (բացառությամբ՝ բնակչության), Էլեկտրական Էներգիայի մատակարարման (մատակարար-6(10) կՎ և բարձր լարման) ցանցերից սնվող սպառող (բացառությամբ՝ բնակչության) պայմանագրերի օրնակելի ձևերը: Էներգետիկայի բնագավառի կարգավորման իրավական դաշտի կատարելագործման նպատակով 2007 թվականին մշակվեցին և հաստատվեցին նաև մի շարք իրավական ակտեր, մասնավորապես՝

1. Էլեկտրաէներգետիկական համակարգին Էլեկտրաէներգիա արտադրող կայանների միանալու կարգը,
2. մատակարարի և սպառողի (բացառությամբ՝ բնակչության) օպերատիվ փոխհարաբերությունների կարգը,
3. նոր սպառողի կամ սպառողի վերականգնող սպառման համակարգը Էլեկտրական ցանցին միանալու կարգը և նոր

¹¹⁴ [http://psrc.am/docs/reports/Tar_Hash_2006\(170_1\).pdf](http://psrc.am/docs/reports/Tar_Hash_2006(170_1).pdf) ՀԾԿՀ 2006 թվականի գործունեության հաշվետվությունն էջ 2

սպառողի կամ սպառողի վերականգնող սպառման համակարգը
ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԳԱՆԳԻՆ ՄԻԱԳՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ¹¹⁵:

Սպառողների ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԴԻՏՈՒՄՆԵՐԻ
տևողության կարգավորման նպատակով 2012 թվականի հունվարի 1-ից
ընդունվեցին դրանց նոր ցուցանիշները, որոնք սահմանում են՝
քաղաքային համայնքներում արտապլանային որևէ ընդհատման
տևողությունն չպետք է գերազանցի 4 ժամը՝ նախկին 8 ժամի փոխարեն,
իսկ գյուղական համայնքներում 8 ժամը՝ նախկին 16 ժամի փոխարեն,
ինչպես նաև կրճատվեցին պլանային ընդհատումների
տևողությունը, և այն այժմ չպետք է գերազանցի 6 ժամը՝ նախկին 8
ժամի փոխարեն¹¹⁶: Բացի այդ, կիրառության մեջ է դրվել տարեկան
պլանային և արտապլանային ընդհատումների գումարային
տևողության ցուցանիշը, որը քաղաքային համայնքների
սպառողների համար գումարային առումով չպետք է գերազանցի 24
ժամը և 72 ժամը՝ գյուղական համայնքների սպառողների համար:
Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը,
կարևորելով այս ցուցանիշների պահպանումը, հերթական
բարելավման քայլը կատարեց՝ 2012 թվականին ներդնելով
պատասխանատվության նոր գործիք՝ մատակարարի կողմից
սահմանված ցուցանիշների խախտման դեպքերի համար: 2013 թվականի
հունվարի 1-ից, և մատակարարը ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ընդհատումների վերականգնման վերը նշված ժամերի, դիմումների
և բողոքներին պատասխանելու համար սահմանված ժամկետների,
ինչպես նաև սպառողների իրավունքներին առնչվող մատակարարման
կանոններով ամրագրված միջարքայլ ընթացակարգերի խախտման
յուրաքանչյուր դեպքի համար սպառողին է վճարվում տույժ՝
վերջինիս ծախսած ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ միջին ամսական արժեքի 20%-
ի չափով (բայց ոչ ավելի, քան 2000 դրամը): Հաշվարկված տույժը
նվազեցվում է սպառողին նախորդ ամսում ծախսված
ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ դիմաց վճարման ենթակա գումարից՝ այդ մասին
հատուկ 4 նշում կատարելով վճարման փաստաթղթում:

¹¹⁵ [http://psrc.am/docs/reports/Tar_Hash_2007\(189_1\).pdf](http://psrc.am/docs/reports/Tar_Hash_2007(189_1).pdf) ՀԾԿՀ 2007 թվականի գործունեության
հաշվետվությունն էջ 2

¹¹⁶ <http://psrc.am/docs/reports/2012.pdf> Հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2012թ գործունեության հաշվետվությունն էջ 3

2015թ. -ին մշակվել և հաստատվել է Հայաստանի Հանրապետության տարածքով էլեկտրական եներգիայի (հզորության) տարանցիկ փոխադրման կարգը: Լրամշակվել և հաստատվել է Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող եներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական եներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական եներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկան:

ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման շրջանակում արդեն իսկ կատարվել են առաջին քայլերը, մասնավորապես, ՀԾԿՀ-ի որոշմամբ¹¹⁷ վերանայվել է վերջնական սպառողներին էլեկտրաէներգիայի միակ մատակարարի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի բացառիկ վաճառքի իրավունքը, իսկ 2016 թվականի որոշմամբ¹¹⁸ սահմանվել են էլեկտրաէներգիայի բաշխման ծառայության մատուցման սակագները, որոնք ուժի մեջ են մտել 2016 թվականի օգոստոսի 1-ից:

Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացմանն ուղղված ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալությունը (USAID) Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ միասին մշակել է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի ձևափոխման, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական համակարգում ցանցային կանոնների ձևավորման գործունեությունը¹¹⁹: Նշված կանոնների վերջնական մշակման աշխատանքների նպատակը մեկ միասնական փաստաթղթում էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեության պլանավորման, կարգավորման և շուկայի կազմակերպությունների միջև տեխնիկական բնույթի փոխհարաբերությունները կանոնակարգող իրավական նորմերը համատեղ են է՝ համադրելով դրանք միջազգային առաջավոր փորձի հետ:

ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել այդ փոփոխությունների ժամանակատարությունն ու պատասխանատվության աստիճանը: Պետք

¹¹⁷ՀԾԿՀ 2016թ. փետրվարի 10-ի N20Ա որոշում

¹¹⁸ՀԾԿՀ 2016թ. հունիսի 24-ի N192Ն որոշում

¹¹⁹ <https://www.usaid.gov/armenia/economic-growth-and-trade> ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության պաշտոնական կայքի հրապարակում

Ե նշել, որ այս գործընթացում սպառողների պաշտպանության կարևորությունն առանցքային է իրականացվող փոփոխությունների ցանկացած փուլում: Աստիճանական ազատականացման ընթացքում պետք է ուշադրություն դարձնել նաև էլեկտրական եներգիայի առևտրում ժամանակակից գործիքների կիրառման համար անհրաժեշտ նոր էլեկտրոնային հարթակի ստեղծան և դրա ֆունկցիոնալության ապահովման վրա: Այդ համակարգի ներդրումը էապես կփոխի և առավել արդյունավետ կդարձնի էլեկտրաէներգիայի առևտրի դաշտը ու կնվազեցնի գործընթացի ռիսկայինությունը և աստիճանը:

ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեությունը կարգավորվում է 2001թ. ընդունված Էներգետիկայի մասին օրենքով: Այդ օրենքով նշված են ազգային քաղաքականության հիմնական դրույթները, բայց դրան զուգահեռ դեռևս հստակորեն սահմանված չեն ՀՀ կառավարության կամ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության իրավասությունները այդ քաղաքականությունը իրականացնելու համար, ինչպես նաև Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության դերը Էներգետիկ բնագավառում: Մյուս կողմից օրենքը հանգամանորեն նկարագրում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի իրավասությունները, որոնք, հիմնականում կարելի է համահունչ համարել միջազգային առաջադեմ փորձին: | Հանձնաժողովը՝¹²⁰

- Տրամադրում է լիցենզիաներ մեծածախ շուկայի մասնակիցներին
- Սահմանում է էլեկտրաէներգիայի արտադրության, հաղորդման և բաշխման սակագները, ներառյալ սպառողների սակագները և Համակարգի օպերատորի ու Հաշվարկային կենտրոնի ծառայությունների դիմաց վճարները
- Սահմանում է շուկայի կանոնները, համագործակցելով Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության հետ
- Սահմանում է բաշխման կանոնները, ներառյալ ցանցի միացման կանոնները: Էներգետիկայի մասին օրենքը չի համապատասխանում Եվրամիության պահանջներին: Ներքին

¹²⁰ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=91484> Էներգետիկայի մասին ՀՀ օրենք

Էներգետիկ շուկայի գործունեությունը բարելավելու և կառուցվածքի հետ կապված խնդիրները լուծելու նպատակով Երամիությունը սահմանում է Էներգետիկ շուկային ներկայացվող հիմնական պահանջները, որոնք, ի թիվս մյուսների, հետևյալն են.

- Թափանցիկ շուկա
- Մրցունակ Էլեկտրաէներգիա և մանրածախ շուկա՝ հոգուտ սպառողների
- Էներգամատակարարների տարանջատում ցանցային օպերատորներից:

Նշված պահանջներից որևէ մեկը ներառված չէ ՀՀ Էներգետիկայի մասին օրենքում, հետևաբար դրա ամբողջական վերանայման կարիք կա: Եվրամիության հրահանգների¹²¹ սկզբունքների վրա հիմնված Էներգետիկայի մասին օրենքի շարունակական փոփոխությունները թույլ կտան բնագավառում ունենալ մրցունակ շուկա:

Էլեկտրաէներգետիկական համակարգը հանդես է գալիս մի շարք օրենսդրական խոչընդոտներով, ինչն իր ազդեցությունն է թողնում համակարգի մասնակիցների գործունեության վրա:

Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի պատասխանատվության տակ են գտնվում Էլեկտրաէներգիայի արտադրության և հաղորդման համակարգերի գործունեությունը, ինչն ամրագրված է Էներգետիկայի մասին օրենքով: Դրան զուգահեռ, նույն օրենքում Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի համար բացակայում են բավարար մակարդակի լիազորությունների տրամադրումը: Այս տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում մշակել առանձին ճյուղի օրենսդրության հիմքեր: Օրինակ՝ ստեղծել համակարգի օրենսգիրք, որի շնորհիվ հստակորեն կսահմանվեն Էներգետիկայի բնագավառում Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի գործունեությունն իրականացնող մարմնի և մյուս մասնակիցների գործառնությունները և պատասխանատվության սահմանները, ինչը

¹²¹ <https://ec.europa.eu/energy/en/topics/markets-and-consumers/market-legislation> - The Directorate-General for Energy

կհանգեցնի էլ եկտրաէներգետիկական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման:

Էներգետիկայի մասին օրենքով սահմանված են էլեկտրաէներգիայի արտահանման և ներկրման կարգը, սակայն էլեկտրաէներգետիկական համակարգում անհրաժեշտություն կաստեղծել այնպիսի մի մարմին, որն օրենքով լիազորված կլինի խթանել էլեկտրաէներգիայի ներկրումը և արտահանումը: Այս դեպքում ևս առանձին ճյուղի օրենսդրության մշակման անհրաժեշտություն է առաջանում: Էլեկտրաէներգիայի արտաքին առևտրի օրենսգիրքի մշակումը կարող է էական դրական ազդեցություն թողնել համակարգի վրա: Դրամիջոցով հստակորեն կսահմանվեն էլեկտրաէներգիայի արտաքին առևտրի արդյունավետության բարձրացման գործիքները, դրա համապատասխան գերատեսչության լիազորությունները, վարչարարության ու խթանման հիմքերը ինչպես Հայաստանում, այնպես էլ հարևան երկրների հետ: Տվյալ օրենսդրության շրջանակներում նաև անհրաժեշտ է սահմանել էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեության հավասարակշռության և արտաքին կապերն ապահովող այնպիսի գործիքակազմ, որի կիրառությունը կընդգրկի նաև էլեկտրաէներգիայի արտադրության՝ տեղական կամ տարածաշրջանային բարձր արման ցանցի հնարավորությունների գերազանցման դեպքում առաջացող խնդրի լուծումը:

Անհրաժեշտություն կա նաև ունենալ նոր կառուցապատումների վերաբերող ճյուղային օրենսդրություն: Դրամիջոցով պետք է սահմանվեն այնպիսի կանոններ, որոնք կհամապատասխանեցնեն մեր համակարգը հարևան երկրներում և իրավահամակարգերում գործող կանոններին: Նշված խնդիրը վերաբերում է հատկապես բնապահպանական ոլորտին: Շրջակա միջավայրի ախտտուումը, դրա վրա ազդեցության չափումների գործընթացը, էլեկտրաէներգիա արտադրող կայանների կողմից որպես վառելիք օգտագործվող ծծմբի պարունակության, ինչպես նաև խոշոր այրման կայանների արտանետումների սահմանափակումը պետք է համապատասխանե՛վի միջազգային ստանդարտներով

սահմանված մակարդակներին: Էներգետիկ բնագավառի՝ հարևան երկրներում գործող իրավական համակարգերում առկա օրենսդրության հետ համապատասխանեցնելու տեսանկյունից անհրաժեշտությամբ կանալի րամշակել մրցակցության և պետական օժանդակության մասին օրենքները՝ համապատասխան մակարդակներում գործունեության ծավալելու խթանման նկատառումով: Անհրաժեշտ է նաև մշակել օրենսդրության՝ ՀՀ Էներգետիկ բնագավառի, Էլեկտրաէներգետիկական համակարգի աստիճանական ազատականացման արդյունքում մրցակցային նոր դաշտի բացման համար: Դրա իրականացման համար պետք է սահմանել այնպիսի ժամկետներ, որոնք նաև կհամապատասխանեն հարևան երկրներում ընթացող Էլեկտրաէներգետիկական համակարգի բարեփոխումների գործընթացների ժամկետներին, ինչը թույլ կտա սահմանված ժամկետներում որոշ սպառողներին արդեն որոշել սեփական մատակարարին նաև արտերկրից:

Էներգետիկայի մասին օրենքում կարգավորող մարմնին վերաբերող հատվածը պետք է լրամշակել՝ հարևան երկրների իրավական համակարգերում գործող կարգավորող մարմնին վերաբերող օրենքներին և միջազգային առաջադեմ փորձին համապատասխանեցնելու նպատակով:

ՀՀ-ում գործում է Էներգախնայողության և վերականգնվող Էներգետիկայի մասին օրենք¹²², որը պետք է լրամշակել՝ ընդգրկելով շենքերի Էներգաարդյունավետության բարձրացման համար կիրառվող պահանջները, որը կհամապատասխանի նաև հարևան իրավական համակարգերում առկալավագույն փորձին:

Վերը նշվածից բացի՝ առաջնային է նաև հետևյալ գործողությանների իրականացումը.

- Մշակել Էլեկտրաէներգետիկական շուկային վերաբերող հիմնական կանոններ և սահմանել շուկայի բարեփոխումների անցումային, հերթական փուլերը:

¹²² <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2119> Հայաստանի Հանրապետության Օրենքը Էներգախնայողության և վերականգնվող Էներգետիկայի մասին, ընդունվել է 09.11.2004

- Ընդլայնել էլեկտրաէներգետիկական համակարգին ծառայող ունեւոր մատուցող կազմակերպչ ունեւորի համար երակաժամկետ վարկեր ներգրավելու հնարավորութիւն ունեւորը:
- Էլեկտրաէներգետիկական համակարգում գործուներությունը ծավալելու իրավունք ստացած մասնակիցների համար կիրառել առանձնացված հզորության և էլեկտրաէներգիայի դրույքաչափեր, ինչպես նաև սահմանել համակարգին ծառայող ան մատուցման սակագներ:
- Վերջին տարիներին էլեկտրաէներգետիկական համակարգի զարգացման նոր ծրագրերի ներդրման, իրականացման, ինչպես նաև կարճաժամկետում ռազմավարություն փոփոխութեամբ պայմանավորված՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի, ՀԾԿՀ-ի ինչպես նաև ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության մասնակցութեամբ մշակել ՀՀ Էներգետիկ բնագավառի, էլեկտրաէներգետիկական համակարգի ռազմավարական զարգացման նոր ծրագիր՝ հիմքում ունենալով նաև էլեկտրաէներգետիկական համակարգում արդեն փոփոխված և առաջիկայում փոփոխութեան ենթակա օրենսդրութեան ունեւոր կապված շուկայի ազատականացման գործընթացի հետ:

ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի տարբեր օրենսդրական խնդրներին համակարգի մասնակիցների արդյունավետ գործուներության համար խնդիր են հանդիսանում, ինչը թույլ չի տալիս սպառողների համար մատակարարել ավելի հուսալի, և էժան սակագնով էլեկտրաէներգիա:

Իհարկէ, ՀՀ-ում էլեկտրաէներգիան արտադրվում տարատեսակ կայաններում, որոնք իրենց հերթին ունեն միավոր էլեկտրաէներգիայի տարատեսակ սակագներ, որը խնդրնորում էլ իրավ մրցակցային շուկա ունենալու հնարավորութեանը՝ որպէս համակարգի գործուներության արդյունավետութեանը բարձրացնող գործիք: Մյուս կողմից, դա չի նշանակում, որ շուկայի ազատականացման գործընթացը հնարավորութեան չի ունենա բարձրացնելու այդ արդյունավետութեանը:

Չաշվի առնելով սպառողների վճարունակության մակարդակը՝ հարկ է նշել, որ վերջնական սպառողի համար սահմանված սակագները բավականին բարձր են, ուստի անհրաժեշտություն է առաջանում օգտագործել բոլոր այն հնարավորությունները միջոցները, որոնք թույլ կտան բարձրացնել դրանց ծախսերի արդյունավետությունը և թափանցիկությունը:

Ներկայում կիրառվող էլեկտրաէներգիայի արտադրության պլանավորման մեթոդաբանությունը նախատեսված է տարեկան կտրվածքով իրականացվելու համար, ինչը կարող է հանգեցնել էական շեղումների հետ կապված խնդրին՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ինչքան մեծ է պլանավորման ժամանակահատվածը, այնքան մեծ են անճշտության ռիսկերը: Ներկայում, այս ռեժիմի վճարների շեղումները կապված են միայն տեղական սպառողների հետ, որոնք մեծածախ շուկայի մասնակիցներ չեն համարվում, հետևաբար կարելի է եզրակացնել, որ իրական մասնակիցները շեղումների հետ կապված պատասխանատվություն չեն կրում:

Էլեկտրաէներգիայի արտադրության երկդրույթային սակագնի (հզորության և էլեկտրաէներգիայի դրույթ) հիսական նպատակը էլեկտրաէներգիա արտադրող խոշոր կայանների հաստատուն ծախսերի ծածկումն է, որը հնարավորություն է տալիս կայանի՝ ցանցից անջատված գտնվելու ժամանակահատվածում խուսափել ֆինանսական խնդիրներից, հետևաբար էլեկտրաէներգիա արտադրող կայանների շահույթը ոչ միշտ է կախված դրա արտադրությունից: Նման քաղաքականությունն իրականում թույլ է տալիս ապահովել արտադրող կայանների ֆունկցիոնալությունը, հետևաբար դրա փոխարեն վճարման պատասխանատվությունը՝ սպառողների վրա բաշխելն ինչ-որ տեղ կարելի է արդարացված համարել: Դրան զուգահեռ, պետք է նշել, որ քննարկվող մեթոդաբանությունը, որոշ դեպքերում թերանում է: Այսպես՝ «Յրագրանի ՋԷԿ» ՓԲԸ-ի հին բլոկերի շահույթն ամբողջությամբ վերագրվում է հզորության դրույթին (շահույթը պետք է կախված լինի ոչ թե էլեկտրակայանի արտադրանքից, այլ դրա շարունակական շահագործումից՝ շարժիչները աշխատանքի ռեժիմում շարունակաբար պահելով): Մեթոդաբանությունն այլ կերպ է արտահայտվում «Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ի

պարագայում, երբ շահույթն ամբողջությամբ վերագրվում է էլեկտրաէներգիայի դրույքին, 5-րդ Բլոկի դեպքում օգտագործվում է միայն էլեկտրաէներգիայի սակագինը: Յետևաբար, մեծածախ շուկայում գործող էլեկտրաէներգիայի սակագնի հաշվարկի գործող մեթոդաբանությունները պետք է լրամշակվեն՝ Յայաստանի էներգետիկ շուկայի ազատականացման տեսակետից:

Քանի որ ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկան ունի փոքր մասշտաբներ, այն շատ զգայուն է խոշորածավալ ծրագրերով իրականացվող ներդրումների և տեղական սպառողներին ֆինանսապես լրացուցիչ բեռ գումարելու այլ ռիսկերի նկատմամբ: Ներքին շուկայի վրա սպասվելիք ազդեցության աստիճանի և հետևանքների կանխատեսումը Վրաստանի հետ նոր էլեկտրահաղորդման գիծ ունենալու տարբերակի ընտրության հիմքն է: Յետևաբար, ներդրումային ծրագրերի հետ կապված որոշումների կայացման համար պետք է հիմք հանդիսանան ներքին շուկայում առկա վիճակն ու դրա վրա հետագայում արտացոլվող դրական կամ բացասական ազդեցությունը: Ներկայում, մեծածախ շուկայի յուրաքանչյուր վթարից առաջացած ֆինանսական պատասխանատվությունը բաշխվում է վերջնական սպառողների վրա: Յայտնի է, որ շուկան շահագործվում է փաստացի ռեժիմներով: Իսկ ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում արձանագրված վերջին տարիների ճգնաժամը ցույց է տալիս, որ պատասխանատվության բաշխման ներկայում գործող գործիքներն արդյունավետ չեն աշխատում: Յետևաբար, անհրաժեշտություն է առաջանում մշակել մեծածախ շուկայի մասնակիցների և վերջնական սպառողների միջև պատասխանատվության բաշխման նոր և արդյունավետ գործիքակազմ՝ հաշվի առնելով ազականացման գործընթացից բխող նոր իրավիճակը էլեկտրաէներգետիկական համակարգում:

Վրաստանի հետ էլեկտրաէներգիայի արտաքին առևտուրը նպատակ ունի բարելավել ՀՀ ներքին շուկայի արդյունավետությունը: Մյուս կողմից, էլեկտրաէներգիայի առադրության հզորությունների զարգացման նպատակով, շատ երկրներ առաջնայինորեն գերադասում են ինքնաբավարարման սկզբունքի վրա, որը բխում է նաև երկրի էներգետիկ անկախության

և Էներգետիկ անվտանգության քաղաքականության նից: Իսկ արտահանման և ներկրման գործընթացները տեղի են ունենում միայն ներքին շուկայի գործունեության արդյունավետությանը բարձրացնելու նպատակով:

Վրաստանի և Հայաստանի միջև Էներգետիկ բնագավառում համագործակցությունը ներկայիս պայմաններում ձեռք է բերում հատուկ կարգավիճակ և հատուկ ուշադրություն է պահանջում պետական կառույցներից:

Երկու երկրներն ընդհանուր կարգավիճակ ունեն Էներգետիկների ներմուծման հարցում, ինչը նշանակում է, որ կայուն և ճգնաժամային ժամանակաշրջանում անվտանգ Էներգետիկ համակարգ ստեղծելու համար երկու պետությունները պետք է ունենան հետևյալ գերակայությունները՝ առաջին հերթին, ավելացնել Էլեկտրաէներգիայի արտահանման արբյուրների քանակը, և երկրորդ, Էներգետիկ տրանզիտային երթուղիների քանակն ու բազմազանությունը և, վերջապես, պետության ներսում նոր Էներգետիկ հզորությունների արտադրությունը:

Հայաստանի և Վրաստանի Էներգետիկ բնագավառներում գոյություն ունեցող այս ընդհանրությունները համեմատելիս, նկատելի է, որ Էներգետիկ ոլորտում յուրաքանչյուր երկրում «գերակայում է» մեկ պետություն. Հայաստանի դեպքում դա Ռուսաստանն է, Վրաստանի դեպքում՝ Ադրբեյջանը: Այս իրավիճակը խորապես կախվածություն է ստեղծում այդ պետություններից, ազդելով ոչ միայն Էներգետիկ քաղաքականության ռազմավարության վրա, այլև Հայաստանի և Վրաստանի անվտանգության համակարգերի վրա՝ ստիպելով վերջիններին մշտապես հաշվի առնել Էներգամատակարարող պետության շահերը:

Ներկայումս Հայաստանում Էլեկտրաէներգիայի արտադրության հզորությունների գրեթե կեսը չի օգտագործվում: Էլեկտրաէներգիայի գումարային դրվածքային հզորությունը կազմում է 4200 ՄՎտ, որից ընթացիկը 55% (2300 ՄՎտ)¹²³: Ատոմակայանը և հիդրոէլեկտրակայանները ապահովում են հզորության հիմնական

¹²³<http://www.minenergy.am/page/448> Հայաստանի Հանրապետության Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության պաշտոնական կայք

պահանջարկը, իսկ ջերմային էլեկտրակայանները հիմնականում օգտագործվում են ձմռանը պիկային պահանջարկը բավարարելու և հիմնական կարիքների բավարարման համար, երբ ատոմակայանը ցանցից անջատված է հերթական նորոգումներն իրականացնելու համար:


Աղյուսակ 3.1 ՀՀ-ում էլեկտրաէներգիայի հիմնական արտադրողները՝ ՀԱԷԿ, ՀԷԿ, ՋԷԿ, Այլ ընտրանքային (վերականգնվող էներգիայի աղբյուրներ)¹²⁴

Արտադրողություն (մլն. կվտժ)	2014	2015	2016
ՀԱԷԿ	2464.8	2787.7	2380.5
ՋԷԿ	3288.6	2801.2	2581.5
ՀԷԿ	1992.6	2205.6	2351.4
Վերականգնվող էլեկտրաէներգիա	4.0	3.7	1.8
Ընդամենը	7750.0	7798.0	7315.3

Հայաստանն արտադրում է բավարար քանակությամբ էլեկտրաէներգիա՝ ներքին պահանջներին բավարարելու համար, և ունի լրացուցիչ հզորություններ էլեկտրաէներգիայի արտահանման համար: Իրականում Հայաստանն էլեկտրաէներգիա արտահանող երկիր է, սակայն դրա ծավալը փոքր է՝ կազմում է ընդհանուր արտահանման 5-6%¹²⁵: Ներկրվող էլեկտրաէներգիայի ծավալը շատ փոքր է, և ավելի շուտ, ունի էներգետիկայի կարգավորման նպատակ:

¹²⁴ http://psrc.am/am/sectors/electric/reports_2014-2016 ՀԾԿՀ էլեկտրական էներգիայի հաշվետվողություններ

¹²⁵ <http://armstat.am/am/?nid=12&id=10001> ՀՀ ԱՎՃ պաշտոնական կայքի հրապարակում



Պատկեր 3.1 ԶԶ Էլեկտրաէներգիայի արտադրությունը և Էլեկտրաէներգիայի արտաքին առևտուրը Վրաստանի հետ (մլն կվտժ) կվտժ)¹²⁶

Չնայած, Վրաստանում ՋԷԿ-երի բարձր պոտենցիալին, աշխարհային և ձմեռային շրջանում գետերի սակավաջրությունը առաջացնում է Էլեկտրաէներգիայի դեֆիցիտ, որը պետք է ծածկվի ՋԷԿ-երի արտադրած թանկ ինքնարժեքով Էլեկտրաէներգիայի կամ ներկրման միջոցով (տես՝ Աղյուսակ 3.2): Ծառվերլուծությունների և տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ Վրաստանի էներգետիկ հաշվեկշռում պահանջվում է մեծացնել ջերմային էլեկտրակայանների Էլեկտրաէներգիայի ծավալը: Դրամասին է վկայում նաև 2016թ. դեկտեմբերին ՋԷԿ-երի կողմից արտադրած 51% մասնաբաժինը¹²⁷ ընդհանուր ծավալում: Դա, իհարկե, առաջին հերթին այդ ամսվա ընթացքում հիդրոռեսուրսների

¹²⁶ <http://psrc.am/am/sectors/electric/reports> Վրաստանի Հանրապետության Հանրային Ծառայությունները Կարգավորող հանձնաժողով
¹²⁷ http://gnerc.org/files/wliuri%20angariSi/GNRC_Report_2016_ENG_2017%2021.07.17.pdf Georgian national energy and water supply regulatory commission, Annual Report 2016, page 22

բացակայության հետևանք է, սակայն պետք է նկատել, որ պահանջարկը բավարարվել է ջերմաէլեկտրակայանների արտադրած էլեկտրաէներգիայի միջոցով՝ ներկրման փոխարեն, ինչպես արվել էր նախորդ ժամանակաշրջաններում:

Աղյուսակ 3. 2 Վրաստանում էլեկտրաէներգիայի արտադրության միջոցների կառուցվածքը (մլն կվտ)¹²⁸

Էլեկտրաէներգիայի արտադրության միջոցներ	2014	2015	2016
ՀԷԿ	8271.2	8335.3	8453.8
ՋԷԿ	600	627.3	675.2
Արևային էներգիա	46.7	77	99.3
Ընդամենը	10059.3	10371.2	10832.5

Այս համատեքստում 2015 թ. Դեկտեմբերի 23-ին Իրանի, Ռուսաստանի, Վրաստանի և Հայաստանի ներկայացուցիչների միջև ստորագրված հուշագրով ձեռք բերվեց պայմանավորվածություն, որն ազդարարում է Վրաստան-Հայաստան էներգետիկ համագործակցության նոր դարաշրջանի մասին: Այս հուշագրի համաձայն, կկողմերը սկսում են էլեկտրական հաղորդակցության նոր համակարգի կառուցում, որը միացնելու է չորս երկրների էներգետիկ համակարգերը: Այս ծրագրի իրականացումը նպաստավոր պայմաններ է ստեղծում Ռուսաստանի, Վրաստանի, Հայաստանի և Իրանի էներգահամակարգերի համաժամանակյա շահագործման համար, ինչը իր հերթին նպաստում է էներգետիկայի ոլորտում ներդրումների աճին:

Այդ ներդրումների արդյունքում, մինչև 2018թ. ավարտը, Հայաստանից Վրաստան և Իրան պետք է շահագործման հանձնվի 400 կիլովոլտ լարման նոր գիծը, որը դեպի Վրաստան և Իրան էլեկտրաէներգիայի նոր փոխհոսքեր կապահովի:

¹²⁸ <http://gnerc.org/en/public-information/gazi/tsliuri-angarishi> Georgian national energy and water supply regulatory commission

Այդ ծրագրերի արդյունքում կստեղծվի հյուսիս-հարավ
Էներգետիկ միջանցք, որը միաժամանակ աշխատելու է ԵԱՏՄ-ի և ԵՄ-ի
Էներգետիկ համակարգերի հետ: Այս չորս պետության ներքին
Էներգետիկ համակարգերի միջև համագործակցության ընդլայնումը
թույլ կտաստեղծել տարածաշրջանային Էլեկտրաէներգետիկ շուկա,
որտեղ միաժամանակ գործող համակարգերը զգալիորեն կփոխեն
Էլեկտրաէներգիայի գնագոյացման միջավայրը, ինչպես նաև
կընդլայնի ՀՀ-ում նոր Էներգետիկ հզորությունների կառուցմանն
ուղղված ներդրումների ծավալը:

Հայ-վրացական Էլեկտրաէներգետիկ ոլորտի
փոխհարաբերությունների առավել բարձր արդյունավետության
ապահովման նպատակով առաջարկվում է ստեղծել համատեղ
աշխատանքային խումբ՝ բաղկացած երկու երկրների կողմից
լիազորված ոլորտի մասնագետներից, որը կապահովի
համագործակցության տեխնիկական, նորմատիվային ինչպես նաև
իրավական հիմքերի նախագծեր, վերը նշված ծրագրերի
իրականացմանն օժանդակելու նպատակով:

Էլեկտրաէներգետիկ ոլորտի հիմնախնդիրների լուծման
ուղղությունն է նաև դրա արտադրության սեփական աղբյուրների
բազմազանեցումը, այդ թվում՝ վերականգնվող Էներգիայի
տեսակարար կշռի չափավոր բարձրացումը երկրի Էներգետիկ
հաշվեկշռում:

Տարածաշրջանում մրցակցող երկու տնտեսական համակարգերի՝
Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի և ԵԱՏՄ-ի
սահմանին հայ-վրացական Էներգետիկ համագործակցությանը
հնարավորությունների նոր հարթակ է, որից երկու երկրները՝
համատեղ աշխատանքի միջոցով, պարտավոր են հասնել փոխշահավետ
տնտեսական իրավիճակի:

Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության
քննարկման ընթացքում անհրաժեշտ է նշել, որ տվյալ տնտեսական
միությունում Հայաստանն իր տեղակայված հզորությունների և
արտադրված հոսանքի ծավալով ամենափոքրն է:

Աղյուսակ 3.3 ԵԱՏՄ անդամ պետությունների Էլեկտրաէներգիայի ու ռորտի ընդհանուր ցուցանիշները 2016թ.¹²⁹

	Հայաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան	Ռուսաստան
Դրվածքային հզորություն (ԳՎտ)	3.3	9.8	22	3.6	244.1
Արտադրություն (մլրդ կՎտժ)	7.31	33.31	94	12.84	1091
Սպառում (մլրդ կՎտժ)	6.36	36.33	92.3	12.97	1078.5
Արտահանում (մլրդ կՎտժ)	1.22	0.16	3.1	0.2	16
Ներկրում (մլրդ կՎտժ)	0.27	3,18	1,4	0.33	3.5

Աղյուսակ 3.3-ից պարզ է դառնում, որ Հայաստանն իր փոքր ծավալներին զուգահեռ ունի Էլեկտրաէներգիա արտահանելու մեծ պոտենցիալ՝ համեմատած այլ անդամ երկրների հետ: 2016թ. -ին Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշմամբ¹³⁰ հաստատվել է Եվրասիական տնտեսական միության Էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձևավորման ծրագիրը: Այն հիմնված է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015թ. որոշմամբ¹³¹ հաստատված Եվրասիական տնտեսական միության Էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձևավորման հայեցակարգի վրա: Ծրագրի կատարման նպատակներն են՝ Միության Էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայում անդամ պետությունների Էլեկտրաէներգետիկական շուկաների սուբյեկտների մասնակցությունը անդամ պետությունների պատրաստվածությունն ապահովելը և Միության Էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի արդյունավետ գործունեության համար պայմաններ ստեղծելը: Ծրագիրը միջոցառումների կատարումը մինչև 2018թ. հունիսի 1-ն է: Հարկ է

¹²⁹ http://eec.eaunion.org/ru/act/energetikaiinfr/energ/energo_stat/Pages/default.aspx Сайт Евразийского экономического союза

¹³⁰ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 20 որոշում

¹³¹ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի մայիսի 8-ի թիվ 12 որոշում Եվրասիական տնտեսական միության Էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձևավորման հայեցակարգը հաստատելու մասին

նշել, որ այս ծրագրի միջոցառումները չեն հակասում ՀՀ-ում
Էլեկտրաէներգետիկական համակարգի Էլեկտրաէներգիայի շուկայի
ազատականացման և միջպետական առևտրի զարգացման
միջոցառումներին¹³², քանի որ ԵԱՏՄ ծրագրի միջոցառումներն
առնչվում են ոչորտի մակրոմակարդակին՝ անդամ երկրների միջև
Էներգետիկ բնագավառի փոխհարաբերություններին, իսկ վերջինը՝
վերաբերում է միկրոմակարդակով ոչորտի կարգավորման
փոփոխություններին:

ՀՀ-ում ներկայում գործող Էլեկտրաէներգիայի արտահանման
կանոնների համաձայն, արտահանվելու իրավունքը վերապահված է
ամենաթանկ գնով Էլեկտրաէներգիային, և դա հնարավոր է
իրականացնել միայն ներքին շուկայի պահանջարկը
ամբողջությամբ բավարարված լինելու դեպքում:

Պետք է ընդգծել, որ նշված սկզբունքները կարելի է հնացած
համարել: Հայաստանում, արտահանման համար Էլեկտրաէներգիայի
արտադրության ամենաթարձր սակագինն ունի 5-րդ Բլոկը:
Հետևաբար, շուկայի ձևավորման փուլում անհրաժեշտությու
կառաջանա վերանայել այս սկզբունքը: Նշված սահմանապակումը
ուներ Էներգետիկ անվտանգության քաղաքականության ամրապնդման
նպատակ: Սակայն, այսօր, երբ համակարգի գործունեությունը
ամբողջությամբ կանոնակարգված է, Էլեկտրակայաններին կարելի է
հնարավորություն տալ արտահանել ավելցուկային
Էլեկտրաէներգիան: Օրինակ՝ ատոմակայանի կամ
հիդրոէլեկտրակայանների կողմից արտադրված մրցունակ սակագնով
Էլեկտրաէներգիան պահանջարկի դեպքում կարող է արտահանվել: Դա
կլուծի երկու էական խնդիր՝ լրացուցիչ ֆինանսական հոսքերի
ապահովումը և այդ Էլեկտրակայանների՝ երկդրույթային
սակագնային համակարգում հզորության դրույթի նվազմանը, քանի
որ այս դեպքում կայանները կաշխատեն ավելի մեծ ծավալով և
հետևաբար ավելի քիչ գումար անհրաժեշտ կլինի հատկացնել
պարզապես հզորության դրույթի ծածկման համար: Որպես հետևանք

¹³² ՀՀ կառավարության 2017 թ. հունիսի 27-ի նիստի N 32 արձանագրային որոշում

դակարող է հանգեցնել նաև արտադրված էլեկտրաէներգիայի միջին կշռույթային սակագնի նվազման:

Էլեկտրաէներգիայի տարանցման մասին պետք է նշել, որ դա հնարավորություն է, որն իր հերթին կարող է օժանդակել ՀՀ էլեկտրաէներգիայի ներքին շուկայի գործունեության արդյունավետության բարձրացմանը: Լրացուցիչ տարանցման տարբերակների առաջանալու հնարավորություն կլինի ՀՀ և Թուրքիա միջև խնդիրների լուծման դեպքում:

Այն դեպքում, երբ իսկապես շահավետ պայմաններ ստեղծվեն էլեկտրական էներգիայի մեծ ծավալով տարանցիկ հոսքեր իրականացնելու համար, Հայաստանի համար անհրաժեշտություն կառաջանա հարևան երկրների հետ համագործակցության խթանման նպատակով իրականացնել միջհամակարգային հարաբերությունների արդիականացման և տեխնիկական վերազինման գործունեություն, որին համակարգը պետք է պատրաստ լինի համապատասխան ծրագրերով:

Այսպիսով, կարելի է ընդգծել, որ ՀՀ-ում օրենսդրական առանցքային խոչընդոտներ են համարվում համակարգում գործող անկատար մեթոդոլոգիան, գործող մեթոդոլոգիայում շուկայի մասնակիցների պատասխանատվությունների շրջանակների սահմանազատման բացակայությունը, և դրան զուգահեռ պատասխանատվությունը բաշխելու կարգավորումներ չեն գործում, որի հետևանքով ամբողջ պատասխանատվությունը փոխանցվում է վերջնական սպառողին: Անհրաժեշտ է մշակել շուկային նոր մոդել՝ պատասխանատվությունների շրջանակների ողջամիտ ու տրամաբանական բաշխմամբ:

3.2 Մրցակցային հարաբերությունների բարելավման ուղիները ՀՀ էներգետիկ ոլորտում

Էլեկտրաէներգիայի շուկայի կարգավորման վերաբերյալ պետք է նշել, որ Հայաստանի էլեկտրաէներգիայի շուկան դեռևս չունի ամբողջապես կայացած մրցակցության հատկանիշներ, դրամեծ մասը կարգավորվող է և ենթարկված է տարբեր սահմանափակումների: Համակարգը գտնվում է աստիճանական ազատականացման ընթացքում:

Այս տեղ արտադրության, հաղորդման, բաշխման և այլ գործառնության տարանջատումը բխում է համակարգի մրցակցային հարաբերությունների բարելավման նպատակից:

Ինչպես նշված է Էներգետիկայի մասին ՀՀ օրենքի փոփոխության մասին օրենքում¹³³, Էլեկտրական Էներգիայի մեծածախ առևտրի լիցենզիա ունեցող անձին տրվում է շուկայի կանոններով սահմանված դեպքերում և կարգով չկարգավորվող գներով Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցներից և ինքնավար Էներգաարտադրողներից Էլեկտրական Էներգիա գնելու, Էլեկտրական Էներգիա ներկրելու, մեծածախ շուկայում այն վաճառելու և արտահանելու իրավունք: Էլեկտրական Էներգիան կարող է արտահանվել միայն ներքին սպառման պահանջարկի բավարարումից հետո, որը հաստատում է Էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորը՝ շուկայի կանոններով սահմանված կարգով: Էլեկտրական Էներգիայի մեծածախ առևտրի լիցենզիա ունեցող անձը պարտավոր է երաշխավորել մեծածախ շուկայում գնված Էլեկտրական Էներգիայի (հզորության) դիմաց վաճառողների օգտին վճարումները՝ հանձնաժողովի սահմանած կարգով: Նույն օրենքով սահմանվում է, որ Էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկան ներառում է մատակարարների և (կամ) երաշխավորված մատակարարի կողմից սպառողներին (բացառությամբ որակավորված սպառողների) Էլեկտրաէներգիայի մատակարարումը՝ հանձնաժողովի սահմանած կանոնների համաձայն: Սպառողն իրավունք ունի իր հայեցողությամբ ընտրելու մատակարար և շուկայի կանոնների համաձայն՝ փոխարինելու վերջինիս: Հաղորդման ոլորտի մասին պետք է նշել, որ այն ամբողջությամբ կարգավորվում է: ՀԾԿՀ-ն Էլեկտրաէներգիայի հաղորդման օպերատորին տրամադրում է կառուցման ապաստան և ակտիվների կառավարման մեկ լիցենզիա: Ինչպես նաև սահմանված չեն թե ինչ փուլերով կարող է տեղի

¹³³ Հայաստանի Հանրապետության օրենքը «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխության ներկրումն և լրացումներ կատարելու մասին, հոդված 25, ընդունվել է 07.02.2018

ուև են նալ հաղորդման ցանց այլ կազմակերպության մուտք գործելու իրավունք ստանալու գործընթացը:

Բաշխման ոլորտը նույնպես ամբողջությամբ կարգավորվող է և ՅԾԿՅ-ն տրամադրում է մեկ լիցենզիա կառուցապատման և շահագործման համար: Սպառողներին էլեկտրաէներգիայի մատակարարման իրավունքը մինչև 2016թ. -ի փետրվար ամիսը պատկանում էր բացառապես բաշխման գործառույթ իրականացնող ընկերությանը՝ «ՅԵՑ» ՓԲԸ-ին: Բաշխումը մատակարարումից անջատելու հստակ կանոնակարգեր դեռևս մշակված չեն: Այսինքն, բաշխման գործառույթ իրականացնող ընկերությունն այս պարագայում միակ մատակարարն է իր գործառույթներն իրականացնում է մենաշնորհի դիրքերից: Բաշխման գործառույթ իրականացնող ընկերությունը էլեկտրաէներգիան ձեռք է բերում արտադրող ընկերություններից՝ կարգավորվող գներով և ուղիղ պայմանագրերով: Ուստի, շուկան մոնոպոսն կառուցվածքի շրջանակներում է գործում, որտեղ բաշխման գործառույթ իրականացնող ընկերությունը հանդես է գալիս միակ գնորդի դերում: Էլեկտրաէներգետիկական համակարգում \$ինանսական հոսքերը տեղի են ունենում բաշխման գործառույթ իրականացնող ընկերության միջոցով: Այս հանգամանքն իր մեջ պարունակում է եական նշանակություն ունեցող ռիսկեր շուկայի մասնակիցների և սպառողների համար, օրինակ՝ երբ էլեկտրաէներգիայի անավորված արտադրության ծավալները չապահովվեն ինչ-որ պատճառներով: Եթե բաշխման գործառույթ իրականացնող ընկերությունը \$ինանսապես կայուն չլինի ապա, դա կարող համակարգի փլուզման պատճառ կարող է դառնալ: Այդպիսի դեպքի վառ օրինակ է «ՅԵՑ» ՓԲԸ \$ինանսական ճգնաժամի ժամանակաշրջանը: Յետևաբար, համակարգի տարեկան հաշվեկշիռը ուղղակիորեն ռիսկեր կարող է առաջացնել բաշխման գործառույթ իրականացնող ընկերության համար, բայց ոչ առանձին էլեկտրաէներգիա արտադրող կայանի կամ առանձին սպառողի համար: Այդ ռիսկերը ծածկվում են վերջնական սպառողների սակագների միջոցով, երբ Ետնահաշվարկ է կատարվում: Էլեկտրաէներգետիկական համակարգի ազատականացման շրջանակներում բաշխման տարանջատումը

մատակարարման համակարգից մրցակցության մեծ շարժառիթներ կստեղծի, երբ համապատասխան լիցենզիա ունեցող էլեկտրաէներգետիկական համակարգի տարբեր մասնակիցներ հնարավորություն կունենան մատակարարել ավելի ցածր գնով էլեկտրաէներգիա, ինչը կբերի էլեկտրաէներգիայի սակագնի իջեցմանը: Արդեն սահմանված բաշխման սակագները թույլ են տալիս էլեկտրական էներգիա ձեռք բերել նախընտրած մատակարարներից և նույնիսկ ներկրողից ու լիցենզավորված արտադրողներից: Գործընթացի իրականացման բոլոր փուլերում անհրաժեշտ է հաշվի առնել համապատասխան օտարերկրյալ ավագույն փորձը:

Համակարգի անկախ օպերատորը իր գործունեությունն իրականացնում է ՀԾԿՀ-ի կողմից տրամադրված լիցենզիայի հիման վրա: ՀԾԿՀ-ն համակարգի անկախ օպերատորի կողմից մատուցված ծառայությունների համար սահմանում է ամենամսյա վճարներ: Համակարգի ասնկախ օպերատորն իր գործունեության շրջանակներում իրականացնում է մեծածախ շուկային և տնտեսական կարգավորմանը վերաբերող գործառնությունները:

Հաշվարկային կենտրոնը նույնպես գործում է ՀԾԿՀ-ի կողմից տրված լիցենզիայի հիման վրա, իր ծառայությունների դիմաց ստանալով ամենամսյա վճարներ: Այժմ Հաշվարկային կենտրոնի պատասխանատվության շրջանակներն ավելացել են, և այն իրավասություն է ձեռք բերել նաև ծառայությունների մատուցել էլեկտրաէներգետիկական համակարգին, որպես շուկայի օպերատոր: Հաշվարկային կենտրոնը պատասխանատու է մեծածախ շուկայում էլեկտրաէներգիայի հաշվառման և հաշիվների ներկայացման համար¹³⁴: էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում կնքվող պայմանագրերը ներկայացվում են էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորին և հաշվառվում նրա կողմից՝ շուկայի կանոններով սահմանված կարգով: Նման գործընթաց գոյություն ունի նաև Եվրամիության էլեկտրաէներգետիկական շուկաներում և ներառում է լայն շրջանակներ, կազմակերպությանը

¹³⁴ <http://www.minenergy.am/structures/view/structure/116> ԷԲՊՆ պաշտոնական կայքի հրապարակում

հնարավորությունն թույլ տալով գործել որպես Շուկայի Օպերատոր և Էլեկտրաէներգետիկ շուկաների կազմակերպման համար պատասխանատվություն ունեցող գերատեսչություն:

ՀՀ-ում Էլեկտրաէներգիայի ներկրման և արտահանման մեխանիզմները սահմանվել են Էներգետիկայի մասին օրենքով, իսկ կանոնակարգերը սահմանվում են օրենսդրական այլ փաստաթղթերի միջոցով: Այս բնագավառի մասին առանցքային փաստաթղթերը հետևյալն են.

- Ըստ Էներգետիկայի մասին օրենքի ներկրման կամ արտահանման գործարքներ իրականացնելու համար յուրաքանչյուր անձին անհրաժեշտ է համապատասխան լիցենզիա, իսկ բոլոր պայմանագրերը մինչև ուժի մեջ մտնելը անհրաժեշտ է, որ գրանցված լինեն Հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովը սահմանում է նաև լիցենզավորման և պայմանագրերի գրանցման ընթացակարգերը: Էներգետիկայի մասին օրենքը նաև սահմանում է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի ներկրման և արտահանման ընթացքի կարգավորման պատասխանատվությունը: Էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիան հաստատվում է միայն շուկայի ներքին պահանջարկը ամբողջապես բավարարելուց հետո, և եթե Էլեկտրաէներգիայի արտահանումը չի վնասում ներքին սպառողների շահերին¹³⁵:
- ՀԾԿՀ կողմից պայմանագրերի գրանցման կարգի¹³⁶ համաձայն դիմողը ներկայացնում է պայմանագրի երեք օրինակ, այնուհետև ՀԾԿՀ ստուգում է դրանց համապատասխանությունը օրինակելի պայմանագրերի¹³⁷ հետ և տասնաչխատանքային օրվա ընթացքում հաստատում է այն:

¹³⁵ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 07.03.2001թ.

¹³⁶ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=85057> ՀԾԿՀ N 285-Ն որոշումը Էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց միջև կնքված և Էլեկտրական Էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման պայմանագրերի գրանցման կարգը հաստատելու և ՀՀ Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի նոյեմբերի 13-ի n 59 որոշումն ուժի կորցրած ճանաչելու մասին, 31 հունիսի 2013 թ.

¹³⁷ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=86355> ՀԾԿՀ N 48-Ն որոշումը Էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի (արտադրող-արտահանող) պայմանագրի և Էլեկտրաէներգիայի առուվաճառքի լրացուցիչ (հաշվեկշռող) պայմանագրի օրինակելի ձևերը հաստատելու մասին, 29 ապրիլի 2005 թ.

- Էներգետիկայի մասին օրենքով սահմանված են նաև արտակարգ իրավիճակները, որպես վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներ, երբ առկա պահուստային հզորություններով անհնար է իրականացնել տնտեսական կարգավորումը: Էներգետիկայի մասին օրենքում վերջին ժամանակաշրջանում արված ճշգրտումները հնարավորություն են ընձեռում արտակարգ իրավիճակի դեպքում արտահանել Էլեկտրաէներգիան ողջամիտ արժեքով և ձեռք բերել այն բաշխիչ ընկերությունից: Փոփոխությունների համաձայն ՅԿԿ-ին նաև իրավունք է վերապահվում որոշել Էլեկտրական Էներգիայի առևտրի կանոնները մյուս երկրների հետ արտակարգ իրավիճակի դեպքում և ՀՀ տարածքով տարանցիկ փոխադրման ժամանակ: Էներգետիկայի մասին օրենքով, ՅԿԿ-ն սահմանել է վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում Էլեկտրական Էներգիայի արտահանման և ներկրման կարգը¹³⁸, որտեղ Էլեկտրական Էներգիայի առևտրի գործունեության մեջ զաղվում է Հաղորդման օպերատորը, իսկ Համակարգի անկախ օպերատորը զբաղվում է կարգավորմամբ: Էլեկտրաէներգետիկական համակարգի անվտանգության և հուսալիության սկզբունքներով Համակարգի անկախ օպերատորը կայացնում է տվյալ իրավիճակով պայմանավորված որոշումներ, դրա վերաբերյալ իրազեկելով Հաղորդման Օպերատորին, Բաշխիչ ցանցի օպերատորին և Հաշվարկային կենտրոնին:
- Էներգետիկայի մասին օրենքով տարանցիկ փոխադրումը որոշվում է որպես ՀՀ մաքսային տարածքով Էլեկտրաէներգիայի տարանցիկ փոխադրում՝ մուտքի մաքսային մարմնից մինչև ելքի մաքսային մարմին: Այս գործընթացը կարգավորվում է Էներգետիկայի մասին օրենքի համաձայն և Մաքսային կարգավորման մասին օրենքով, ինչպես նաև այլ իրավական փաստաթղթերով: ՅԿԿ-ն վերջին ժամանակաշրջանում

¹³⁸ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=96534> ՅԿԿ N 28-Ն որոշումը Էլեկտրաէներգետիկական համակարգում վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում Էլեկտրական Էներգիայի ներկրման և արտահանման կարգը հաստատելու մասին, 4 մարտի 2015 թ.

հաստատեց տարանցիկ փոխադրման կարգը¹³⁹: ՀՀ տարածքով տարանցիկ փոխադրումը իրականացնում է Հաղորդման օպերատորը («ԲԷՏ» ՊԲԸ), իսկ Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը և Հաշվարկային կենտրոնը սահմանված կարգով զբաղվում են իրենց գործունեությամբ: Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և Հաշվարկային կենտրոնի հետ Էլեկտրաէներգիայի տարանցիկ փոխադրմամբ զբաղվելու համար Հաղորդման ցանցի օպերատորի հետ կնքում է ՀԾԿՀ կողմից սահմանված օրինակելի ձևին համապատասխանող պայմանագիրը: Հաղորդման ցանցի օպերատորի, Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և Հաշվարկային կենտրոնի տարանցիկ փոխադրման ծառայության վճարումը ևս կարգավորվում են Տարանցիկ փոխադրման կարգով:

Արդյունքում տեղի է ունենում հետևյալը՝

- Լիցենզավորման գործընթացի ժամկետը կարող հասնել մինչև ութսուն աշխատանքային օր, որը բավականին տևական է, և բացասականորեն է ազդում առավել շահավետ կարճ ժամանակահատվածում առևտուր իրականացնելու վրա: Պարտադիր վճարները և երաշխիքները կարող են էականորեն բացասական ազդեցություն ունենալ պայմանագրերի ֆինանսական ողջամտության վրա, նաև այն դեպքում, երբ Էլեկտրական Էներգիայի ներկրումը կամ արտահանումը սահմանափակ են:
- Արտահանողը պետք է պայմանագրեր կնքի առևձայն Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, հաղորդման ցանցի օպերատորի և Հաշվարկային կենտրոնի հետ: Նշված կողմերի հետ պայմանագրեր կնքելու վերջնական ժամկետներ սահմանված չեն, որը բերում է անորոշության ռիսկայնության ավելացմանը:

¹³⁹ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=100998> ՀԾԿՀ N 341-Ն Որոշումը ՀՀ տարածքով Էլեկտրական Էներգիայի (հզորության) տարանցիկ փոխադրման կարգը սահմանելու մասին, 30 սեպտեմբերի 2015 թ.

- Պայմանագրերը սկսում են գործել միայն Յանուարի 1-ին ծառայությունները կարգավորող հանձնաժողովում հաստատվելուց հետո, որը ժամկետներն ավելացնում է ևս տասը աշխատանքային օրով:

Նշված կանոնակարգերը էականորեն խոչընդոտում են արտահանման և ներկրման գործունեությանը, այսինքն, կադրանց ամբողջովին վերանայման անհրաժեշտության՝ կարգավորման արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

- Թվարկված իրադրությունների՝ կարևոր է իրագործել հետևյալ քայլերը՝
 - Տարանջատել բաշխման համակարգը մատակարարման համակարգից և այդ ընկերությունների համար սահմանել տարբերակված կարգավորում
 - Ապահովել արտահանում ու ներմուծումը սահմանող կանոնակարգի պարզեցումը:
 - Փոփոխություն կատարել Յանուարի 1-ին ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից և վերջնական սպառողներին լարման մակարդակներով տարբերակված էլեկտրական էներգիայի սակագների կառուցվածքում և դրանց մեթոդաբանությունը սահմանել օգտագործելով համապատասխան լարման մակարդակի սպառողներին էլեկտրաէներգիայի բաշխման անհրաժեշտ միջինացված ծախսերի իրական մեծությունը:

Ներկայում ամբողջ աշխարհում բավականին մեծ թափ է հավաքել էլեկտրաէներգիայի արտադրության այլընտրանքային աղբյուրները (հատկապես Չինաստան, Ավստրալիա, Գերմանիա, Ծվեյցարիա, սկանդինավյան երկրներ, Ֆիլիպիններ, Նոր Զելանդիա, հարավ-արևելյան Ասիայի այլ երկրներ և այլն), մասնավորապես արևային էլեկտրաէներգիայի կորզումը: Ճիշտ է, այն դեռևս չի կարողանում լուրջ մրցակցության մեջ մտնել հիդրոէլեկտրակայանների կամ ջերմաէլեկտրակայանների հետ, հիմնականում կապված արտադրության շատ մեծ մասշտաբների անհնարինություն հետ (որոշ շրջաններում հիմնական խնդիրը արևային օրերի սակավությունն է), սակայն տեխնոլոգիաների զարգացման ներկայիս տեմպերը թույլ է տալիս ենթադրել, որ

Էլեկտրաէներգետիկայի տվյալ ճյուղը մեծ ապագա ունի, որի օգտին է նաև այս եղանակով էլեկտրաէներգիայի ստացման էկոլոգիապես անվնաս բնույթը: Հայաստանում ևս այլ ոլորտը զարգանում է բավականին արագ տեմպերով, և վերջերս, արդեն մեկնարկել է նաև արևային վահանակների արտադրությունը մեր հանրապետությունում: Այս ճյուղի զարգացման հիմնական առանձնահատկությունը նաև այն է, որ այն թույլ է տալիս անհատ սպառողներին արտադրել "սեփական" էլեկտրաէներգիան և դուրս գալ դրա ձեռք բերման կախածությունից, որտեղ բաշխչ ընկերությունները հիմնականում օժտված են լինում բնական մենաշնորհով: Պետք է նշել, որ ըստ իրականացված ուսումնասիրությունների արդյունքների Հայաստանն ունի արևային էներգիայի օգտագործման մեծ ներուժ: Նշված արդյունքները փաստում են, որ $1մ^2$ հորիզոնական մակերևույթի վրա արևային էներգիայի հոսքի միջին տարեկան արժեքը կազմում է 1720 կՎտժ/մ², իսկ հանրապետության տարածքի մեկ քառորդն օժտված է տարեկան 1850 կՎՏժ/մ² ինտենսիվությամբ արևային էներգիայի պաշարներով¹⁴⁰: Համեմատության համար նշենք, որ ըստ տարբեր գնահատականների եվրոպական երկրների համար, որոնք համարվում են այս կերպ իրականացվող էլեկտրաէներգիայի արտադրության առաջադեմ կրողները, նույն ցուցանիշը գնահատվում է միջինում 1000 կՎտժ/մ²: Դեռևս մեկ-երկու տարի առաջ նշվում էր, որ անհատ սպառողների համար սեփական արևային վահանակների միջոցով էլեկտրաէներգիայի ստացման համար պահանջվող ներդրումների հետզնման ժամկետը 8-10, որոշ դեպքերում նաև 12 տարի է, ինչը այդքան էլ շահավետ չէր, իսկ ներկայումս արդեն, տեխնոլոգիաների զարգացմամբ և գների որոշակի իջեցմամբ պայմանավորված, ետզնման ժամկետը բավականին կրճատվել է և որոշ լավատեսական գնահատականներով կազմում է 3-4 տարի: Սա արդեն շատ լուրջ նախադրյալ է, արևային փոքր կայանների (թեկուզև միայն սեփական պահանջարկի բավարարման համար) զանգվածային անցման համար: Այսպիսով, ամբողջ աշխարհի էլեկտրաէներգիայի բաշխմամբ

¹⁴⁰ http://www.minenergy.am/page/sun_energy Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության պաշտոնական կայքի հրապարակում

գբադվող ընկերությունները, մասնավորապես ՀՀ օրինակով ՀԵՑ-ը, ունեն շատ լուրջ մարտահրավեր՝ դիմակայելու այս նոր մրցակցությունը՝ նաև տնային տնտեսությունների հետ: Փաստորեն, անհրաժեշտ է մասշտաբային ներդրումների միջոցով օպտիմալացնել գործող համակարգը, մեծ ուշադրություն դարձնել նաև վերականգնվող էլեկտաէներգիայի աղբյուրների վրա և որ ամենակարևորն է՝ հնարավորինս նվազեցնել էլեկտրաէներգիայի մատուցման սակագները՝ փորձելով այս եղանակով բարձրացնել տնային տնտեսությունների կողմից արևային էլեկտրաէներգիայի ստացման համար կատարվող ներդրումների հետզնման ժամկետը (հետզնման ժամկետի հաշվարկման ժամանակ էլեկտրաէներգիայի ներկայիս սակագինը դիտարկվում է որպես այլընտրանքային ծախս): 2018թ. -ի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ Էներգետիկայի մասին օրենքի փոփոխությունը¹⁴¹, ըստ որի՝ մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը արևային էներգիայի կիրառմամբ ինքնավար էներգաարտադրողների տեղակայանքների դրվածքային հզորությունը կարող է հասնել էլեկտրական էներգիայի իրենց սպառիչների տեղակայված ընդհանուր հզորությանը, բայց ոչ ավելի, քան 500 կիլովատ, որոնց գործունեությունը ենթակա չէ կարգավորման կառուցման և արտադրության ժամանակահատվածներում: Հարկ է նշել, որ վերջերս հայտնի դարձավ, որ ՀԵՑ-ը պատրաստվում է մոտ 200 միլիոն ԱՄՆ դոլար ներդրումներ կատարել տվյալ ոլորտում, որի հիմնական մասը լինելու է վարկային միջոցներով: Էլեկտրաէներգետիկական համակարգի հնարավոր զարգացումն ուղիների մասին կանխատեսումներ իրականացնող որոշ մասնագետներ համարում են, որ արևային էլեկտրակայանների միջոցով ստացված էլեկտրաէներգիայի ծավալների մեծացումը կարող է այլընտրանքային լուծում լինել առկա խնդիրների լուծման համար: Հարկ ենք համարում նշել, որ չնայած էլեկտրաէներգիայի ստացման Էկոլոգիապես մաքուր եղանակին, ցածր ինքնարժեքին և տեղակայման ու օգտագործման դյուրինությունը՝ արևային

¹⁴¹ ՀՀ օրենքը «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-262-Ն ընդ. 2017թ. դեկտեմբերի 26

Էլեկտրակայանների արտադրած էլեկտրաէներգիայի ծավալի զգալի ավելացումը ՀՀ էներգետիկ հաշվեկշիռում կարող է պարունակել ռիսկեր էներգետիկ անվտանգության համատեքստում: Դա պայմանավորված է նրանով, որ այս կերպ արտադրված էլեկտրաէներգիան ունի մեծ կախվածություն եղանակային պայմաններից ինչպես նաև առկա է այն փաստը, որ այս կայանները գիշերային ժամերին էլեկտրաէներգիա չեն արտադրում, ուստի այս եղանակը չի կարող համարվել երկրում էլեկտրաէներգիայի ստացման հիմնական աղբյուր, այլ կարող է հանդես գալ որպես համակարգին առաջնային օժանդակող միջոց էլեկտրաէներգիայի արտդրության համար:

ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ էլեկտրաէներգետիկական շուկան ունի օրենսդրական էական բարեփոխումների կարիք: Շուկայի ազատականացման գործընթացին զուգահեռ անհրաժեշտ է առանցքային համարել էլեկտրաէներգետիկական համակարգում մրցակցային հարաբերությունների բարելավման քաղաքականությունը, որի կարևոր քայլերից է բաշխման և մատակարարման համակարգերի տարանջատումը:

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտության արդյունքներով ձևավորված հիմնական հետևությունները, եզրահանգումները և դրանց կիրառմանն առնչվող մեր կողմից կատարված առաջարկությունները հիմնականում հանգում են հետևյալին.

1. Ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ տնտեսագետների կարծիքները Էլեկտրաէներգետիկական համակարգի էության բացահայտման և բովանդակության մեկնաբանման հարցում ոչ միայն չեն հակասում միմյանց, այլ լրացնում ու ավելի ամբողջական են դարձնում հիմնախնդրի դիտարկումը:
2. Էլեկտրաէներգետիկական համակարգի դերի նորովի մեկնաբանման հարցում կարևորվում է դրա՝ երկու տեսանկյունով ուսումնասիրությունը. դա դիտարկել որպես արտադրական ենթակառուցվածքի կարևոր տարր, որով հիմնավորվում է Էներգետիկ բնագավառի դերը տնտեսական զարգացման գործում և երկրորդ՝ դրա դիտարկումը որպես Էներգետիկ անվտանգությունն ապահովող կարևոր բաղկացուցիչ:
3. Տնտեսագիտական գրականությունում կայունացել է այն ըմբռնումը, որ Էներգետիկայի բնագավառը Էլեկտրական և ջերմային Էներգիայի արտադրության, Էլեկտրական, ջերմային Էներգիայի և բնական գազի հաղորդման ու բաշխման, Էլեկտրաէներգետիկական և բնական գազի ոլորտների համակարգերի օպերատորի ծառայության իրականացման, Էլեկտրաէներգետիկայի և ջերմաէներգետիկայի ոլորտներում նոր արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման, Էլեկտրական Էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման գործունեության մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտների համախումբ է:

4. Տնտեսագիտական գրականության մեջ էներգետիկ համակարգի արդյունավետությունը սահմանվում է հետևյալ երկու գործոններով՝ էներգետիկ համակարգի շահագործում՝ էլեկտրաէներգիայի հոսսալի մատակարարում ապահովելու համար, վերջնական սպառողի սակագնի նվազում կամ, առնվազն՝ սակագնի աճի նվազում:

5.33-ում էլեկտրաէներգիայի սակագնի հաշվարկման մեթոդոլոգիայի, սակագնի կառուցվածքի և կազմի ուսումնասիրության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ սակագնի հաստատման մեթոդոլոգիան անկատար է, երկդրոյքային սակագնի սահմանման միասնական մեթոդոլոգիա չկա: Խոշոր արտադրողների սակագները տարբերակվում են ըստ հզորության և էլեկտրական էներգիայի, վերականգնվող էներգիայի գները կարգավորվում են առավելագույն գնի հաշվարկման մեթոդոլոգիայով, տարեկան վերահաշվարկի բանաձևով՝ հաշվի առնելով գնաճի և անվանական փոխարժեքի տատանումները, վերջնական սպառողի սակագները տարբերակվում են ըստ լարման մակարդակների, ցերեկային և գիշերային ժամերի: Սահմանված չեն հզորության դիմաց վճարներ, պիկային սակագներ կամ ծառայության վճարներ:

6.33 էլեկտրաէներգետիկ շուկան միակ գնորդի մոդելով գործող, բաշխման համակարգը մատակարարման համակարգից տարանջատված չէ: Հզորությունները կառավարվում են «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից և, որպես բացասական հետևանք, վճարումը հիմնվում է հայտարարված հզորությունների վրա:

7. ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի կառուցվածքով և կառավարման մոդելով պայմանավորված՝ շուկայի արդյունավետությունը ցածր է, դեռ ավելի նմանաձև գների քննարկումը թույլատրող մեխանիզմները բացակայում են, որը վերջնական սպառողներին տրամադրվող էլեկտրաէներգիայի սակագնի լրացուցիչ բարձրացման լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում: Ծուկան շահագործվում է

միայն փաստացի ռեժիմով և սակագնի սահմանված վերին շեմով: Էներգետիկ շուկայի արդյունավետության բարձրացման կարևոր խոչընդոտ է նաև տեղական սպառողների պաշտպանության բացակայությունը:

8.Քանի որ ՀՀ-ում ներքին սակագների վերահաշվարկն ամբողջությամբ կատարվում է մեկ տարվա կտրվածքով, առաջանում է կարգավորման խթանող մեխանիզմների վերանայման խնդիր:

9.Վերջին տարիների ընթացքում ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ արտադրության ծավալները, աճման կամ նվազման հստակ միտումներ չեն դրսևորել:

10.Տարիների ընթացքում ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ արտադրության ծավալների ցուցանիշի անկանոն փոփոխությունը մի շարք պատճառներ ունի, օրինակ՝ երկրում տնտեսական ակտիվությունը, ՀՀ-ից ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱ գնող երկրների պահանջարկը և այլն:

11.2005-2016թթ. ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱ արտադրող կազմակերպությունների արտադրած ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱ ծավալների Էական կառուցվածքային տեղաշարժեր են արձանագրվել:

12.2005-2016թթ. Առումակայանի միջին տեսակարար կշիռը 37.6% է, ՋԷԿ-երինը՝ 38.2%, ՀԷԿ-երինը՝ 24.2%:

13.ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ շուկան դիվերսիֆիկացված է, չնայած, որ 2011-2014թթ Հերֆինդալ Հիրշմանի գործակիցը գտնվել է 2000-2500 միջակայքում, փաստելով շուկայի միջին կենտրոնացվածությունը, այնուամենայնիվ ցուցանիշը ավելի մոտ է բարձր համակենտրոնացման շեմին: Այս դիտարկման լույսով հիմք ունենք եզրակացնելու, որ կենտրոնացվածության բարձր աստիճանը կարևոր հիմնախնդիր է, հատկապես, Էներգետիկ անվտանգության տեսանկյունից:

14.Հետճգնաժամային տարիներին արդյունաբերության մեջ մեծ տեսակարար կշիռ ունեցող «ճյուղերում» արտադրողականության ցուցանիշի հերթականության Էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

15. 2009-2016թթ. առադրողականության ամենաբարձր մակարդակը արձանագրվել է մետաղական արտադրության ոլորտում, բացառությամբ 2014թ. , երբ էլեկտրաէներգիայի արտադրության արտադրողականությանը գերազանցել է մետաղական հանքաքարի արդյունաբերության ցուցանիշը:

16. Էներգետիկայի բնագավառն ու էլեկտրաէներգետիկական համակարգն իրենց ուրույն դերն ունեն ՅՅ տնտեսության զարգացման, էներգետիկ և տնտեսական անվտանգության ապահովման գործընթացում: Չնայած այն փաստին, որ էներգետիկական համարվում է տնտեսության մյուս ճյուղերի գործունեությանը սնուցող օղակներից մեկը, այնուամենայնիվ դրա հետ ուժեղ կամ թույլ փոխկապակցվածությունն ունեցող այլ ճյուղերն ունեն տարատեսակ ազդեցությունն ուսումնասիրվող բնագավառի վրա:

17. ՅՅ-ում էներգետիկայի և տնտեսության մյուս ոլորտների միջև կոռելացիոն կապերի ուսումնասիրությամբ բացահայտվել է, որ որ էներգետիկայի և տնտեսության մյուս ճյուղերի միջև կապերը ունեն ամրության տարբերաստիճաններ: Թույլ է էներգետիկայի և գյուղատնտեսության միջև կապը, քանի որ գյուղատնտեսությունը հիմնականում անուղղակիորեն է նպաստում էներգետիկ ոլորտի աճին և ազդեցությունը լագային է: Թույլ է նաև մշակող արդյունաբերության և էներգետիկայի միջև կապը: Թույլ դրական կապ է բացահայտվել նաև էներգետիկայի և հանքարդյունաբերության միջև: Թույլ բացասական կապ է բացահայտվել նաև էներգետիկայի և շինարարության ոլորտի միջև: Սերտ է կապը էներգետիկայի և մեծածախ և մանրածախ առևտրի, փոխադրումների և պահեստային տնտեսության, կացության և հանրային սննդի կազմակերպման, տեղեկատվության և կապի, ֆինանսական և ապահովագրական գործունեության միջև:

18. Էներգետիկայի և տնտեսության մյուս ճյուղերի առկա փոխադարձ կապերի ամրության աստիճանի գնահատումները փաստում են, որ շինարարության ոլորտի հետ կապը բոլոր

լ ազերում բացասական է, սակայն այդ բացասական կապը էլ ավելի է ամրանում, երբ շարժվում ենք մեկ տարի առաջ: Առևտրի և էներգետիկայի միջև կոռելյացիոն կապը գնալով բարձրանում է, երբ տեղափոխվում ենք ժամանակային լ ազերով դեպի առաջ: Ամենաբարձր գործակիցը ստացվում է մեկ տարի անց, որը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ ներկայիս բարձր շրջանառությունը առևտրում հաջորդ չորս եռամսյակներում դեռևս դրականորեն է ազդում էներգետիկայի բնագավառում համախառն արտադրանքի աճի վրա:

19. Արդյունաբերության և էներգետիկայի միջև կոռելյացիոն կապը ավելի ուժգնանում է դեպի հաջորդ եռամսյակներ տեղաշարժվելիս, սակայն՝ կտրուկ թուլանալով երրորդ լ ազից հետո, դեռևս մնում է բարձր մակարդակի վրա: Նման պատկեր է նաև ծառայությունների դեպքում, սակայն այստեղ կոռելյացիան խորանում է մինչև երկրորդ լ ազը, այնուհետև փոքր ինչ թուլանում է, իսկ հետընթաց լ ազերում կապը գրեթե նույնն է:

20. ՅՆԱ աճից էլ եկտրաէներգիայի արտադրության \$ուսկցիոնալ կապի գնահատման արդյունքները փաստում են, որ ՅՆԱ-ի 1 տոկոս աճի դեպքում էլ եկտրաէներգիայի արտադրությունը պետք է աճի միջինում 0.25 տոկոսով:

21. ՅՆԱ-ի և էլեկտրաէներգիայի արտադրության ճեղքերի միջև առկա կապի, գնահատումները հինք են պնդելու, որ վերոնշյալ փոփոխականների ճեղքերի միջև առկա կապը ամուրի է: Ճիշտ է, իրականում տարբեր լ ազերում կարող է դրսևորվել ավելի ամուր կապ ամուր սակայն ցուցանիշների տատանողականությունը շատ տարբեր է, և ՅՆԱ-ի ճեղքի միջակայքը ավելի նեղ է: Այնուամենայնիվ ճեղքերի միջև գնահատվել է դրական կապ, որը հիմք է եզրակացնելու, որ ՅՆԱ-ի փաստացի ցուցանիշի՝ պոտենցյալի գերազանցման դեպքում էլեկտրաէներգիան գերարտադրվում է:

22. «ՅԷՑ» ՓԲԸ էլեկտրաէներգիայի սպառման հիմնական սեկտորը բաժին է ընկնում բնակչությանը, արդյունաբերությանը և

այլ սպառողներին, իսկ բյուջետային կազմակերպությունների, ոռոգման, տրանսպորտի ու ջրահեռացման սպառումն ունի համեմատաբար փոքր տեսակարար կշիռ: ՀՀ տնտեսական զարգացման տարբեր շրջափուլերում «ՀԵՑ» ՓԲԸ կողմից մատակարարված էլեկտրաէներգիայի սպառման ծավալային կառուցվածքում էական փոփոխություններ չեն արձանագրվել, անգամ 2009թ. տնտեսական ճգնաժամից տարիներ առաջ և հետո:

23. Վիճակագրական տվյալները փաստում են, որ տնտեսության տարբեր ոլորտներում արտադրողականության ցուցանիշները միմյանցից էականորեն տարբերվում են: ՀՀ-ում աշխատանքի արտադրողականության ամենաբարձր մակարդակը գրանցվել է արտահանման ուղղվածությամբ ճյուղերում, ինչպես նաև այն ոլորտներում, որտեղ զգալի է օտարերկրյա սեփականության առկայությունը: Առանձին ոլորտներում արտադրողականության մակարդակները և տնտեսության կառուցվածքի առանձնահատկությունները հսկայական ազդեցություն ունեն տնտեսության մեջ արտադրողականության ընդհանուր մակարդակի վրա:

24. Տարածաշրջանում մրցակցող երկու տնտեսական համակարգերի՝ խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի և ԵԱՏՄ-ի սահմանին հայ-վրացական էներգետիկ համագործակցությունը հնարավորություններին որ հարթակ է, որից երկու երկրները՝ համատեղ աշխատանքի միջոցով, պարտավոր են հասնել փոխշահավետ տնտեսական իրավիճակի:

25. Լիցենզավորման գործընթացի ժամկետը կարող հասնել մինչև ութսուն աշխատանքային օր, որը բավականին տևական է, և բացասականորեն է ազդում առավել շահավետ կարճ ժամանակահատվածում առևտուր իրականացնելու վրա: Պարտադիր վճարները և երաշխիքները կարող են էականորեն բացասական ազդեցություն ունենալ պայմանագրերի \$ինսուսական ողջամտության վրա, նաև այն դեպքում, երբ Էլեկտրոական էներգիայի ներկրումը կամ արտահանումը սահմանափակ են:

26. Արտահանողը պետք է պայմանագրեր կնքի առնվազն
 Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, հաղորդման
 ցանցի օպերատորի և Չափարկային կենտրոնի հետ: Նշված
 կողմերի հետ պայմանագրեր կնքելու վերջնական ժամկետներ
 սահմանված չեն, որը բերում է անորոշության
 ռիսկայնության ավելացմանը: Իսկ պայմանագրերը սկսում են
 գործել միայն ՅԵԿՅ-ում հաստատվելուց հետո, որը
 ժամկետներն ավելացնում է ևս տասը աշխատանքային օրով:
27. Էլեկտրաէներգետիկական համակարգում ֆինանսական հոսքերը
 տեղի են ունենում բաշխման գործառույթ իրականացնող
 ընկերության միջոցով: Այս հանգամանքն իր մեջ
 պարունակում է էական նշանակություն ունեցող ռիսկեր
 շուկայի մասնակիցների և սպառողների համար, օրինակ՝ երբ
 Էլեկտրաէներգիայի պլանավորված արտադրության ծավալները
 չափահովվեն ինչ-որ պատճառներով: Եթե բաշխման գործառույթ
 իրականացնող ընկերությունը ֆինանսապես կայուն չլինի
 ապա, դա կարող համակարգի փլուզման պատճառ կարող է
 դառնալ, որի վառ օրինակ է «ՅԵՑ» ՓԲԸ ֆինանսական ճգնաժամի
 ժամանակաշրջանը: Յետևաբար, համակարգի տարեկան
 հաշվեկշիռը ուղղակիորեն ռիսկեր կարող է առաջացնել
 բաշխման գործառույթ իրականացնող ընկերության համար:
28. Չնայած Էլեկտրաէներգիայի ստացման Էկոլոգիապես մաքուր
 եղանակին, ցածր ինքնարժեքին և տեղակայման ու
 օգտագործման դյուրինությանը՝ արևային
 Էլեկտրակայանների արտադրած Էլեկտրաէներգիայի ծավալի
 զգալի ավելացումը ՅՅ Էներգետիկ հաշվեկշիռում կարող է
 պարունակել ռիսկեր Էներգետիկ անվտանգության
 համատեքստում: Դա պայմանավորված է նրանով, որ այս կերպ
 արտադրված Էլեկտրաէներգիան ունի մեծ կախվածություն
 եղանակային պայմաններից ինչպես նաև առկա է այն փաստը, որ
 այս կայանները գիշերային ժամերին Էլեկտրաէներգիա չեն
 արտադրում, ուստի այս եղանակը չի կարող համարվել երկրում
 Էլեկտրաէներգիայի ստացման հիմնական աղբյուր, այլ կարող

Ե հանդես գալ որպես համակարգիչն առաջնային օժանդակող միջոց էլ եկտրաէներգիայի արտոդրության համար

29. Բարձր լարման սպառողների համար հզորության կամ պիկային ժամանակահատվածի սահմանված սակագներ չկան: Դրա հետևանքով սպառողները պատասխանատվություն չունեն առանցքային արտադրող կայանների հզորության որոշված սակագնի նկատմամբ: Այժմ գործող գիշերային և ցերեկային սակագները արդյունավետ չեն:

Վերը թվարկվածի հիման վրա առաջարկվում է՝

1. Կատարել փոփոխությունն Յայաստանի Յանրապետության Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի նոյեմբերի 1-ի №79Ա որոշմամբ հաստատված սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկայի Յավելված 2-ի 11-րդ կետով սահմանված շահույթաբերության նորմայի նվազագույն սահմանաչափում: Սահմանաչափին ավելացնել նաև ՅՅ պետական միջնաժամկետ պարտադրության միջին տոկոսադրույքի մեծության սահմանը (հարկումից հետո)՝ 12%-ը գերազանցելու դեպքում:

2. Բաշխման լիցենզավորված գործունեությունն իրականացնող կազմակերպության համար հաշվարկված անհրաժեշտ հասույթի նկատմամբ կիրառել սեզոնային ճշգրտող գործակից, որը կորոշի սակագնի մարժան սպառողական յուրաքանչյուր խմբի համար:

3. Յայ-վրացական Էլեկտրաէներգետիկ ոլորտի փոխարաբերությունների առավել բարձր արդյունավետության ապահովման նպատակով առաջարկվում է ստեղծել համատեղ աշխատանքային խումբ՝ բաղկացած երկու երկրների կողմից լիազորված ոլորտի մասնագետներից, որը կապահովի համագործակցության տեխնիկական, նորմատիվային ինչպես նաև իրավական հիմքերի նախագծեր, վերը նշված ծրագրերի իրականացմանն օժանդակելու նպատակով:

4. Որպես էլ եկտրաէներգետիկական համակարգի հիմնախնդիրներին լուծման ուղղությամբ բազմազանեցնել դրատարտարողական սեփական աղբյուրները, այդ թվում՝ վերականգնվող էներգիայի տեսակարար կշռի չափավոր բարձրացումը երկրի էներգետիկ հաշվեկշռում:
5. Առաջարկվում է տարանջատել բաշխման համակարգը մատակարարման համակարգից և այդ ընկերությունների համար սահմանել տարբերակված կարգավորում, համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:
6. Ապահովել ՀՀ-ում էլեկտրաէներգիայի արտահանումն ու ներմուծումը սահմանող կանոնակարգի պարզեցումը:
7. Էլեկտրաէներգիայի սակագնի մարժայի հաշվարկման մեթոդաբանության մեջ վերանայել թույլատրելի շահույթի հաշվարկման կարգը: Էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից, առավել նպատակահարմար է օգտագործել շահույթի և հասույթի համեմատությունը՝ ակտիվների շահութաբերության նորմի փոխարեն:
8. Էլեկտրաէներգիա արտադրող պետական ընկերությունների համար չհաստատել այն ծախսերը և փոխառությունները, որոնք կապ չունեն այդ կազմակերպությունների առաջնային գործունեության հետ:
9. Արտադրական հզորությունների կառավարման իրավունքը վերապահել էլեկտրաէներգիա արտադրող ընկերություններին, օպերատորի կողմից կառավարվելու փոխարեն: Էլեկտրաէներգիայի պահանջարկը կանխատեսելու համար կիրառել նաև մեր կողմից բացահայտված ՀՀ էներգետիկայի և տնտեսության մյուս ճյուղերի փոխադարձ կապերը և դրանց ամրության աստիճանը, որը հնարավորություն է ընձեռում կանխատեսել էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկը՝ կախված տնտեսության առանձին ճյուղերի սցենարային զարգացումներից: Ինչպես նաև կիրառել մեր կողմից գնահատված՝ էլեկտրաէներգիայի արտադրողական

Ֆուլկոնոսկոպիկալ կապը ՅՆԱ աճից, ՅՆԱ-ի ճեղքի և
Էլեկտրաէներգիայի գերարտադրության կամ
թերարտադրության (ճեղք) միջև կապը: Քանի որ կանխատեսման`
ապագային միտված և իներցիոն մոտեցումներով, ՅՆԱ աճի և
Էլեկտրաէներգետիկայի ոլորտի միջև կապերի գնահատումը
հնարավոր է դարձնում կանխատեսել անհրաժեշտ
ժամանակաշրջանի Էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Օգտագործված գրականություն

Մասնագիտական գրքեր

- 1.Մկրտչյան Թ. Մ. Տնտեսագիտական անվտանգության արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում- 2016, 278 էջ
- 2.Մելքումյան Մ. Ս., Միկրոէկոնոմիկա: Ուսումնական ձեռնարկ/ ՀՊՏՀ Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոն, Ե., Տնտեսագետ, Երևան, 2011, 440 էջ
- 3.Մելքումյան Մ. Ս. , Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում: Ուսումնական ձեռնարկ/ ՀՊՏՀ Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոն, Երևան, 2014, 512 էջ
- 4.Ղուչյան Հ., Ձեռներեցի սեղանի գիրք, Երևան, 1997, 416 էջ
- 5.Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2016, 607 էջ
- 6.Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2015, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2015, 601 էջ
- 7.Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2014, 606 էջ
- 8.Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2013, 598 էջ
- 9.Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2012, 595 էջ
- 10.Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2011, 624 էջ
- 11.Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2010, 608 էջ
- 12.Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2009, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2009, 589 էջ
- 13.Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2008, 589 էջ

14. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2007, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2007, 549 էջ
15. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2006, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2006, 579 էջ
16. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2005, 541 էջ
17. Կիրակոսյան Գ. Ե., Ղուլջյան Յ. Բ., Տիգրանյան Ի. Տ., Տնտեսագիտական բացատրական բառարան, Եր., «Տնտեսագետ» 1999, 142 էջ
18. Կարապետյան Կ. Վ. Տարածաշրջանային համագործակցության և էներգետիկ անվտանգության հիմնախնդիրները հարավային կովկասում. - Եր., ԷդիտՊրինտ, 2008, 185 էջ
19. Կարապետյան Կ. Վ. Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության հեռանկարները, Երևան, 2008, 380 էջ
20. Экономика. Толковый словарь.
М.: "ИНФРАМ", Издательство "Весь Мир". Дж. Блэк. Общая редакция: д.э.н. Осадчая И.М.. 2000, 768 с.
21. Троицкий А. А. Экономика формирования электроэнергетических систем, Энергия, 1981, 320 с.
22. Райзберг Б.А., Лозовский Л.Ш., Стародубцева Е.Б.. Современный экономический словарь. -2-е изд., испр. М.: ИНФРА-М. 1999. 479 с.
23. Жимерин Д. Г. Современные проблемы энергетики, Энергоатомиздат, 1984, 229с.
24. Жимерин Д. Г. Проблемы развития энергетики, Энергия, 1978, 287с.
25. Евдокимова Т.Г. и др. Теория и практика управления ценами, издательский дом «Нева», 2004, 208 с.
26. Дьяков А. Ф. Единая электроэнергетическая система России в период рыночных преобразований, Изд-во МЭИ, 2003, 152с.
27. Гортинский С. М. , Электроэнергетика европейских стран-членов Совета Экономической Взаимопомощи, Энергоиздат, 1981, 168с.
28. Бушуев В. В. [и др.] /Энергетическая безопасность России; РАН. Сиб. отд-ние. -М.: Наука, - ил. - Библиогр.: 1998, 301с.
29. Благодатских В.Г., Богатырев Л.Л., Бушуев В.В., Воропай Н.И. и др. Влияние энергетического фактора на экономическую безопасность регионов

Российской Федерации. - Екатеринбург: Изд-во Уральского университета, 1998, 288с.

30.Александровна Н. А. Структурный анализ электроэнергетических систем: в задачах моделирования и синтеза, Наука, Сибирское отд-ние, 1990, 224с.

31.Supporting business environment reforms: Practical Guideline for Development Agencies, Donor Committee For Enterprise Development, 2008 Edition, 36 pages

Օրենքներ, որոշումներ, հաշվետվություններ, պատճեններ
հայտարարություններ

32.«ԲԷՑ» կողմից էլեկտրական էներգիայի հաղորդման և ինժեներական ծախսերի գործունեությունները իրականացնելու պայմանները, Լինգենգիա N 0006, տրված ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1999թ. հունիսի 18-ի N9 որոշմամբ

33.«Դելոյթ և Տոլզ ԱՊՐ» ՓԲԸ, Ռուսաստան – «Հայաստանում էլեկտրաէներգետիկ համակարգի կարգավորման ոլորտում խորհրդատվական ծառայությունների մատուցման հաշվետվություն Առաջին փուլ», Մոսկվա, 125047

34.«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք

35.«Էրևսթ ընդ Յանգ» ՓԲԸ 2013թ. փետրվարի 28-ին ներկայացված 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար անկախ աուդիտորական եզրակացության ամփոփ Ֆինանսական հաշվետվություն

36.«Էրևսթ ընդ Յանգ» ՓԲԸ 2014թ. փետրվարի 14-ին ներկայացված 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար անկախ աուդիտորական եզրակացության ամփոփ Ֆինանսական հաշվետվություն

37.«ՀԱԷԿ» ՓԲԸ 2013 թ. Ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն

38.«ՀԱԷԿ» ՓԲԸ 2014 թ. Ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություն

- 39.«ՅԱԵԿ» ՓԲԸ 2015 թ. \$ի նախատեսուած սական գործու նե ու թյան հաշվետվող ու թյ ու ն
- 40.«ՅԱԵԿ» ՓԲԸ 2016 թ. \$ի նախատեսուած սական գործու նե ու թյան հաշվետվող ու թյ ու ն
- 41.2012թ. «ՅԵՑ» ՓԲԸ տարեկան հաշվետվող ու թյ ու ն
- 42.2013թ. «ՅԵՑ» ՓԲԸ տարեկան հաշվետվող ու թյ ու ն
- 43.2014թ. «ՅԵՑ» ՓԲԸ տարեկան հաշվետվող ու թյ ու ն
- 44.2015թ. «ՅԵՑ» ՓԲԸ տարեկան հաշվետվող ու թյ ու ն
- 45.2016թ. «ՅԵՑ» ՓԲԸ տարեկան հաշվետվող ու թյ ու ն
- 46.Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի մայիսի 8-ի թիվ 12 որոշում Եվրասիական տնտեսական մի ու թյան Էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձևավորման հայեցակարգը հաստատու ու մասին
- 47.Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 20 որոշում
- 48.Էլեկտրական Էներգիայի (հզոր ու թյան) և բնական գազի ներկրման ու արտահանման գործու նե ու թյան լիցենզավորման կարգը հաստատու ու և մի շարք որոշումներ ու ժը կորցրած ճանաչել ու մասին
- 49.Հայաստանի Հանրապետ ու թյան Հանրային ծառայ ու թյ ու ն ները կարգավորող հանձնաժողովի, 16 սեպտեմբերի 2004 թ.-ի N 109-ն որոշում Էլեկտրաէներգիայի (հզոր ու թյան) առու վաճառքի և ծառայ ու թյ ու ն ների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատու ու մասին
- 50.Հայաստանի Հանրապետ ու թյան հանրային ծառայ ու թյ ու ն ները կարգավորող հանձնաժողովի 2014թ. հուլիսի 1 նիստի որոշում
- 51.Հայաստանի Հանրապետ ու թյան հանրային ծառայ ու թյ ու ն ները կարգավորող հանձնաժողովի 2004թ. գործու նե ու թյան հաշվետվող ու թյ ու ն
- 52.Հայաստանի Հանրապետ ու թյան օրենքը Էներգափնայ ող ու թյան և վերականգնվող Էներգետիկայի մասին, ընդ ու ն վել Է 09.11.2004
- 53.Հայաստանի Հանրապետ ու թյան օրենքը Էներգետիկայի մասին, ընդ ու ն վել Է 07.03.2001
- 54.ՀԾԿՀ 11 հ ու ն լի սի 2012 թվականի N260Ա որոշում

- 55.ՅԾԿՅ 13 դեկտեմբերի 2017 նիստի №542-Ա որոշում 2002 թվականի նոյեմբերի 1-ի №79ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
- 56.ՅԾԿՅ 16. սեպտեմբերի.2005թ. №125Ն որոշում
- 57.ՅԾԿՅ 2 հոկտեմբերի 2013 թ. N 339-Ն որոշում
- 58.ՅԾԿՅ 2016թ. հունիսի 15-ի №166Ա որոշում
- 59.ՅԾԿՅ 2016թ. փետրվարի 10-ի N20Ա որոշում
- 60.ՅԾԿՅ 2017թ. դեկտեմբերի 13-ի 542Ա որոշում
- 61.ՅԾԿՅ 2017թ. մայիսի 17-ի N116-Ն որոշում
- 62.ՅԾԿՅ 2017թ. նոյեմբերի 13-ի 490Ա որոշում
- 63.ՅԾԿՅ 22 ապրիլի 2015թ. №88Ն որոշում
- 64.ՅԾԿՅ 23 հոկտեմբերի 2013թ. №359Ն որոշում
- 65.ՅԾԿՅ 30 ապրիլի 2013 թվականի №145Ա որոշում
66. ՅԾԿՅ 30 նոյեմբերի 2004 թվականի № 154Ա որոշում
- 67.ՅԾԿՅ 31 մայիսի 2015թ. №209Ն որոշում
- 68.ՅԾԿՅ N 149-Ն որոշումը ՀՀ-ից էլեկտրական էներգիայի արտահանման կարգը հաստատելու մասին, 16 նոյեմբերի 2004 թ.
- 69.ՅԾԿՅ N 285-Ն որոշումը էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց միջև կնքված և էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման պայմանագրերի գրանցման կարգը հաստատելու և ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի նոյեմբերի 13-ի n 59 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, 31 հունիսի 2013 թ.
- 70.ՅԾԿՅ N 341-ն որոշումը հիտարածքով էլեկտրական էներգիայի (հզորություն) տարանցիկ փոխադրման կարգը սահմանելու մասին, 30 սեպտեմբերի 2015 թ.
- 71.ՅԾԿՅ N 48-Ն որոշումը էլեկտրաէներգիայի (հզորություն) առուվաճառքի (արտադրող-արտահանող) պայմանագրի և էլեկտրաէներգիայի առուվաճառքի լրացուցիչ (հաշվեկշռող) պայմանագրի օրինակելի ձևերը հաստատելու մասին, 29 ապրիլի 2005 թ.
- 72.ՅԾԿՅ 2006 թվականի գործունեության հաշվետվություն և
- 73.ՅԾԿՅ 2007 թվականի գործունեության հաշվետվություն և

- 74.ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն 2014-2016 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիր
- 75.ՀՀ Էներգետիկայի Հանձնաժողովի Որոշումը սպառողներին առաքվող Էլեկտրական Էներգիայի սակագների մասին ընդ. 11.11.1998թ.
- 76.ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 22-ի «ՀՀ Էներգետիկ բնագավառի կառավարման բարելավման միջոցառումների մասին N 166 որոշում
- 77.ՀՀ Կառավարության 2002թ. փետրվարի 21-ի «ՀՀ Էներգահամակարգի կառավարման բարելավման միջոցառումների մասին» N 152 որոշում
- 78.ՀՀ կառավարության 2017 թ.հունվիսի 27-ի նիստի N 32 արձանագրային որոշում
- 79.ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի N 176-Ն 24 դեկտեմբերի 2004թ. որոշում Հայաստանի Հանրապետության Էլեկտրաէներգետիկական համակարգի հոսսալիության և անվտանգության ապահովման կանոնները հաստատելու մասին
- 80.ՀՀ օրենքը «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-262-Ն ընդ. 2017թ. դեկտեմբերի 26
- 81.Ռ. Դ. Դաշնային օրենք N 35-Փ3 Էլեկտրաէներգետիկայի մասին, ընդունվել է 26.03.2003
- 82.ՌԴ Էներգետիկայի նախարարության № 277 որոշում 30.06.2003
- 83.Տարբերությունների վերլուծություն (GAP) Հայաստանի Էլեկտրաէներգետիկ շուկայի մարտահրավերները և օրենսդրական խոչընդոտները, Երևան, Հունիս 2016
- 84.Տեղեկանք 2015 թվականի ընթացքում Էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների կողմից առաքված Էլեկտրական Էներգիայի (հզորության) վերաբերյալ (ներքին սպառման մասով)
- 85.Տեղեկանք պետական գանձապետական պարտատոմսերի վերաբերյալ առ 31.12.2017

- 86.Տեղեկանք պետական գանձապետական պարտառոմսերի վերաբերյալ առ 31.12.2016
87. Georgian national energy and water supply regulatory commission, Annual Report 2016
- 88.Закон Республики Казахстан от 9 июля 2004 года № 588-II об электроэнергетике
- 89.Закон Республики Молдова об энергетике Nr.1525 от 19.02.1998

Ինտերնետային կայքեր

- 90.Arlis.am Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ
- 91.Armstat.am ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայք
- 92.Cba.am ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայք
- 93.ena.am "Հայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲԸ պաշտոնական կայք
- 94.enterprise-development.org Donor Committee For Enterprise Development- Ձեռնարկատիրոջ անգարգացման դրոշմի կոմիտեի Վեբ-կայք
- 95.Gov.am ՀՀ Կառավարության պաշտոնական կայք
- 96.http://dic.academic.ru/ электронный словарь “Академик”
- 97.http://eec.eaeunion.org/ Сайт Евразийского экономического союза
- 98.http://gnerc.org/ Georgian national energy and water supply regulatory commission
- 99.http://newinspire.ru/
- 100.http://so-ups.ru/ «Системный оператор Единой энергетической системы» (АО «СО ЕЭС»)
- 101.http://www.bibliotekar.ru электронная библиотека нехудожественной литературы по русской и мировой истории, искусству, культуре, прикладным наукам
- 102.http://www.un.org/ ՄԱԿ պաշտոնական կայք
- 103.http://www.unclaw.com/chin/teaching/antitrust/herfindahl.htm Herfindahl-Hirschman Index Calculator
- 104.https://ec.europa.eu/- The Directorate-General for Energy
- 105.https://utmagazine.ru/ UT Overseas Inc.
- 106.Minenergy.am Հայաստանի Հանրապետության Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության պաշտոնական կայք
- 107.minfin.am Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կայք

- 108.Parliament.am ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք
- 109.R2e2.am Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և
էներգախնայողության հիմնադրամի պաշտոնական կայք
- 110.Raztes.am «ՀրազՋԷԿ» ԲԲԸ պաշտոնական կայք
- 111.taxservice.am ՀՀ ԿԱ Պետական Եկամուտների Կոմիտե պաշտոնական
կայք
- 112.usaid.gov ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության
պաշտոնական կայք